« ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ »
ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 17

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ

Բ. ՀԱՏՈՐ

Գ. Տպագրութիւն

Printed in France

ՓԱՐԻԶ
1950

891.99-13 | 28.62 Կ.

Մ-91 | Սրուանձտեանց, Գ.

Թորոս Աղբար: Հ. Բ.

1/XI	455
7/VI	251

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ

« ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ »
ՄԱՏԵՆԱՇԱՐ ԹԻՒ 17

ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

891.99
Ս-91
A ‾II‾ 30358
ՍՏԱՑՎԱԾ Է 1961 Թ.

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ

Բ. ՀԱՏՈՐ

Գ. Տպագրութիւն

Printed in France

ՓԱՐԻԶ
1950

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

IMPRIMERIE ARAXES - 46, Rue Richer, Paris 9

Ի.

ԽԵԼՔՆ ՈՒ ԲԱԽՏ

Խելքն ու բախտը խօսքով կռիւի բռնուեր էին։ Բախտը կ՚ըսէր.

— Մարդիկ ինձմով մարդ են։

Խելքը կ՚ըսէր.

— Ինձմով։

Թէպէտ դատաւորի չգնացին, բայց իրենց մէջ պայման դրին որ մէկը մէկալի ըրածին չխառնուի։ Իրենց այս պայմանը տեսնուեցաւ գիւղացիի մը վրայ։

Գիւղացին ըստ իւր սովորութեան առաւ արօրն ու գնաց արտը վարելու. հարօրն ասըռաւ ակօսի մէջ, մարդը տեսաւ որ հօ՛ դուգում մի կայ հողի մէջ, վերուց որ մէջը լիքն ոսկի։ Է՛ ինչ անեմ ինչ չանեմ. մէյ մը կը մտածէ որ շատ մեծ բաներ կրնամ ընել, շատ մեծ մարդ կրնամ լինիլ. մէյ մ՚ալ կը մտածէ որ հապա թէ որ գողերն իմանան, գան գողնալու, ես դիմանամ, գլխս սպանեն...։ Այս շուարման մէջ կը տեսնայ որ իրենց երկրի դատաւորը ճանապարհէն կ՚անցնի, կ՚որոշէ թէ ոսկիներ տամ դատաւորին, եւ ես հանգիստ իմ գործիս նայիմ։ Կը վազէ կանչէ դատաւորը ու կը բերէ իր արտին մէջ։

Մարդուն խելքը գլուխը կու գայ, ոսկին կը ծածկէ ու կ՚ըսէ.

— Աղա՛յ, դու դատաւոր մարդ ես, գիտուն ես, ինձ ասա, իմ այս երկու եզներէն ո՞ր մէկն է աղէկ:

Դատաւորը նեղսրտելով կը թողու կ'երթայ: Խելքն ալ կը հեռանայ, ու մարդը նորէն կը շուարի թէ ինչո՞ւ ոսկիք չ'առի, ի՞նչ պիտի ընեմ, ո՞ւր պիտի պահեմ: Մինչեւ իրիկուան անգործ կը մնայ ու այս բանի վրայ կը մտածէ, կը տեսնայ որ դատաւորը գեղէն դարձաւ կ'երթայ, կը վազէ առջեւ, կ'աղաչէ որ մէկ անգամ էլ գայ իր արտը իր լուծքի խեչ ու երթայ: Դատաւոր կը զգայ որ բան մը կայ այստեղ, կու գայ: Մարդուն խելքը գլուխ կու գայ, եւ դատաւորին կ'ըսէ.

— Կ'աղաչեմ, չ'առնուիս. այս իմ արտին նայէ, երէկուան վարա՞ծս շատ է թէ այս օրուան. դուն գիտուն մարդ ես:

Դատաւոր ծռու տեղ կը դնէ մարդը ու ծիծաղելով կը հեռանայ: Խելքն ալ կը հեռանայ ու արտի մէկ կողմն կը նստի: Մարդն իր գլուխը կը ծեծէ, ու կ'ըսէ.

— Ջանըմ ինչո՞ւ չ'առի. հա՛ հա, ես ո՞ւր պահեմ. ու ի՞նչպէս պահեմ:

Կը բերէ զուգում ոսկին կը դնէ հացի մէզարի մէջ կը շալկէ, կու գայ տունը, կը կանչէ.

— Կնիկ, կնիկ, զեզներ կապէ, խոտ տուր, հարօրն առ ներս, ես երթամ դատաւորին գամ:

Կնիկ կը նայի որ մէզար էրկան շալակն է, ու մէջը բան մը կայ, ու չ'դներ վար. կը մտածէ որ նոր բան մը պիտի եղնի. ի՛նչ ընէ որ իմանայ: Կը պատասխանէ էրկան թէ՝

— Եզներ կապել իմ ի՛նչ գործն է, ես ոչխարն ու կովեր ներս կ'առնեմ, կը կթեմ, դու քո եզներ կապէ, ուր կ'երթաս գնա:

Մարդը մէզար կը դնէ դուռը, եզներ ներս կ'ընէ, եւ մինչեւ կը կապէ կ'ելնէ, կնիկն մէզար բացեր, զում-

գումով ոսկիներն առեր, ու անոր չափ քար մի պլլեր մէջարը, դրեր էր տեղը: Մարդը չուտմաչուտ կ'առնէ մէջար կ'երթայ կը դնէ դատաւորի առջեւ:

— Ա՛ռ աս, քեզ ընծայ եմ բերեր, կ'ըսէ:

Կը բանան որ քար մ'է, մարդն ալ կը զարմանայ, ու դատաւոր կը նեղսրտի, բայց կը մտածէ թէ այս մարդուն մօտ խօսք մի, բան մի պիտի լինի:

Կը դնէ բանատուն, ու երկու մարդ կը դնէ դուռը, որ նային թէ ի՞նչ կ'ընէ ու ի՞նչ կ'ըսէ, իրեն իմաց տան: Մարդն ինքիրենքին մտքով կ'ըսէ, ու ձեռքերով կ'ընէ.— Գուզումն այսքան էր, բերանը այսքան, փորն այսքա՛ն, տակն այսքան, ու մէջի ոսկին այսքան: Նայողներ կը պատմեն դատաւորին թէ երկու ձեռքով բան կը չափէ ու խօսք չըներ:

— Կանչեցէ՛ք, կ'ըսէ դատաւոր:

Մարդ կը բերեն, եւ կը հարցու թէ՝ .

—Ի՞նչ բան էր ձեռներովդ կը չափէիր:

Մարդու խելքը կու գայ գլուխը եւ պատասխան կու տայ թէ՝

— Ես կը չափէի քո գլուխն այսքան է, քո վիզն այսքան, քո փորն այսքան, քո մօրուսն այսքան, ու կ'ըսէի թէ դո՞ւ ես մեծ թէ մեր մօրուքով էծը:

Սաստիկ կը բարկանայ դատաւոր ու հրաման կ'ընէ որ տանին կախեն այս մարդը: Կը տանին որ ճօպանը ճիտը պիտի ձգեն, կ'ըսէ.

—Ջիս մի՛ խեղդէք, ես կ'երթամ բաստին կը խօսիմ:

Դատաւոր հրաման կ'ընէ որ ճիշդն ըսէ թէ ի՞նչ էր կը չափէր բանատան մէջը: Մարդը կ'ըսէ.

—Ես գէս ու գէն չեմ գիտեր, աւտըցէք թէ որ ճօպան իմ ճրտէն չհանէիք, ես պիտի խեղդուէի. ահա

ձեզի ճշմարիտն:

Ասոր վրայ կը ծիծաղի դատաւորն ու կ'ազատէ մարդը: Կու դայ տունը. իր բախտն ու խելքը մեղայ կու տան իրարու, կը միաբանին ու կ'ըսեն.

— Բախտը Խելքով, Խելքն ալ Բախտով կրնան մարդը մարդ ընել:

●

ԻԱ.

ԴԸԺԻԿՈՆ

Դըժիկոն աղքատ ու անբախտ մարդ էր, իր բոլոր ունեցածն էր երկու այծ եւ մէկ կով, կովն ալ ըռ-ձըկուն (վեր վեր ցատկող): Դըժիկոնի կինը անզգամ էր, շատ նեղութիւն կու տար էրկան, կ'ըսէր.

— Գնա հեռի երկիրները դատում ըրէ, վաստակ ըրէ, տուն տեղ շինէ, հագուստ կապուստ բեր ինծի, եզներ ու մաքիներ գնէ, ձի գնէ, եւայլն:

Դըժիկոն օր մի ելաւ իր կովն առաւ ու անթրոցը ձեռք բռնեց, տնէն ինկաւ դուրս.

— Առնեմ գլուխս կորսուիմ, կ'ըսէր, այս անզգամ կնկան ձեռքէն:

Կնիկն ալ այնպէս կ'ուզէր: Դըժիկոն կովը կթելով. ուտելով, ու յոգնած ատեն ալ հեծնելով, անթրոցը վեր թեւին, մոլորուած կ'երթար, եւ վախէն ջրի պէս կ'ե-րերար, խեղճը ի՞նչ ընէր, աղէկ էր չար մարդոց, չար գազանի բաժին լինէր, ոչ թէ անզգամ կնկան ձեռքն ինկնէր:

Խոտով տեղերը կովը կ'արածար, ինքն ալ կը քնա-

նար, ճանճեր կը խայթէին զինքն. անիծեց կինը, եւ ուժով մը իր մէկ ափին մէջ բռնեց ճանճերը, ճմռեց, ու համրեց որ եօթն ճանճ մէկուց սպաներ էր: Քաջալերութիւն եկաւ վրան, ելաւ հեծաւ կովն, եւ իրիկուն գեղի մը մօտերը իջաւ, տարվիչի մը թուղթ մի գրել տուաւ թէ՝ «Դրժիկոնն եմ ես, մէկ ձեռքով եօթն հոգի սպանած եմ», ու այս թուղթը կպցեց կովի ճակատին՝ կոտոշներուն մէջ:

Գնաց հեռացաւ չէներէն, հասաւ կանանչ դաշտ մի, ու դաշտի գլուխը կը տեսնուէր քօշկ ու սարայ մի. պառկեցաւ դաշտին մէջ կը քնանար: Եօթն եղբայր կը բնակէին այդ քօշկը, եւ մէկ եղբայրը վազեց տեսնալու թէ ո՞վ է այն մարդ որ համարձակեր եկեր մտեր իրենց հողը: Նախ կովի ճակտին վրայի գիրը կարդաց, եւ սկսաւ մտածել թէ այս մարդը մէկ ձեռքով եօթն հոգի սպաներ է. եթէ այդքան կտրիճ չ'ըլնէր, միթէ կըրնա՞ր այստեղ հասնիլ, կ'իշխէ՞ր այսպէս անհոգ քնանալ. ի՛նչ սիրտ, ի՛նչ քաջութիւն, որ ոչ զէնք ունի, ոչ ընկեր, եւ ոչ ձի, այո՛, այս մարդ չափազանց կտրիճ մէկն է:

Կը դառնայ իր եղբայրներուն կը պատմէ իր տեսած ու խորհածը, ու ամէնքն ալ կ'ելնեն կու գան մեծարելու եւ իրենց տունը հրաւիրելու Դրժիկոնը: Կովն ասոնց գալէն կը խրտչի, ոտքի կ'ելնէ եւ կը բառաչէ: Այս ձայնէն վեր կը թռի Դրժիկոն, տեսնալով եօթն հոգի իր առջեւ, անթրոց կը վերցու՝ դողալով հնուն կը կենայ: Ասոնք կը կարծեն թէ բարկացաւ իրենց վըրայ, թէ կատաղութենէն կը դողայ, թէ՝ մէկ ձեռքով եօթն եղբայրն ալ մէկանց պիտի սպանէ: Կ'աղաչեն զինքն, կը հասկցունեն թէ ի՞նչ բանի համար եկած են, թէ՝ իրենք եօթն եղբարք մեծ անուն ունին կտրճու-

թեան, եթէ ինքն ալ անոնց մեծ եղբայր լինի, շատ եր-ջանիկ պիտի լինին, թէ՝ իրենց տուն տեղը եւ զիրենք անոր կամաց կը յանձնեն։

Դողալէ կը դադրի Դըժիկոն։

— Թող ձեր աստծի պէս լինի, կ՚ըսէ։

Կը տանին տունը, վերին գլուխ կը նստեցնեն, ամէն բարութենէն կը դնեն իր առջեւ, ու իրենք ձեռները խաչ կապած ծառայութիւն կ՚ընեն։ Դըժիկոն խոր մտած-մունքի մէջ է, թէ այս փորձանքէն ի՞նչպէս ելնէ, եւ թէ՝ կը վախնայ զինքը չսպանեն։ Ասոնք ալ կը կար-ծեն թէ՝ ի՜նչ խորունկ խելացի ու մեծ հոգի մարդ է որ իրենց երեսը չ՚նայիր, չ՚խօսիր. կը հազան, կը հազ-մզան (յիշեցնելու համար նշան), եւ Դըժիկոն հրաման կու տայ որ նստին։ Հանգստանալէն յետոյ կը հարցնեն.

— Աղա՛, քո ձին, քո զէնք, քո ծառաներ ո՞ւր ես թողեր, հրամանք արա՛ երթանք բերենք։

Դըժիկոն կ՚ըսէ.

— Զէնք ու ձի վախկոտ մարդոց ապաւէն է, ես գործածած չեմ երբեք, պէտք չէ եղած, եթէ մեծ կռուի բռնուիմ, այն ատեն ձի եւ զէնք կը գործածեմ, իսկ ծառայի երբեք պէտք չունիմ, աշխարհ իմ ծառաներն են, դուք տեսաք որ ես մէկ փայտ եւ մէկ կով ունենա-լով ապահով մինչեւ այստեղ հասեր եմ, ես Դըժիկոնն եմ, մէկ ափով եօթն հոգի կը սպանեմ։

Օրէ օր իրենց մեծարանք ու հիմացումն կ՚աւելցնեն Դըժիկոնին վրայ, եւ իրենց-մէկ հատիկ խուռնի խօրօ-տիկ քոյրն ալ կը կամենան տալ անոր։ Դըժիկոն գիտէ որ ինքն անարժան է անոր, բայց բռնուեր է.

— Է՜հ, կ՚ըսէ, ձեր խաթեր համար կ՚առնեմ։

Կը բերեն թանկագին հագուստներ կը հագցնեն Դըժիկոնին, շքեղ հարսնիք կ՚ընեն, եւ այս ձայնը կը տարածուի չորս կողմը։ Չորս փաշաններ այդ աղջիկ

ուզեր էին, եղբայրներ չէին տուած, այդ չորս փաշաներն ալ զօրքով եկան կուիւ վեր եօթն եղբարց:

Գըժիկոն աղայն իր սարսափից կծկուեր նստեր է, կ'ուզէ որ գետին պատռուի, մէջն անցնի. փախչելու ճար կը մտածէ, ճար չ'կայ: Եւ ահա այս պահուս եօթն եղբարք ներս կը մտնեն, խոնարհութիւն կ'ընեն, եղածն իրեն իմաց կու տան ու կ'ըսեն.

— Քո հրամանն ի՞նչ է, կուլի կ'ընե՞ս թէ քո ծառաներդ երթանք: Կը տեսնեն որ Գըժիկոնին ակռաներ կը չըխկչըխկան, իր սիրտի վախուցն է, բայց անոնք կը կարծեն թէ արիւնը կ'եռայ, ու եղեռն պէս՝ այդքան կատաղութեամբ ամէնքը պիտի սատկեցնէ: Ուստի կ'ըսեն.

— Աղա՛յ, թէ կ'ուզես մենք երթանք կռուենք. եթէ անոնք զօռ եղան, քեզ մարդ կը ղրկենք, եկուր:

— Շատ աղէկ, կ'ըսէ:

Կ'երթան, կռիւ կը սկսին:

Եօթն եղբարց անունն ելած էր ու ահն ինկած էր թշնամեաց վրայ, հիմայ ալ որ գիտեն թէ փեսայ մի ալ ենկեր իրենց որ մէկ ձեռքով եօթն մարդ կը սպանէ, աւելի կը վախնան: Բայց ի վերջոյ կը զօրանան եւ եօթն եղբարք կը սկսին քիչ մը տկարանալ: Մէկ եղբայրը կը ղրկեն Գըժիկոնին թէ՝ Հասիր, նեղ մնացինք, կրակոտ ձի մը ու ընտիր զէնքեր պատրաստ են:

Գըժիկոն ի՞նչ հող տայ իր գլխին: Վերջապէս որոշեց որ երթայ կռիւ, եւ զինքը ձգէ սուրերու բերանը, մեռնի ազատուի խայտառակութենէն:

Ձին իմացաւ որ իր հեծնողն խաշիմ անվարժ է, առաւ գլուխն ու թռաւ, Գըժիկոն չ'կրնար զսպել, բայց տեսնողներ գիտեն թէ՝ քաջութենէն կը վազցնէ ձին որ հասնի սատկեցնէ թշնամիները: Ձին անցաւ թշնամեաց

մէջը, թշնամիք գիրար կը կոտորեն թէ՝ ո՞վ առաջ դէմ կրնայ կենալ: Դըժիկոնի հոգին մնացեր կորեկի մը չափ, կը պատահի ժայռի մը, կը պլլուի անոր ճիւղերուն, ձին տակէն կը փախչի, դու մի՛ ըսեր ծառը փուտ էր, թափէն ծառը քօքահան կը լինի, այլեւս թշնամեաց վրայ հոգի չ՚մնար, գիրար կոտորելով կը փախչին:

—Ը՛ռուսը, կ՚ըսեն, ահագին ծառը քօքահան ըրաւ, եւ անով զմեզ պիտի ջախջախէ:

Եօթն եղբայրներ կը վազեն կը գրկեն իրենց գիւղացին փեսայն, եւ անոր ոտներուն տակ կ՚յնան:

— Ի՞նչ քաջութիւն, ի՞նչ մեծ յաղթութիւն, կ՚աղաղակեն, եւ մեծ փառօք կը վերցնեն տունը կը բերեն:

Կուիւ ընողները խորհուրդ կ՚ընեն թէ՝ ի՞նչ ընենք որ Դըժիկոն մեզմէ վրէժ չ՚հանէ: Հազարական հատ գառնով մաքի, տասնական հատ մատակ ձի քուռակներ ետեւէն, ու չատ այլ եւ այլ ընծաներ կ՚առնեն դան Դըժիկոնին, եւ անոր հպատակութիւն կը խոստանան:

ԻԲ.

ԹԻՖԼԻՍՈՒ ՏՈՒՆՆԵԱ–ԳՈՒՋԱԼԻՆ

Ժամանակաւ Բաղդադցի վաճառական մը անհատնում վարիէթ (հարստութիւն) դիզեր էր, կին մը եւ տղայ մը ունէր: Վասիէթ (կտակ) ըրաւ իր տղային թէ՝

— Օղո՛ւլ, տեսնաս որ իմ ունեցածներս թագաւորները չունին, քեզի կը թողում, իմ գործս չարունակէ եւ ունեցածս վայելէ. միայն թէ Թիֆլիս չ՚երթաս:

Կնկան ալ իր ունեւորութեան սըրը (գաղտնիքը) կու յանձնէ, ու՝

— Թէ որ տղաս աղքատանայ, այն ժամանակ սլուը տղայիս յայտնէ, կ՚ըսէ:

Հայրը կու մեռնի: Տղան հօրը գործ կը սկսի, քասուն բեռ ապրանք կու կապէ, կու բեռցնէ կ՚երթայ Արզրում, խան մը կ՚իջնայ, կու տեսնայ որ օտային մէջը երկու փարիշան մարդ կայ. կու կանչէ կու հարցնէ թէ՝ տարտերնիդ ի՞նչ է: Անոնք կ՚ըսեն թէ՝ ըսելու բան չէ: Բայց վաճառականի սիրտը այնչափ կու ցաւի, որ կ՚ըսէ.

— Աղաներ, ըսէք, իմ բոլոր ունեցածս ձեզ օղուրը տի խարջեմ, ու ձեր տարտին դարման տի անեմ:

Վերջապէս կ՚ըսեն.

— Աղայ, քըշքի րաստ չի գայինը՞ քեզ, դուն ալ մեզի պէս տի ըլլիս. մենք քեզի պէս բազիրկան էանք, գնացանք Թիֆլիս, լսեցանք որ հոն Թագաւորին աղջիկ մը կայ, որ Տունեա Գուզալի կ՚ըսեն, ուզեցանք տեսնել, ըսին թէ՝ քառսուն լիրայ է մէկ անգամ՝ ճամին (ապաըսին) ետեւէն տեսնելը. տուինք քառսուն լիրան, տեսանք ու ա՛լ ետ չի կեցանք, մինչեւ որ սաքսան բեռ մասանք ու ա՛լ ոչ աղջիկը մեզի երեւցաւ, ոչ մեր լերնիս հատաւ, ա՛լ ոչ աղջիկը մեզի երեւցաւ, ոչ մեր ձեռքն ալ բան մնաց.մարդ մը մեր երեսը չը նայիր:

Բաղդադցին հանեց քանի՛մ լիրայ տուաւ ասոնց, իր բեռները բեռցուց, չիտակ գնաց Թիֆլիս, տուաւ քառսուն լիրան, Տինեա Գուզալի տեսոյն, ու ա՛լ ետ չ՚կեցաւ, մինչեւ ձեռք եղած մալն ու ստակը հատցուց: Դարձաւ մօր մօտ, գլխէն անցածը պատմեց, լացաւ, աղաչեց մօրը թէ՝

— Հօրս սըռտունը բան մը կայ նէ՝ դուրս հան, մեր ապրուստն ընենք, մեր նամուսը պահենք:

Մայրը տուաւ տղային պարապ քեսայ մը (քսակ), ու ըսաւ.

— Ասօր քառսուն փարայ դիր ատոր մէջը, վաղ

պիտի տեսնաս որ քառսուն լիրայ է եղեր․ երեք տարի՝ փարան լիրայ կուլլի, ետեւ լիրայ մէջը դնես՝ փարայ կուլլի, ու սէնկ երեք տարու սըրը կու փոխուի։

— Աս բա՛րով բան է, ըսաւ տղան, ասով բարով կ'ապրիմ ես։

Շիտակ կ'երթայ Թիֆլիս, ամմէն իրիկուն Տունեա Գուզալին տես կու տայ քառսուն ոսկի, ու սատկը չ'հասնիր

Աղջկան զարմանք կը բռնի, իրիկուն մը աս տղան հացկերոյթի կը ձէնէ (կանչել, հրաւիրել), սիրտը կ'ու-սայ թէ՝

— Ես քեզի տի առնեմ թէ որ ինծի ըսես քո վար-խաթի սըրը։

Ջահիլ տղաներ ե՞րբ չեն խաբուած կանանց ազգէն։ Մարդն իր սըրը կը յայտնի, քէսան կը ցուցնէ։ Տունեա Գուզալին դեղով գինի կը խմցնէ տղային, քէսան ծո-ցէն կու հանէ, մէկալ օր տղան իր տնէն կը վռնտէ։

Տղան կը դառնայ մօր քով, ոտքը կ'իյնայ, թօքա՛ կ'ընէ (մեղայի կու գայ) որ մէյ մըն ալ Թիֆլիս չեր-թայ, դրացի բարեկամ մէջ կը ձգէ։ Վերջապէս մօր սիրտ է, չ'դիմանար, կ'երթայ սնտուկէն քուլահ մը (գտակ) կը բերէ, կ'ըսէ․

— Աս քուլահի մարիֆաթն այն է որ երբ գլուխդ դնես՝ դու կը տեսնես ուրիշները, բայց ուրիշներ քեզի չեն տեսնար։

Տղայի ուզած բանն է եղեր։ Քուլահը դափմիշ ը-նելուն պէս, շիտակ Թիֆլիս․ ո՞ւր ես, էկայ։ Կը մտնայ Տունեա Գուզալի տունը, ուզած ատեն ուզածին չափ սէյր կ'ընէ։ Ատոնք կ'իմանան որ մէկը կայ տանը մէջը, բայց չեն տեսնար․ ի՛նչ հնարք կ'ընեն չըլլիր։

Օր մը աղջկան միտքը կու գայ աս տղան, անունը

կու կանչէ, կու ղերենայ (կ՚աղերսէ) թէ՝

— Երեւցիր ինծի, ես քեզի պիտի առնեմ:

Տղան քուլահը գլխէն հանեց, երեւցաւ: Աղջիկ հազար կտոր ըլլլով, նազանքներ ընելով ըսաւ.

— Ա՛յ էֆէնտիմ, քու սիրովդ ես վառուեր էի, գնացած օրէդ ի վեր քու անունը կու կանչէի, ես քուկդ էի, ու քուկինդ իմ, քու սիրդ ըսէ ինծի նայիմ:

Բաղդադցին Տիւնեա Գուզալին քաղցր խօսքերէն խաբուելով, պատմեց քուլահին մարիֆաթը: Հաց ու բարին քաշեցին, դեղով գինին խմցուց մարդուն, քուլահն ձեռքէն առին, ու մէկալ օր անպատիւ կերպով տունէն դուրս ըրին:

Տղան մուրալով դարձաւ Բաղդադը, երես չունէր մօր քով երթալու:

Տղան՝ Բաղդադու մայրերը լալով արցունքով աղաչեց, գնացին իր մայրը ղանմիշ ըրին, ձեռք պագնել տուին: Տղան երդուընցաւ թէ՝

— Տարածս բաները ետ պիտի բերեմ, թէ որ հօրս սրուերէն սրու մ՚ալ տաս ինծի:

Մայրն ալ երդուընցաւ թէ՝

— Սօն (վերջին) սրուն է մնացեր, թէ որ աս ալ ձեռքէ հանես, կը մնանք դուները անօթի ծարաւ:

Եւ բերաւ տուաւ աղային դուդուկ մը, ու ըսաւ.

— Փչէ՛:

Թանի՛ փչեց դուդուկը, լեռն ու ձորը սաքար կտրեցաւ (զօրքով լցաւ): Մայրն ըսաւ.

—Դուդուկի վարի կողմէն փչէ:

Փչեց, եւ բոլորն ալ անտես եղան:

Տղան ըսաւ մօրը.

— Հարսա՛ (մայր իմ), իզնովդ (հրամանաւդ) երթամ ծեծ ընեմ ու եղածներ առնեմ գամ:

Ըսել ու գնալը մէկ՚մ ըրաւ, հասաւ Թիֆլիս, քաղքին դէմը բարձր տեղ մը նստաւ, դուդուկը չալեց, այնքան ասքար լցուեցաւ որ գետնի վրայ ա՛լ տեղը չմնաց: Քաղաքը սարսափի մէջ ինկաւ, Թագաւորի կողմէն մարդ գնաց հարցնելու թէ ի՛նչ է իրենց ուզածը: Տղան պատասխան տուաւ.

— Ծեծ կ՚ուզեմ, ծե՛ծ. դուք ինծի ի՛նչ զանն արէք:

Ճանչցան թէ Բաղդադցի տղան է: Թագաւոր կանչեց իր աղջիկն, ըսաւ.

— Այս մեծ չարիք քու երեսէն է. գնա՛ տղանը տես, այս կրակին առջեւն առ, չէ՛ նէ՝ ես գիտեմ քեզի ըսելիքս:

Տունեա Գուզալին մէկը կը խրկէ տղային թէ՝ իրեն քով տի գամ, իր ուզած ժամն երթանք պսակուինք, ապա թէ մեր տունը դառնանք, որ հաւատայ, բայց պէտք է իր ասքարը ցրուէ որ իմ երեսը չի տեսնան:

Խաբրաբերի ետեւէն աղջիկն ալ կ՚երեւայ, տղան դուդուկը վարի կողմէն կը չալէ, խայիր կ՚ըլլին: Աղջիկը քով կը հասնի, շատ կարօտ ու փափաք ցոյց կու տայ, Թագաւոր հօրէն ալ գիր բերած էր որ կամք տուեր էր զինքը փեսայ ընելու: Տղան կը պատմէ աղջկան իր դուդուկի մարիֆաթը, բայց ա՛լ ձեռքէ չ՚հաներ: Աղջիկ կ՚ըսէ.

— Դէ՛, գիր սնտուկի մէջը մօհրէ, թող տանի՛ն տունը. դուդուկով ժամ չեն երթար, մեղք է, պսակուինք, դառնանք, մօհուրդ նայէ, դուդուկդ հան:

Տղան կը համոզուի, ու երբոր ժամին մօտ կը հասնին, աղջիկ կ՚ըսէ.

— Ա՛յ, հապա մոռցայ, հօրս ու մօրս ձեռք պաղնեմ, գամ, պսակուինք:

Տղան կը հաւատայ: Աղջիկ տունը կը մտնայ, սըն-

տուկը կտրել կու տայ, դուդուկը կը վերցնէ, եւ մարդ կը ղրկէ, տղայն անարգելով քաղքէն կը վռնտեն: Տղան կը մտածէ թէ երթայ ո՞ւր. ոչ ումուտ մնաց մօր, ոչ երեսատեղ մնաց իր քաղքցւոց առջեւ: Կ՚առնէ իր գլուխ կ՚երթայ ծովերը, կ՚ըսէ.

— Երթամ իյնամ աշխարհին ծայրերը, հասնիմ Ամերիկայ, ուր ինծի ճանչցող մը չ՚կայ:

Վաբօռ կը նստի, կ՚անցնի Ովկիանոսին վրայ, ֆուռթունայէն փառչալամիշ կուլլի վաբօռը, տղան տախտակի մը կառչով կ՚ելնէ ադայ մը (կղզի), անօթի ծարաւ հոգին կ՚ելնէ, ադային ծառերու պտուղներով կ՚ապրի խել մը ժամանակ:

Օր մը կու տեսնէ խնձորի երկու ծառ, որ ոչ տեսած էր, ոչ լսած. կու նայի, կը հիանայ, ու կ՚ըսէ.

— Պու նէ՞ հիքմէթ, աս ի՞նչ աննման ծառեր, գեղեցիկ աչաց տեսանելոյ, եւ հիանալի պտուղներ հաճոյ առ ի ուտելոյ:

Մէկ ծառին խնձորը մարդու մը գլխոյ չափ էր. մէկալ ծառինը՝ հասարակ խնձորի չափ: Կու վերցնէ ան մեծ խնձորէն. հատ մը կ՚ուտէ, ուտելուն պէս էշ կուլլի, պոչով, երկան ականջով: Անբան չորքոտանին խել մը ժամանակ կ՚արածվի ադ տեղերը. միայն գիտէր թէ ինքն մարդ էր ու էշ եղեր էր:

Օր մը կու հասնի արածելով ադ ծառերուն տակ, եւ ան պզտիկ խնձորէն գետին թափուածէն կ՚ուտէ, ուտելուն պէս կու դառնայ կուլլի առջի մարդ: Կու մտմտայ որ աս խնձորներ իր բանին շատ աղէկ կու գայ: Ադ օրեր գամի մը (նաւ) կու տեսնայ, կու բոռայ կու կանչէ, գամին մօտ կու գայ ադային, աս մարդ երկու կերպ խնձորէն ալ կ՚առնէ հետ, կու մտնայ գամին: Կու հարցնեն թէ ո՞ւր կ՚երթաս: Կ՚ըսէ՝ Թիֆլիս:

A П/30358
28624
ՀԱՅԿ. ... ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ ... ԳՐԱԴԱՐԱՆ

Կու խղճան վրան, ձեռք մը հին լաթ կու հագցունեն, ու առանց նաւլունի կու բերեն: Կ'երթայ Թիֆլիս, երկու մանր խնձոր կու պահէ, մեծերը չուկան կու դնէ ծախէ. մէկ խնձորի գինը տասը լիրայ: Ամէն մարդ կու գայ կու նայի, ամէն մարդ կու զարմանայ ու ադոնց վրայ կու խօսի: Թագաւորին աղջիկը լսելով՝ բերել կու տայ, կու հաւնի, կու հանէ քսան ոսկին կու տայ:

Մեր մարդ կու դնէ ձեռք մի Տօքթօրի զգեստ, քիչ մ'ալ գեղ ու մեղ, խանութ մը կու բանայ, անունն ալ կու դնէ Տօքթօր Բարապոպո: Տունեա Գուզալին կու ձէնէ իր բարեկամները զիաֆէթի, ու հացէն յետոյ կու բաժնէ ադ երկու խնձոր: Բառսուն հոգի էին, քառսունն ալ ուտելուն պէս էշ եղան ու բաղչան էլան զռալով ու արածելով:

Թագաւորն իր իշխաններով, քաղաքն իր մեծով պզտիկով իմացան աս բանը, էկան ու իրենց աչքով տեսան: Տունեա Գուզալին կը ճանչցուէր, էշութեան մէջն ալ ըուրնաիկ էշ մ'էր եղած: Բժիշկ չմնաց եկան, գացին, ճար մը չ'գտան: Թագաւորին ըսին որ Ամերիկացի բժիշկ մը մնաց, Բարապոպո անուն, կ'ուզես ան ալ կանչենք:

— Կանչեցէ՛ք, ըսաւ:

Անոնք կանչելու երթան:

Անդին կարգաւոր, դաւրիչ, կարդացող, Թուղթարող, Թիզ չափող, աստղի նայող, բաղլայ ձգող, Ջրի թասի նայողը, ծեր, պառաւ լեցուեր են, ու զարմանք բաներ գիրենք, բան մը չեն հասկնար, ճար մը չեն կրնար ընել, վերջապէս ամէնքը մէկ բերան ըսին որ, Աստուծոյ պատուհաս էր, Տունեա Գուզալին իր չարութեան համար պատժուեր էր:

Այս պահուս եկաւ Տօքթօր Քարապօղը, խօսք տը-ւաւ Թագաւորին թէ՝

— Ես կրնամ ասոնք մարդ ընել նորէն, բայց եր-կու պայման ունիմ. քո աղջիկդ ինծի կնութեան տաս, եւ ինչ որ ուզեմ ինծի տաս:

— Կու տամ, կ՚ըսէ Թագաւորն:

Պայմանագիրը կու գրեն, Թագաւորն ու տասներ-կուքը կու մօհրեն: Թուղթն կը դնէ ծոցն ու կ՚ըսէ.

— Առաջին անգամ ան երկու բազիրկանին ոչքւէն բեռը կ՚ուզեմ:

Կու բերեն: Կ՚ընէ որ զրկէ: — Չէ՛, կ՚ըսեն, աղէկ-ցուր, յապայ:

—Աղէ՞նկ, հա՛, է, բարով, բարով. բերէք, կ՚ըսէ Բաղդադցիին քառսուն բեռը, անոր քէլանը, ան քէսա-յէն էլած ասքան տարուան օրական քառսուն ոսկին, բերէք քուլահը, բերէք դուդուկը:

Ասոնց ամէնն ալ կը բերեն, զարմանք կը յայտնեն թէ աս մարդ ի՞նչպէս գիտէ ասոնք, ու կ՚աղաչեն որ քէսայի ոսկիները իրենց բաշխէ, ադքան ոսկի չունին խազինան: Մեր Տօքթօր Քարապօղը դուդուկը ձեռք պատրաստ կը պահէ, որ եթէ վտանգ գայ՝ փչէ, ու ասքարն իրեն օգնութեան կանչէ:

Ապա կու հանէ ծոցէն փոքրիկ խնձորները, ամէն մէկին կտոր մը կու տայ, կ՚ուտեն, կուլլին մարդ այդ էշերը: Դուդուկ կը փչէ, բիւրաւոր զօրքերով ճամբայ կ՚ելնեն, կու գան Արզրում, ան երկու բազիրկանը կու գտնայ, անոնց բեռները կու տայ: Երբ Բաղդադին կու մօտենան, առաջուց մարդ կու զրկէ մօրը, բարեկամներ կ՚ելնեն առջեւ, կու բերեն տունը: Տունեա Գուզալին տղայի մօր ձեռքը կու պագնէ: Տղան կ՚ըսէ.

— Հարսա՛, ահա իմ կորսուած բաները, ահա ան աշխին, Թիֆլիսու Տունեա Գուզալին, որ այնքան չար-

չարանք հանեց քու տղայի գլուխը, մինչեւ իրեն երեսէն էչ եղայ, ապա դարձայ մարդ եղայ ու զինքը յաղթեցի, ինքն ալ մինչեւ էչ չեղաւ՝ իր չարութենէն վազ չանցաւ: Ու հիմայ մարդ եղած է, կու գայ քու տունը, քեզի հարս կուլլի:

Մեծ հարկ ու հարսնիք ըրին, քառասուն օր քառասուն գիշեր կերան խմեցին, զարկին խաղցին, ու տարան եկեղեցին առքով փառքով պսակեցին: Անոնք հասան իրենց մուրատին, մենք ալ հասնինք մերին Մուրատատուր Մշու Սուլթան Սուրբ Կարապետին:

ԻԳ.

ՊԱՌԻՈՒ ՏՂԱՆ

Թագաւոր մը աշխի մը ունէր, եղաւ կարգելու, թէլալ կու կանչէ թէ՝ բոլոր տղաներ թող գան սարային առջեւէն անցնին այսինչ օր: Աշխինին ալ խնձոր մը կուտայ, կ'ըսէ·

— Ո՛ր տղային որ հաւնիս, աս խնձորը անոր վրան ձգէ:

Աշխին խնձորը կու ձգէ պառիու տղայի մը վրայ: Թագաւորին խմաց կու տան, կու նեղանայ:

— Աս չեղած բան է, կ'ըսէ:

Մէյ մ'ալ կու գան կ'անցնին· երեք անգամ ընել կու տայ, երեք անգամն ալ պառիու տղային կու ձգէ խնձորը: Թագաւորը բարկանալով՝ աշխին ալ, տղան ալ կու վռնտէ սարայէն ու քաղքէն դուրս: Կ'իջնան քօփրուին (կամուրջին) քով, հաւբունի պէս տուն մը

կար տղային: Պառաւ մայրը կը նեղանայ տղային թէ՝

— Մենք մեզի ուտելիք չունինք, աս աշխի՞ն ինչ էր:

— Աշխին կ՚ըսէ·

— Մի՛ նեղանար, մամա, ես ջահր մանելով կ՚ապրիմ:

Վեց ամիս այսպէս կ՚երթան: Յետոյ խորհուրդ կ՚ընեն որ տղան երթայ ղուրբաթ, փարայ վաստկի: Ելաւ չուկան, բազիրկան մը գտաւ որ սէքսէն (ութսուն) բեռ մալով Արաբիստան կ՚երթար: Կ՚ըսէ·

— Իս քովդ կ՚առնե՞ս:

— Կ՚առնեմ, կ՚ըսէ, ի՞նչ կ՚ուզես:

— Ամիս հարիւր ղուրուշ, կ՚ըսէ:

— Շատ աղէկ, ա՛ռ քեզի հազար երկու հարիւր ղուրուշ տարեկանդ, գնա տունդ, պակասութիւնդ հոգա, եկուր:

Տղան կ՚երթայ տուն, եւ թագաւորին աշխին կ՚ըսէ տղային թէ՝ գնա Փիլան տունը, ծեր մարդ մը կայ, ձեռք պագ, ըսէ որ ղարիպութեան կ՚երթամ, բաբա՛, ինծի ի՛նչ խրատ կու տաս:

Կ՚երթայ եւ բաբան կ՚ըսէ·

— Իմ խրատներս ասոնք են· «Կէօնիւլ քիմի սէվսէ, օ՛ տըր կիւզէլի» (սիրտը ով որ սիրէ ա՛յն է աղուորը)· «Սապր՝ պաշի սէլամէթ» (համբերութեան ծայրը փըր-կութիւն է)· «Հէր սապրտայ պիր խէյր» (ամէն համբե-րութենէ բարիք մը կը ծնի):

Տղան կը դառնայ տուն, աշխինին կը պատմէ· ան ալ կ՚ըսէ·

— Միտքդ պահէ աղէկ մը, աս խօսքեր քեզի պէտք պիտի գան:

Տղան բազիրկեանին հետ ճամբայ կ'ելնեն, կ'երթան Արաբիստանու մօտեր եազլի մը օրթան բեռներ կ'իջեցնեն: Ատոնցմէ առաջ սէքէն բազիրկեան ալ հոն բեռներ թափեր նստեր էին: Տղան յոգնած է, կու պառկի կու քունանայ: Այդքան մարդ ու հայվան ծարաւ են, ջուրի խուլի (հոր) մը կայ, բայց գիտեն ով որ իջնէ հոն ջուր հանելու, մէջը կու մնայ: Տղան կ'արթննայ, կու տեսնէ որ թէլալ կու կանչեն կարվանին մէջը թէ՝

— Ամէն մէկ բազիրկեանս հազարական ղուրուշ կու տանք, սաքսան հազար ղուրուշ, այն մարդուն որ իջնայ ջուր հանէ այս խուլիէն մեզի եւ մեր հայվաններուն:

Տղան սանադլաշմիշ կուլի (կը պայմանաւորի), խօսք կու տայ որ մտնայ: Իր աղան կու մեղքնայ, կ'ուզէ արգիլել, բայց բանը բանէն անցեր:

— Դու քո ձեռքովդ խուլին կ'իջնաս, կ'ըսէ, քու մեղքը քու ճիտը, բայց թէ որ ողջ ելար, մէկ բեռ մալն ջորիով քեզի կու տամ:

Ջուանով իջեցուցին տղան, տեսաւ որ գետ մը ջուր կը վազի, կուշտ մը խմեց: Մէյ մ'ալ խուլուի անդիի ծայրէն մենծ արար մը կու կանչէ սա տղային.

— Հոս եկուր, հոս եկուր:

Տղան սարսափելով գնաց, տեսաւ որ երկու տղայ առեր քովը նստեր է արար մը. տղոց մէկը սեւ է, մէկն ճերմակ: Ու կ'ըսէ տղային.

— Ես քեզնէ բան մը տի հարցունեմ, թէ որ գիտցար՝ տի խալըսիս, թէ չ'գիտցար՝ տի մեռնիս, ինչպէս որ շատեր մեռցուցած եմ. ըսէ՛ նայիմ. իմ այս տղոցմէն բարով ո՞րն է, գէշը ո՞րն է:

Պառուու տղայի միտքը եկաւ ծերունւոյն խրատը, եւ ըսաւ.

— Կէօնիւլ քիմի սէվսէ օ՛ տըր կիւզէլի

Արաբը մէկէն կ'ելլէ աս տղային ճակատը կու պագնէ, ու կ'ըսէ.

— Աֆէրիմ մարդ, դուն իմ այսքան տարուան ցաւս փարատեցիր:

Յետոյ կու հարցունէ ու կ'իմանայ թէ ինչո՞ւ համար իջած է այդ խուլին: Տղան ալ կը պատմէ թէ՝ ջուր տի հանեմ կարվանին, հայվաններուն: Արաբ երեք խընձոր կու տայ տղային ու կ'ըսէ.

— Ջուրը հանելէդ յետոյ, երբ տի ելլես, խընձորի մէկը ձգէ, կէսը հասածդ ատենը՝ մէկալը ձգէ, դուրս ելլելուդ՝ մնացած խնձորը ձգէ, ու այսպէս սալամաթ կ'ելլաս:

Երեք հատ ալ նուռ կու տայ հէտիյէ, մէկն ճերմակ, մէկն կանանչ, մէկն կարմիր:

—Ասոնք ալ ծոցդ դիր:

Առաւ, եւ ըսածին պէս ըրաւ, դուրս ելաւ, բազիրկեանները ալ սանաթին մուճիպով (պայմանագրին համաձայն) տուին սաքսան հազարը, իր աղան ալ բեռ մը՝ ջորիով: Տղան ուզեց որ ադ բեռը ու փարաները ղրկէ իր տունը: Երեք նուռը բեռին մէջը դրած ատեն, աղան տեսաւ որ երեքն ալ միւջաֆար *(գոհար) էր խելքը գըլխէն գնաց. բայց բարի մարդ էր, չ՚չարացաւ, բեռն ու ջորին տուաւ մէկ ծառային որ տանի պառաւ տղայի տունը, քէօփրիւին գլուխը, սէլվի ծառին քով, ու* իլմուխապէր *(ստացագիր) մը բերէ: Եւ այդ տղային ալ աստիճան բարձրացուց, ըրաւ իրեն Սէիս պաշի:*

Այս բազիրկեանը ժամանակէ մը ետքը մեռաւ. խաթունն ալ աս տղան իրեն զաւակ ըրաւ, եւ իր աղայի գործը կը շարունակէր. բարով հալ ու վախթ ունէր, բայց քանի տարի էր որ տունէն ելեր էր, օր մը խաթունէն հրաման ուզեց որ երթայ մի անգամ տունը աչք

տայ, եւ գնաց: Ան թող գալու ըլլի, մենք երթանք անոր տունը:

Տղայի ղարիբութիւն գնալու տարին՝ Աստուած զաւակ մը պարգեւած էր անոր, երբոր իր ղրկած փարաներ, բեռն եւ նուռերը եկան հասան: Կնիկը ճանչցաւ որ այդ նուռերը միւջաֆար էին, բայց պառաւը կու կարծէր թէ նուռն է, կու վերցունէ որ ուտէ:

— Աֆիրիմ տղաս, կ'ըսէ, Աստծու բերան քեզ օրհնէ որ ինծի չես մոռցեր:

Հարսը կու խլէ ձեռքէն, բարձին ետեւ կու պահէ: Պառաւը հարսին պէտուա (անէծք) կ'ընէ, հէրս կ'ելնէ, կ'երթայ մէկալ օտան կու նստի: Հարսը չուկայէն երեք նուռ գնել կու տայ, կու բերէ կու տայ պառաւուն:

— Ա՛ռ, կեր, կ'ըսէ, ինծի պէտուա մ'ըներ, ջահելութեանս աֆ ըրէ:

Հարսը պառաւուն, իրեն եւ չօճուխին վրան գլուխը կը նորէ, արծաթէ թապախի մը մէջ ան ալմաս նուռերէն մէկը ոսկի թելէ չավրայով մը կու կապէ դնէ, կու տայ կեսրոջ, ծոց ու ջոբն ալ ստակներով կու լեցնէ, կ'ըսէ·

— Ա՛ռ աս նուռը տար թագաւորին հէտիէ· եթէ թագաւորն հարցունէ թէ՝ ի՞նչ կ'ուզես, մուրատդ ի՞նչ է, ըսէ՝ ֆարման մը կ'ուզեմ, քու փանչադ ալ վրան, որ ինչ որ ընեմ մարդ մանի չըլլի· եւ երբ սարայը կու մտնաս, ծոցիդ փարաներն ալ սափմիչ ըրէ ծառաներուն:

Ըսածին պէս կ'ընէ պառաւը: Թագաւորը կանչել կու տայ միւջաֆարճիներ ու կ'ըսէ·

— Աս նուռին գին դրէք:

Կու նային եւ կ'ըսեն·

—Ասոր գին չ'կայ· տասնըհինգ տարեկան տղայ մը

դուզ (հարթ) տեղ մը կայնէ, քար մը ուժով վեր նետէ, մինչեւ ուր որ հասնի, այնքան տեղ ու այնքան բարձրութեամբ ոսկի չարես, դեռ գինը չէ:

Թագաւոր կու նայի որ իր խազինան այդքան ոսկի չ'կայ: Կու հարցնեն պառաւին թէ Գի՞ն կ'ուզես այս նուռին թէ հէտիէ (նուէր) բերած ես: Կ'ըսէ՝ հէտիէ է:

— Ուզէ՛, կ'ըսէ Թագաւորն, մուրատդ ի՞նչ է:

Պառաւը հարսէն լաթը կ'ուզէ, եւ Թագաւորն կու տայ ֆէրմանն: Թագաւորին աղջիկն ֆէրմանն առնելուն պէս, օխդը ղուլներուն կը ղրկէ ան ալմաններէն, ու չափազանց փարայ կու բերէ, աննման սարայ մը կու շինէ. իրենց բունին քով, մեծ կտոր միւջաֆարներն ալ կու շարէ սարային ճակատը, որ ցորեկն արեւով, գիշերն ալ արեւու նման լոյս կու տային: Թագաւոր լսեց, եկաւ սարայը պտտեցաւ, շատ հաւնեցաւ: Ջօճուխը որ քսան տարեկան էր, աչքը մտաւ, տարաւ ու ըրաւ Սարասքար, եւ այդ պատճառաւ շատ հեղ տավէթի կու դար Թագաւորը, ու ամէն օր նոր բաներ, ալմասեղէններ կու տեսնար, մտքէն չարութիւն կ'անցնէր թէ իր չունեցած ասանք ունին, բայց սիրտը չէր թող տար որ վնաս մը ընէր, ինչու որ իր Սարասքարը շատ կու սիրէր:

Հիմա պառաւու տղան եկաւ հասաւ քաղաքը, տեսաւ որ իրենց հաւ-բոյնը դրած է, բայց պարապ է, քովն ալ այդ աննման սարայը կայ: Իրիկուն ելաւ սէքվի ծառին վրայէն նայեցաւ որ, իր կնիկը երիդմանը բազմեր է Սարասքարին հետ, ճանչցաւ կինը ու միտքը պղտորեցաւ, թիֆէնկը կու քաշէ թէ զարնէ, ծերին խրատը միտքը կու գայ թէ՝ Սապր պաշի սալամաթ: Ետ կու կենայ, քիչ մը ետքը նորէն կու նայի, կու դըրդուի, թիֆէնկը կու քաշէ որ զարնէ կնկան, ծերին

մէկալ խօսքը միտքը կու գայ թէ՝ Հէր սապրտա պիր խէյր։ Դարձեալ ետ կու կենայ ու մտիկ կ՚ընէ որ Սարասքար կու հարցունէ թէ՝

— Մայրիկ, իմ Դատո ո՞ղջ է, ո՞ւր է, ես գիշերս երազով տեսայ որ կու գար տունը։

Մայրն ալ կու պատմէ տղային սա հէքեաթը։

— Վա՜յ, կ՚ըսէ տղան, ես Սարասքար եղնիմ, դու Թագաւորի աղջիկ ըլլիս, սա սարայն ունենանք մենք, ու իմ Դատոս գարիպութի՞ւն քաշէ. տասուն տ՚առնեմ ասքար, երթամ Դատոս գտնեմ բերեմ։

Հայրը կու լսէ, ծառէն կ՚իջնայ, տասուն մուժտաճի կու ղրկէ։ Թագաւորն ալ հրաման կ՚ընէ, մեծ ալայով ներս կու բերեն, Թագաւորին կու պատմեն իրենց գլխուն եկածը։ Թագաւոր կ՚ըսէ.

— Իրաւ է. «Եազըւ պօզուլմազ» (գրուածը չաւրուիր). դուք իրարու խըմէթն էք եղեր. «Թաքտիրի իլահի պէօյլէ իմիշ» (Աստուծոյ տնօրինածը այսպէս է եղեր). այսուհետեւ իմ փեսաս ես։

Ան ալ Թագաւորին ձեռքը կու պագնէ։ Թագաւորի մեռնելէն յետոյ Թագաւոր կ՚ըլլի։

Անոնք հասան աս աշխարհի փառքին մուրատին, մենք ալ հասնինք երկնային փառքին։

●

ԻԴ.

ԱԼԹՈՒՆԲԱՇ ԲԱԼԸՂ

Ժամանակաւ Մըսըրայ Թագաւորի աչքերը կը կուրնան, բժիշկներ ամէն դեղ ու դարման կ՚ընեն, ճար չկայ։ Թագաւոր կու լսէ թէ Ինկիլիզի երկիրը երեք

հարիւր տարեկան բժիշկ մը կայ, գիր մը գրել կու տայ Ինկլիլիզի Իմբէռատորին այսպէս.

«Ո՛վ Վեհափառ մեծ Թագաւոր,

«Կ'աղաչեմ որ Ձեր մայրաքաղաքը բնակող ծերու-
«նի տօքթոր Ջինջինը ղրկէք իմ ծառայութեանս աչ-
«քերը լուսաւորելու. Ձեր աղէկութիւնը իմ օխտ պոր-
«տէն չպիտի մոռցուի, եւ Լօնտրան ինծի բաշխածի
«պէս կու լինիք:

«Ն. Տ.
ԹԱԳԱՒՈՐ ՄՍՐՈՑ»:

Տօքթոր Ջինջինը կու ղրկեն, կու գայ, կոյր աչքերը կու քննէ ու կ'ըսէ.

— Այթունբաշ բալըղի մը բերէք ովկիանոսէն, անոր արիւնէն դեղ ընեմ, կու բացուին աչքերը:

Եւ կու հանէ այդ ձկան պատկերը կու տայ, ու՝

— Հարիւր օրէն աւելի չեմ սպասեր, կ'ըսէ, եթէ չբերէք, կու ձգեմ կ'երթամ:

Թագաւորի մէկ հատիկ զաւակը կ'ելլէ կ'առնէ հարիւր թօռ եւ հարիւր մարդ, կու նստին նաւեր, կ'երթան ովկիանոսի մէջերը, շատ կ'աշխատին, շատ ձուկեր կու հանեն, բայց Այթունբաշը չէ: Երեք ամիսը լրանալու մօտ է, Տօքթորը տի երթայ, վերջին անգամ թագաւորի տղան կ'ըսէ.

— Ձգեցէք այս մէկ թօռն ալ իմ բախտիս:

Կու ձգեն, եւ Այթունբաշ ձուկը կու գայ դուրս: Ջուրով լեցուն մեծ չիչէի մը մէջ կու դնեն ձուկը, կու դառնան: Տղան՝ նայելով ձկան վրայ՝ գութ կ'ունենայ վրան, եւ երբ կու մօտենան ցամաքին, կու բռնէ ձուկը կու ձգէ ծովը:

— Թո՛ղ երթայ ապրի, կ'ըսէ, պալըք պիլմէզսէ, հալըք պիլիր:

Հօր սարայը հասնելուն, կու պատմեն։ Թաքաւոր կը զարմանայ.

— Վա՜յ, կ'ըսէ, տղաս աչք դրեր որ ես չուտ մեռնիմ, ինքն թագաւորէ. ճալատնե՛ր, տարէք տղայիս գլուխը կտրեցէ՛ք։

Բայց տղան մօրը մէկ հատիկ ըլլալով, լաթերը ուրիշի մը կու հագցունեն կու կախեն, եւ մայրը տղային չատ մը արծաթ ոսկի տալով կու փախցնէ հեռու կղզի մը։ Աս պատուէրն ալ կու տայ թէ՝

— Ծառայ տի բռնես նէ՝ ամսական ուզող ծառայ չբռնես։

Տղան կու հասնի կղզին, տուն մը կը վարձէ կու նստի, մարդ չմնար ամէնքն ալ կու գան ծառայելու, բայց ամսական ուզելնուն համար կու ճամբէ։

Օր մի Արաբ մը կու գայ թէ՝

— Ինծի կու բռնե՞ս, քեզի ծառայեմ, կ'ըսէ։

— Հա. ի՞նչ կ'ուզես։

— Ես փարայ չեմ ուզեր, կ'ըսէ, դու ինչ որ տաս, տաս։

Վար կը դնէ աս Արաբը եւ մէկտեղ կ'ապրին։

Ադ կղզիին մէջ աժտահար մի փէյդահ կուլլի, որուն ահէն մարդիկ չեն կրնար տուներէն դուրս ելնել, առուտուրն, բան ու գործ, վարուցան կու դադրի, եւ կու մտածեն ադկէ քօչեն ուրիշ երկիր մը։ Տեղւոյն վալին զօրք կու հանէ, խոստմունք կ'ընէ, մարդ չկայ որ սպաննէ աժտահարը։ Մեր Արաբը կ'երթայ վալիէն կ'ըսէ.

— Իմ աղան կու սատկեցնէ աժտահարը, ի՞նչ կու տաս։

Վալին կ'ըսէ։

— Աղջիկս կու տամ, ու ինչ ալ ուզէ տամ։

Արաբ կ'ըսէ.

— Աղջիկդ տուր, եւ ինչ որ ունիս քեզի, բայց ասկէ ետքը ինչ որ վաստկիս կիսրար:

Այս պայմանը կու կնքեն, կ'երթայ Արաբը, կու սպաննէ աժդահարը, ականջները կու տայ աղային, աղան ալ կու տանի վալիին: Վալին կ'ընէ իրեն փեսայ, վաստակի կէսը կու տայ, մեռնելէն ետքն ալ՝ փեսան կու նստի վալի, ու աս ատենները մանչ զաւակ մը կ'ունենայ:

Օր մը Արաբ իր աղային կ'ըսէ.

— Տեղդ փոխանորդ դիր, ել քեզի հետ երթանք Փարիզ:

Շատ փարթամ ընղակներ կ'առնեն հետ, կ'երթան: Արաբ կ'ըսէ աղային.

— Գնա՛ Ֆռանկի թագաւորի աղջիկը ուզէ:

Կ'երթայ կ'ուզէ: Թագաւոր կ'ըսէ.

— Պ. Վալի, կու տամ, բայց հարիւր տօղսան տըղայ փեսայ ըրի իմ աղջկան, մեռան, քեզ կու խնայեմ:

Տղան կու սարսափի, բայց Արաբը կու զօռէ թէ՝

— Ա՛ռ, հոգ մ'ըներ:

Տղան կ'առնէ աղջիկը, ու թեթեւ պսակ մը կ'ընեն, եւ Թագաւորի ծառաներ աս նոր փեսային պատանքն կու պատրաստեն, գերեզմանը կու փորեն: Իրիկուն, առագաստին ատենը, Արաբը օտայի տօլապին մէջ կու պահուըտի. ու երբոր կու քնանան, կու գայ գլխուն վերեւ կու նստի, թուրը ու մաշան ձեռքը: Կէս գիշերուն աչխինի բերնէն սեւ օձ մի կելնէ որ տղան կծէ, Արաբ մաշայով կու բռնէ օձը եւ թրով կու կտրէ, կու տանի տօլապին մէջ կու պահէ: Առտու կու գան փեսան թաղելու, կու տեսնան որ ողջ է, կու վազեն Թագաւորին աչքի լոյս: Մէկալ իրիկուն ալ օձ մը կ'ելնէ, Արաբ

ան օձն ալ կու սպաննէ: Եւ անկէց ետեւ խաղաղութեամբ կ'ապրին:

Փարիզի Թագաւորն ալ մանչ զաւակ չունենալով, երբ կու մեռնի, փեսան կու թագաւորէ: Օրեր կ'անցնին, մէյմնալ Մըսրէն սայի մը կու գայ, մայրը ղրկած էր թէ՝ հայրդ մեռաւ, եկուր թագաւորէ: Արաբ խորհուրդ կու տայ որ փոխանորդ դնէ իր տեղը Ֆրանկ մը, ու ինքն առնէ իր կինն երթան: Անէնկ կ'ընեն ու կ'ելնեն (առջի) կինն ու մօնչըն ալ կ'առնեն կու գան, հօր գահը կու ժառանգէ: Արաբը հրաման կ'ուզէ իր տեղն երթալու, եւ Թագաւոր կ'ըսէ անոր.

— Դուն այնքան աղէկութիւն ըրիր ինծի, որ փոխարէն չեմ կրնար ընել, ինչ որ ուզեմ քուկդ է, ուզածդ առ գնա:

Արաբ կ'ըսէ.

— Ամէն բան քեզի, կիներդ ալ կիսենք:

— Ո՛ր մէկին կու հաւնիս, թող ան քեզի ըլլի, կ'ըսէ Թագաւորը:

— Ո՛չ, կ'ըսէ Արաբը, ամէն մէկը երկու կտոր կ'ընեմ եւ կու կիսենք արդարութեամբ, ի՞նչ պէտք է ըսուի աղուորն ես առի, կամ քեզի մնաց:

Թագաւոր կ'ուզէ դիմանալ, բայց անէնկ մարդու կու դիմադրուի՞:

— Դու գիտես, կ'ըսէ:

Արաբը կու կախէ գլխիվայր Փարիզու աղջիկը, ու թուրը կու վերցնէ որ զարնէ. աղջիկը վախէն՝ է՜... օ՜... կը բոռայ ուժով մը, եւ սեւ օձ մը բերնէն կ'իյնայ վար:

Արաբ կու սատկեցնէ օձը, եւ աղջիկը կ'ազատէ:

— Հալալ ըլլի քեզի քո կնիկ եւ քո ամէն ունեցածը, ես իմ պարտքս վճարեցի, կ'ըսէ Արաբն, ա՛լ չար չմնաց

քեզի, խաղաղութեան ապրեցէք: Դու իմ կեանքս ազատեցիր, եւ ինչ որ ըրի, քիչ էր: Ալթունբաշ ձուկն եմ:

ԻԵ.

ԱՆՏԵՍ ԱՆՆԸՄԱՆ

Թագաւոր մը երեք տղայ ունէր, մեռնելու ատենը ամէն մէկին մէկ մատուն ձգեց: Մեծ տղայի մատուկին մէջ թագ մը կար, միջնեկ տղային՝ ոսկի կար, պստիկին՝ հող: Մեծը նստաւ հօր տեղը, եւ անգամ մը որսի գնաց, ալ չդարձաւ: Միջնեկն ալ անէնկ: Կարգն էկաւ պստիկին, մայրն ու իշխանները ու ազգականները շատ զիմացան թէ՝

— Մի՛ երթար, դուն ալ կու կորսուիս:

Բայց մտիկ չըրաւ: Ճամբայ ելնելու օրը աղքատները լցուեր էին դուռը, ամէնուն ալ հաց կերցուց եւ ողորմութիւն տւաւ, անոնք ալ կ'օրհնէին զինքն ու յաջողութիւն կու խնդրէին Աստուծմէն: Մնաք բարովներ կու լմնան, ճամբու բեռներ ու ճամբու դրամներ կու յառաջանան: Տեսանք ծերունի Բարամն ալ էկաւ, եւ ըսաւ.

—Ո՞ւր է ճամբորդը, թող գայ ինծի ալ ողորմութիւն մը տայ:

Կու գայ, կու տայ: Ան ալ օրհնութիւն տալէ յետոյ կ'ըսէ.

— Ես քու հետն եմ ո՛ւր որ երթաս, եւ քեզի պիտի օգնեմ Աստուծոյ զօրութիւնով:

— Շատ աղէկ, կ՚ըսէ տղան, ճաշդ կեր, բաբա՛, ու ճամբայ ելիր. ես ալ հա՛ եկայ:

Ճաշ կ՚ընէ ու կ՚երթայ ճամբու բերանը կու նստի, մինչեւ տղան կ՚երթայ: Բաբան կը համբուրէ տղային ճակատը, կ՚օրհնէ:

— Երթաս բարով ու գաս բարով, կ՚ըսէ, ես առանց հետդ գալու, ուր որ համնիս՝ հոն եմ. գնա՛, մի՛ վախնար:

Տղան կը պագնէ աս Բաբային ձեռքը, որ վերջին խրատը կու տայ թէ՝

— Քանի մը օր երթալէդ յետոյ, ճամբան երեք կուլլի, վերին ու վարի ճամբան մի՛ երթար միջինը գնա, ձիաւոր մը տի հանդիպի քեզի, ձինը կու տեսնաս, ձիաւորը չես տեսնար, չվախնաս. մտքովդ Սուրբ Սարգիս կանչէ ու ձիաւորին ըսէ. «Իգիթ իսէն աթտան իէն ֆի սէն իլէ կիւլէշ թութալըմ» (եթէ կտրիճ ես ձիէն իջիր որ միասին գօտեմարտինք). անիկայ ձիէն կ՚իջնայ՝ բայց չերեւար. դուն մէկէն ելիր հեծիր անոր ձինը, ան ատեն անոր Թլըսումը կ՚աւրուի, քեզի կ՚երեւայ: Ասկէ անդին գիտնալիք քուկդ է:

Իրաւ որ Բաբայի ըսածին պէս կուլլի, ու երբոր տղան կու հեծնէ ան ձիաւորի ձինը, կու տեսնայ որ աննման աղւոր աշխի մ՚է եղեր իրեն հանդիպողը: Աշխին կ՚երեւայ, ու կ՚ըսէ.

— Ես տօղսանուինն (իննսունըինը) մարդ սպանած էի առանց երեւալու, քեզմով հարիւր տի՛լլէր, բայց դուն իմ սըռս գիտցար, դուն ինծի յաղթեցիր, հայտէ երթանք իմ սարայը. ասկէց ետքը դուն իմ տէրն ես, ինծի ու իմ տունս դուն տի կ՚առավարես:

Տղան աս սարայը տեսնելուն խելք չ՚մնար վրան, այնքան զարմանալի շէնք ու շնորհ կար, որ «տիլ իլէ

թաբիր օլմազ, աճչայ իլէ մէյտանեայ կէլմէզ» (խօսքով չի նկարագրուիր, դրամով չի շինուիր)։ Երանութեամբ իրար կու վայելեն։ Ապայ տղան կը սկսի որսի երթալ։

Աս աղջնի անունը «Անտես-աննման» էր. անունը կար ու ինքը չ'կար, հիմայ իմացուեցաւ ամէն կողմը թէ աղոր թըլըսումն աւրուեր է։ Անտես-աննմանի գովասանքը հասեր էր Չինումաչին, աշուղներ պէսպէս պատուական խաղեր շիներ էին վրան ու Թագաւորին առջեւը կ'երգէին։ Հրաման հանեց Թագաւոր՝ թէ անպատճառ պիտի բերուի ինծի Անտես-աննմանն։

Ջաղու պառաւ մը էլաւ իշխանաց առջեւ, խօ՚ք տուաւ երթալ ու բերել։ Կարճ գնաց, հասաւ, ամէն սատանկութիւն գործածեց, բայց մուրատին չ'հասաւ։ Անտես-աննմանն թէպէտ խաբուեցաւ, ներս առաւ զինքը, բայց փեսայն կռահեց, սատկեցուց, ու ճիւէն բռնեց շուներու առջեւ նետեց։

Նայեցան որ էրկան եղաւ, Ջաղուն չ'դարձաւ, մէրաքէն Թագաւոր հիւանդ եղաւ ու վրան գլուխը դուրս տուաւ։ Հիմայ դարդն երկուք է, բայց դարմանը մէկ։ Թագաւորին պալատականները աշխըրքի ամէն կողմը մարդ հանին, ու գտան խիստ յաջողակ Ջաղու մը, բերին հանին Թագաւորին երեսը։ Թագաւորն հարցուց թէ՝

— Կրնա՞ս երթաս բերես Անտես-աննմանն։

Ջաղուն ըսաւ.

— Թագաւոր, ապրած մնաս, աս իմ ջօլախ ձեռաց բանն է։

— Հայտէ՛ քեզ տեսնամ, ըսաւ Թագաւորն, թէ որ բերիր, քեզի ոսկիներու մէջ կը նստեցնեմ։

Ջաղուն շինել տուաւ կարաս մը, մէջը լեցուց

սատանաները, բերանը ամրցուց, սեւ օձ մը ալ խամչի (խարազան) ըրաւ, հեծաւ կարասը քշեց, ու հավայէն (օդին մէջէն) գնալով իջաւ Անտես-աննմանի բաղչան: Ծառերուն տակը ծածկեց կարասը, ու ինքն գնաց սարային դուռը չալեց, ներս մտաւ, քէֆն ու խաթըրը հարցուց Անտես-աննմանին: Յետոյ հարցուց թէ՝

— էֆէնտին ընտա՞ր է, աղէ՞կ է, դուն ընտոր ադէնկ մինակ կու նստիս, ընկեր մը պէտք է քեզի, ես հազար տեղ ու հազար մարդու հետ գործ ունիմ, բայց եթէ ուզես, քու մօտ կու մնամ, ես աշխարհքէ ձանձրացեր եմ, դուն ալ մենակութենէ կը ձանձրանաս, քեզի հետ ժամանակ կ՚անցունենք:

Այնքան քաղցր կու խօսէր որ Անտես-աննմանն ուզեց պահել:

— Բայց, ըսաւ, որիկս քեզի կու սպանէ, ինտոր որ սատկեցուց քեզմէ առաջ էկող ուրիշ կնիկ մը:

— Բը՛լ հոգի, ատ ալ բա՞ն է, կ՚ըսէ ջադուն, էֆէնտին տունը էկած առենը իս տեղ մը կու պահես, գնացած առենը դուրս կ՚ելնեմ:

Գարար կու տան այս կերպին:

Օր մը փեսան շուտ կու դառնայ տունը, ու ջադունը կու տեսնայ տանը մէջ, կու վազէ վրան որ սպանէ: Անտես-աննմանն ինքզինքը կը ձգէ ոտներուն վրան ու կ՚ըսէ·

— Մեղք մի՛ մտնար, խեղճ կնիկ մ՚է, հաց տուր, թէ որ չես ուզեր վազը կը ճամբեմ:

Մարդը յոգնած էր, հաց կ՚ուզէ, ջադուն աֆիոն ունէր հետ, դրաւ գինիի մէջը, ու հացին վրայ մարդը գինին խմեց, թմրեցաւ ինկաւ: Ջադուն Անտես-աննըմանին կ՚ըսէ·

— Հանըմ, երթանք բաղչան ժուռ գանք, թող է-

փէնտրին քնանայ։

Կ'երթան. մէյն ալ Ջաղուն կ'ըսէ.

— Մըրի՛կ, այլախս մոռցայ վէրը, երթամ բերեմ։

Կու գայ մարդուն աջուկ թեւը կը ճեղքէ, նուսխայ մը մէջէն կու հանէ նետէ, կու դառնայ։

— Հանում, հայտէ, կ'ըսէ դարնիվար երթանք։

Ու կը տանի կարասին մօտերը։ Սատանաները ջաղուի քալելէն կ'իմանան, ձայներ կու հանեն։ Անտես–անմման զարմացած կու հարցնէ.

— Մրա՛յ, աս ի՞նչ ձայներ են։

Ջաղուն ալ իբր թէ կու զարմանայ, եւ կարասին հասնելուն պէս, բերանը կը բանայ։

— Նայէ՛, նայէ՛, կ'ըսէ, աս ի՞նչ է, ասկից է։

Նայելուն պէս՝ ետեւէն կը հրէ, Անտես–անմմանն կու թխմէ կարասը, բերանը կ'ամրացնէ, կու հեծնայ, սեւ օձով կու քշէ։

— Ո՞ւր ես Ջինումաչին, էկայ։

Թագաւորը հրաման կ'ընէ հարսնիքի պատրաստութիւն տեսնելու, բայց Անտես-անմման արզուհալ կ'ընէ Թագաւորին ու կու խնդրէ որ տօղսան (իննսուն) օր սուգ ընէ իր արկանը, ետքը հարսնիք ընեն։ Կ'ընդունուի խնդիրքը։

Մենք երթանք անդին։ Տղան այլանդակ երազներու մէջ կու զարհուրի, ու շատ երկայն կու տեւէ թըմբրութիւնը։ Մէյմն ալ կ'արթննայ, կու տեսնայ որ իրենց տունէն էլած օրը տեսած Բաբանը նստեր իրեն թեւը կու չփէ, կ'աղօթէ, ու առողջացուցեր է։ Բաբան կու պատմէ տղային թէ՝ աս փորձանքը նուսխայի պատճառով եկեր էր իրեն գլուխը, թէ ընտո՞ր ան Ջաղուն խաբեր ու տարեր էր Անտես–անմմանն Ջինաց Թագաւորին, թէ՝ անոնց հարսնիքին շատ օրեր կան դեռ։

Եւ կը հանէ ծոցէն շիշով մի իւղ, կ'օրհնէ, կու տայ տղային ու կ'ըսէ․

— Կ'երթաս աս իւղէն կու քսես թագաւորին, կու բժշկուի, աղ պատճառով պալատը ելումուտ կ'ընես, Անտես-աննմանն կու գտնես, մնացածը քու խելքիդ կը թողում։

Տղան կ'ըսէ․

— Բաբա, ես ճամբան չիյտեմ, ընտո՞ր երթամ, ե՞րբ կու հասնիմ։

— Ա՛ռ քեզի, կ'ըսէ, երկու փետուր, կայպէ թեւե-րուդ, հեծիր ձիդ, ու թռիս ամպերուն հետ ու իջնաս Ջինումաչին․ ես Սուրբ Սարգիսն եմ։

Տղան կու կապէ փետուրները, ու մէյն ալ զինքը Ջինու թագաւորին քաղաքը կու գտնէ։ Ս․ Սարգսի զօ-րութիւնով, պառաւ մի իր տունը կը տանի մեր տղան․ փետուրները կու ծալէ, ձին կու կապէ, կ'ելնէ քաղաքը ժուռ գալու, կու տեսնայ որ ինչքան ճերմակ ձի, ճեր-մակ եզ, ճերմակ ոչխար կան, սեւով ներկած են։

— Աս ի՞նչ է, կու հարցունէ։

— Անտես-աննմանը սուգ կու պահէ իր արկան հա-մար, կ'ըսեն։

Մարդը կու հասկնայ կնկան հնարքը։ Ասպա կ'եր-թայ կու մտնայ թագաւորին պալատը։

— Բժիշկ եմ, կ'ըսէ։

Թագաւորին կ'իմացնեն, ներս կու կանչուի, իւղը կու քսէ, կ'ողջունէ։ Ասոր վրայ տաստ երես կու գտնէ։ Թագաւորը կու հրամայէ որ բժիշկն իր պալատին մէջը բնակի, ու համարձակ ել ու մուտ ընէ, եւ հիւճէթով իր թագաւորական հողերէն շատ տեղեր կու տայ բժիշ-կին։

Անտես-աննմանը օրէ օր կու հալի, հիւանդ կ'իյ-

նայ, մարդու երես չը տեսնար։ Վերջապէս Թագաւոր իրատէ կ'ընէ որ բժիշկն երթայ նայի։ Բժիշկը շատ ծանր կու ցուցնէ ցաւը։ Իրաւ ալ տի մեռնէր, եթէ օր մ'ալ ետեւ հասնէր մարդը, ինչու որ իր ցաւն ալ ան էր, իր տեղն ալ ան էր։ Թէրթիր կ'ընէ բժիշկը որ հիւանդը ջուրի մը քով փոխադրեն, մարդ չ'երթայ ու չ'գայ քովը, որ իր դեղերն օգուտ ընեն։

Բայց հիւանդն առողջացեր էր· հիմայ առանձին մնալով կու խորհէին թէ՝ ընտո՞ր փախչին։ Բժշկին համար ամէն բան դիւրին է, բաբօրթ մը կու շինէ թէ հիւանդն օր մէկ ժամ ձիով ժուռ գալու է։ Իր ձինը կու բերէ, օր մի ալ քիչ մը հեռուն կ'երթան, փետուրներ կը կապէ, ինքն ալ կու հեծնէ, ամպերու հետ կու թռին· ալ զօ՞րք կու հասնի։ Իրենց սարայն եւ իրեն հօր աթոռքին կու տիրանան։ Մեծ զօրքով Չինու Թագաւորին վրան ալ ծեծ մը կու բանայ, իր հէօճէթով առած հողերուն հետ շատ մի հողեր ալ կ'առնէ, ու երեք տեղ Ս. Սարգսի անուան տաճար կու շինէ, մատաղ, լոյս, խունկ ու մոմ անպակաս։

Անէնկ իրենց մուրատին կու հասնին։ Սուրբ Սարգիս հասցնէ ամէնքդ ձեր Մուրատին։

ԻԶ.

ՕՁԷՄԱՆՈՒԿ, ԱՐԵՒՄԱՆՈՒԿ

Թագաւոր մը կուլլի, որ երբեք զաւակ չ'ունենար· շատ բժիշկներ բերել կու տայ, օգուտ մը չի քաղեր։ Սրտի նեղութենէն ինքզինքը կու տայ լեռները որսոր-

գութեան։ Օր մը կը տեսնայ օձ մը մանտրտիկ ձագերով պլլուած, խորունկ մի կու նայի, սիրտը կ'ելնէ, ու Աստուծոյ դէմ գանգատ կ'ընէ թէ՝

— Տէ՛ր Աստուած, աս օձին չա՞փ ալ չես նայիր ինծի, ու անդաւակ կու տանջես իս։

Մտքի մէջն էր միշտ աս օձին վիճակը։ Հէօքմէթ իլահի, միջոցէ մը յետոյ թագուհին կը զգայ որ յղի է, եւ ժամանակ հասնելուն՝ կը ծնի. բայց տղային կէսը մարդ է, կէսը օձ։

Թագաւորին իմաց կուտան, անիկայ ալ հրաման կ'ընէ որ նետեն քաղքէն դուրս գտնուած հորը. բայց բժիշկներ ու խելացիներ կարգադրեցին որ քանի՛ մատղաշ է, մատղաշ աղջիկներէն շաբաթ մէկ աղջիկ թային տան Օձէմանուկին, ու քանի՛ մեծնար՝ մեծ աղջիկ տային։ Եւ կու տային։

Մեծցեր էր Օձէմանուկն, ու կարգն ալ եկեր էր աղքատ մարդու մը հասած աղջկանին։ Աս մարդը երկու անգամ կարգուած էր, աղջիկ մը ունէր առջի կնիկէն, աղջիկ մ'ալ ետքի կնիկը հետ բերած էր։ Կնիկը կու պնդէր որ արկան աղջիկը տան, արիկը կու պնդէր թէ՝ չէ՛, քու աղջիկդ տանք։ Ասանկ բաներու մէջ կնկան խօսք կու քալէ։ Խորդ մայրը կու պատրաստէ մարմեռածը որ մէկալ օրը տի տանին։ Աղջիկն շատ դառն արտասուք կու թափէ Աստծու առջեւ, եւ գիշեր երազով կ'ըսուի իրեն թէ՝

— Մի՛ վախնար, գացիր ըսէ երեք կուժ կաթն թող դնէ հետդ, դանակ մ'ալ առ, ու քեզի թող փաթթէ ղոմշու կաշիի մէջը ու պարանով կախէ հորը. օձը տի կանչէ քեզի թէ՝ Դուրս ելիր ղոմշու կաշիէն որ քեզի ուտեմ. դուն ալ երեք անգամ ըսէ. Ելիր ադ օձու չապիկէն որ քեզի կաթնով լողկցնեմ. օձը կու պատռի,

դանակով չուանը կտրէ, կաշիէն դուրս ել, լողկցուր:

Աշխէն կու պատմէ հօրը: Հայրն ալ՝ Տէ՛ր Աստուած կանչելով, Հաւատով խոստովանիմ ասելով, պատրաստութիւն կու տեսնէ, ու կը տանի աշխէն հօրն ի վար կու կախէ: Օձը կու կանչէ, աշխէն ալ պատասխան կու տայ, օձը բարկութենէն կը պատռի, ու մանուկը միջէն դուրս կ'ելնէ. աշխէն դանակով իր պարանը կու կտրէ, եւ վար ինկած ատենը բերանը քարի մը կու գայ, առջեւի ակռայէն մէկը կու կոտրուի: Կու բռնէ տղան կաթնով կու լողկցունէ, ու իրարու հետ խօսըրած ատեն, աշխէնին հայրը կու գայ հօրին բերնէն նայելու որ տեսնայ թէ՝ աշխէնին երազը սո՞ւտ էր թէ իրաւ: Երբոր աղէնկ կու տեսնայ, կ'երթայ թագաւորին կու պատմէ: Թագաւոր, թագուհին եւ բոլոր պալատականները կու դիմեն հօրին բերանը, մեծ ուրախութեամբ կու հանեն մանուկն ու աշխէն, կու տանին ու շատ թանթանայով հարսնիք կ'ընեն, կու պսակեն իրարու վրայ:

Եղաւ որ պատերազմի պատճառով մանուկը հեռացաւ տունէն, իր մայր թագուհիին ըսաւ որ չըլլի չըլլի թէ հարսդ տունէն դուրս հանես, մօրանց տունէն ալ որ ձէնեն, չթողուս:

— Չէ՛, կ'ըսէ թագուհին:

Բայց աշխէնի խորդ մօր փորը հազար սատանայ մտեր է, չ'քաշեր աս աշխէնի բախտաւորութիւնը: Երեսանց կարօտ կու ցուցնէ, ինքն կ'երթայ, արիկը կու ղրկէ թէ՝

— Շատ ենք կարօտացեր, թողէք գայ մեր կարօտն առնենք:

Թագուհին ալ չ'կրնար դիմանալ, թող կու տայ տանին: Մար օլաջախը իր աշխէին հետ աս աշխէն ալ

կ՚առնէ, կ՚երթան գետը վազք ընելու, խզմէթի լաթերը կու հագնին, վազքէն ետքը ջրին քէնարը կու նստին։ Մէյ մըն ալ ի՛նչ նայիս, ոտքով կու դառնէ, հայտէ՛ Թագաւորին հարսը գետին մէջը։ Գետը քշելով կու տանի ծովը, եւ անոր լաթերը կու հագուեցնէ իր աշխենին, կու ղրկէ Թագաւորին պալատը։ Մենք երթանք ծով ինկածին ետեւէն։

Աս խեղճը՝ ծովին երեսը Փչի մը կու գտնէ ու անոր պլլուելով կ՚ապրի։ Ջրերը զինքն կու հանեն հեռու անմարդաբնակ եզերք մի, կու քալէ, կու քալէ, մարդու նշանակ բան չի տեսնար։ Իր Աստուած կու կանչէ, կու նստի կու լայ։ Նորէն կ՚ելնէ կու քալէ, մերկութիւնը ծածկելու եւ արեւէն չերուելու համար, կակուղ խոտերէն խաբայի նման բան մի կը հիւսէ, մէջը պլլուելով վեր վար կու քալէ։ Մէյ մըն ալ եղէգներով եւ ծառի ճիւղերով ծածկուած տաղաւարիկ մի կու տեսնէ, կու մօտենայ կամացուկ մը, կու նայի ներս որ բարախգիդ մի պատկեր կու քնանայ։ Ինքն ալ կու նստի սեմին քով։

Արեւը մարը մտաւ ու աս կորիճն արթնցաւ, աչքերը աս կնկան դպաւ չդպաւ՝ սատանայական կարծեց, ու ետեւէ ետեւ երեսը խաչ հանեց, տեսաւ որ չէ՛, չ՚հալածուիր։

— Ո՞վ ես դու, կու հարցունէ, ի՞նչպէս եւ ինչո՞ւ համար եկեր ես աստեղ։

Անիկայ իր գլխէն անցածը կու պատմէ։ Աս մարդն ալ իր պատմութիւնը կ՚ընէ թէ՝

— Ես երեւելի հարուստի մը որդի եմ, բան մը պակաս չէր ինծի, քէֆիս հետ ժուռ կու գայի եւ ամէն օր որսի կ՚երթայի. եղաւ որ երեք օր վրայէ վրայ որս չ՚գտայ, մտքիս դրի որ մէկալ օրը արեւը ծագելուն նետ մը դարնեմ արեւու ճակտին, սպաննեմ, թող իյնայ

արեւը երկնքէն, թող խաւար տիրէ երկրին, քանի որ ես որս չպիտի գտնեմ, քէֆ չպիտի ընեմ: Նետը ձեռքս առեր էի, արեւը իր գլուխը երկնքէն ցցուց, բոցեղէն շամառ մը երեսիս ու աչքերուս զարնուեցաւ, բոցեղէն ձեռք մը գլխիս մազերէն բռնեց վերցուց ինծի ու դրաւ այս ամայի տեղը, անիծեց որ արեւը չտեսնեմ, լոյսը չվայելեմ: Աւչնիկ, ցերեկները կու քնանամ, այս տաղաւարէն դուրս որ մնամ տի մեռնիմ. գիշերները ժուռ կու գամ իմ ապրուստիս եւ ուտեստիս:

Կինը ցերեկներ կ'աշխատի, աս մարդն ալ գիշերները: Օձէմանուկին հետ ապրող կինը հիմայ Արեւմանուկին հետ կ'ապրի: Ժամանակէ մը յետոյ այս կինը յղի եղաւ, Արեւմանուկն էլաւ թուղթ գրեց իր հօրն ու մօրն թէ՝

«Ահաւասիկ ձեր հարսն ձեզի կ'ուղարկեմ, պահեցէք զինքն, բայց ինծի մի փնտռէք, ես արեւ չեմ կրնար տեսնալ, մեր քաղաքը եւ մեր տունը չեմ կրնար մտնալ, եթէ գամ՝ անպատճառ կու մեռնիմ, անիծուած եմ»:

Արեւմանուկը՝ գիշերներն քալելով՝ հարսը կու բերէ կու հասցունէ, ինքն կու դառնայ: Հարսը գիրը կու տայ Պարոն Դատին, կ'ընդունուի: Հարն ու մարը իրենց տղուն ողջութիւնը լսելով չեն դիմանար, կ'ուզեն իրենք երթան բերեն, բայց հարսը կը համոզէ թէ՝ մեռնելուն պատճառ տի ըլլիք:

Օրեր կու լեցուին, տղան կու ծնի, օրան կու դնէ մարը, եւ իր գլխին էկածները խաղ կու չինէ, «ը՛, ը՛, ը՛ (օր, օր օր)ի տեղ կու կանչէ: Ժամանակ ժամանակ գիշերները «ը՛» կանչելուն, ձայն մըն ալ դուրսէն կու լսուի: Հարսը գիտէ որ Արեւմանուկն է, տղայի սիրոյն կու գայ դուրսէն ինքն ալ «ը՛» կու կանչէ իր գլխի էկածները. բայց չի կրնար ներս մտնել:

Հարսի կիսուրն ու Պարոն Դատը կու կռահեն ու մէկը կու գայ գիշերները, դուրսէն հարսի հետ փոխըն-փոխ խաղ կու կանչեն, միտքերնին կ'աւրեն թէ՝ աս հարսը սիրող ունի։ Կու քննեն, կու գտնեն, ճարը կու հանի հարսին ու կ'ըսէ թէ՝

— Ձեր որդին է ան էկող կանչողը, աղայի սի-րոյն կու գայ, բայց թէ որ տեսնէք ու բռնէք զինքն, ներս առնէք, տի մեռնի։

— Սուտ կ'ըսէ, աստեղ օյին մը կայ, կու բռնենք ադ էկողը. եթէ իրաւ մեր որդին է, մեր կարօտը կ'առնենք. եթէ օտար մարդ է, հարսին հալը իր ձեռքը կու տանք, կ'ըսեն։

Եւ գիշեր մը, դուրսէն ձայնը առնելուն պէս, կ'ել-լեն կու բռնեն, կու տեսնան՝ Հա՛, իրենց որդին է։

— Թողէք ինծի, ես փախչիմ, արեւը ծագելուն ե-թէ ես իմ տաղաւարիս մէջ չգտնուիմ՝ տի մեռնիմ. խնայեցէ՛ք իմ արեւուն, անիծուած եմ ես, թողէք...

Ջուրի ձան կու գայ անոնց, մտիկ չեն ըներ, եւ ահա առաւօտ արեւը կու ծագէ, մարդը մեռաւ իր հօր ու մօր աչքին առջեւ, մեռաւ բայց հոգին չելաւ։ Ըսին թէ՝ իրիկուան՝ արեւ մարը մտնելուն կ'ողջնայ։ Իրի-կուն եղաւ, մարդը անէնկ մնաց, տունը դարձաւ մահ-տուն, լաց ու կոծ բռնեց ամէնուն, բայց ի՞նչ անեն. ո՛չ ըման մեռել է որ տանին թաղեն, ո՛չ ողջ է որ ոտքի հանեն կամ հետը խօսին։ Տար առին ու իրենց գլուխը ծեծեցին, արցունքներու մէջ կու խեղդուէին, մինչեւ օր մի ասոր մայրը երազի մէջ կու լսէ որ կ'ըսուի իրեն թէ՝

— Ելի՛ր, երկաթէ տրեխներ հագիր, երկաթէ բիր մը ձեռքդ առ, քալէ դէպի Արեւմուտք. ուրտեղ որ տրեխներդ ծակին, բիրդ կոտրի, անտեղ կու գտնես

տղուդ ողջնալուն դարմանը։

Մօրը գութ շատ կուլի, առանց մտածելու առաւօտ կ'ելնէ երկաթէ տրեխներն ու բիրը շինել կու տայ, կ'երթայ տարիներով ճամբայ կու կտրէ, ճերմակ ու սեւ մարդերուն վերջը կ'առնէ, հաւքեր ու ջանավարներ ա՛լ չեն երեւար, վերջապէս աշխարհքի ծայրն է հասեր։ Հեռուանց սարայ մը կու տեսնէ, կապոյտ մարմար քարերով շինուած, երեսը շտկեց ան կողմն ու գնաց։ Դրան առջեւը բիրը ձեռքէն ինկաւ կոտրեցաւ, տրեխները հանեց թօթուելու, տեսաւ որ ծակուեր է, միտքն էկաւ թէ՝ Ահա աստեղէն տի գտնամ իմ տղուն դարմանը։ Ներս մտաւ դռնէն, բակէ բակ անցաւ տասներկու բակ, ամէն բակի չորս կողմն կամարակապ. հազար ու բիւր աստղունք պատկեր կը քնանային. բակերուն մէջ չատրուան եւ ավուզ, ոչ ծառ կար ոչ կանանչ, ոչ հաւք, ոչ անասուն եւ ոչ ուրիշ արարած։ Խորունկ լռութիւն էր։

Մէջտեղի բակի ավուզին վրայ ոսկեղէն քէօշկ մը, ու մարգրտէ անկողին փռուած, մէկ պուճախը նստած էր Թագուհի մը լոյսերու մէջ ու ինքն լուսեղէն։ Աչքերը մնաց բա՛ց ու խելքը գնաց Արեւմանուկին մօրը՝ երբ Թագուհին տեսաւ։ Բայց Թագուհին քաղցրութեամբ ըսաւ թէ՝

— Անշուշտ դու խնդիրք մ'ունիս որ այդքան չարչարանք քաշեր ես, այստեղ հասեր ես, դարդդ ըսէ, ի՞նչ է, մի՛ վախնար։

— Մայր մ'եմ ես, ըսաւ կինը, ու իմ որդւոյս արեւն ինծի դարձնելու համար եկած եմ ճար խնդրելու։

Եւ պատմեց մի ըստ միոջէ։

— Տղադ չար տղայ է, ըսաւ Թագուհին. ես ալ մայր եմ, արեգական մայրը, իմ որդւոյս արեւով եր-

կլինք ու երկիր կու լուսաւորուի․ քո տղան նետով զարնել ուզեց անոր, անիծեալ է քո որդին․ արեւէ զուրկ տի մնայ, ապրի ու չի տի ապրի, մեռնի ու չի տի մեռնի։

— Մայր եմ ես, կրկնեց Արեւմանուկին ծնողը, ցաւ եմ քաշեր իմ որդւոյս համար, այսքան ճամբայ եմ քալեր անոր սիրոյն համար․ քու զաւակիդ արեւուն համար ճար մի սաս ինծի։

Ի գութ շարժեցաւ արեւուն մայր Թագուհին, եւ ըսաւ․

—Շատ անարժան զաւակներ իրենց մայրերու շնորհիւ արեւ վայելած են, թող քու զաւակդ ալ իր մօրը համար ապրի․ բայց դուն անցիր այդ աստղերուն ետեւը ծածկուիր, հիմայ որդիս կու գայ՝ չըլլի թէ երեւիս․ երբ աւուզը կը մտնայ լողնայ, կ՚ելնէ կու գայ կաթ ծծելու, ես անոր ծիծ տալուս ժամանակ դուն անոր լուացուած աւուզէն չիչով մը ջուր առ ու դնա, տար ցանէ քո որդւոյն վրայ, կ՚առողջանայ։

Պահ մը ետքը արեգակն բոցերով, մտաւ աւուզը, աստղերը արթնցան, ոտքի վրայ բարեւի կայնեցան, Թագուհին գրկեց վեր հանեց ջրէն արեգակը եւ պառկեցուց անկողինը, իր ծոցը, ու ծիծ կու տայ, անհնանալի, անծերանալի, մշտամանուկն արեգակին։ Աստղեր բարձրացան երկնից երեսը, եւ Արեւմանուկին մայրը չիչով ջուրն առեր դուրս կ՚ելնէր պալատէն։ Ողջամբ կը հասնի իր որդւոյն, կու ցանէ ջուրը, արդէն կ՚առողջանայ կ՚ելնէ։ Աս բանին ձայնը աշխարհէ աշխարհք կ՚երթայ, հեռու տեղերէ թագաւորներ, փիլիսոփաներ կու գան աս տղան ու մայրը տեսնելու եւ անոնցմէ աս բաները լսելու։

Եկողներէն մէկն ալ Օձէմանուկն էր, որ վաղուց

վերադարձեր էր իր տունը. եւ որովհետեւ հօրը ինկած տանը կոտրած ակռային տեղը արծաթէ ակռայ մը շինել տուած էր կնկան, այդ նշանը չ'տեսնալով կնկան վրայ, կասկած ընելով, մօրը երդումն տուեր եւ իմացեր էր որ կինը տարեր էին մօրանց տունը, հասկցած էր որ խորդ մայրը անի կորսնցուցեր էր եւ իր աչխին տեղը ղրկեր էր: Ահաւասիկ Նամէհրամի հետեւանքները: Մեծ ցաւ եղած էր Օձէմանուկին, եւ ասոր համար եկած Արեւմանուկը տեսնելու եւ անոր մօր խնդրելու որ ինչպէս իւր որդւոյն համար հնարք մը ճարէ:

Արեւմանուկն եւ իր մայրը վար դրին իրենց տունը Օձէմանուկին: Հաց ուտելու ատեն ասիկայ կու պատմէր իր դարդը, եւ տան հարսը ծառայութիւն կ'ընէր սեղանին ու կու լսէր: Կէս ծիծաղ մ'ըրաւ հարսն, արծաթ ակռան երեւցաւ, Օձէմանուկն հաց մոռցաւ, քըննեց որ նա է: Արեւմանուկն ալ պատմեց թէ ի'նչպէս եկեր զինք զտեր էր: Վերջապէս բարեկամաբար մտածեցին թէ «Աղի քաղաք կերցունենք կնկան, մէկ մէկ աման ջուր առնենք, ձիան հեծնենք երթանք դաշտ ժուռ գալ, հարսը որմէն որ ջուր ուզէ իմէ, անոր կին մնալ կ'ուզէ:

Հարսն ալ տղանը դիրկը հետերնին կ'երթայ, եւ չուզեր երկուքն ալ կոտրել, բայց վերջապէս կու տեսնայ որ իր վրան նուաղում կու գայ ու վերջ մը տալու է, կու կանչէ.

— Արեւմանո'ւկ, Արեւմանո'ւկ:

Արեւմանուկ ձիէն կ'իջնէ ուրախ ուրախ, ջուր կու պատրաստէ որ տայ:

Մէյ մէն ալ հարսը կու կանչէ.

— Օձէմանո'ւկ, Օձէմանո'ւկ:

Աս ալ կ'իջնէ ջուր կու պատրաստէ: Հարսը՝ եր-

կուքին մէջտեղ կեցած՝ կու դառնայ Արեւմանուկին կ՚ըսէ թէ՝

—Ա՛ռ աս տղան որուն հայրը դու ես, բայց ես Օձէմանուկին պսակուածն եմ:

Եւ ջուրը կու խմէ Օձէմանուկէն, կ՚երթայ անոր ետեւէն:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ԵՐԱԶ

— Մամոյ, էս գիշեր էրկան երազ մի տեսեր եմ:

— Որդի, բարին էղնայ, Աստուած չարէ բարիի դարձունէ:

— Ինչխ որ կընըխկըմանց նուր էլեր եմ քնուց, կը վըլլացուիմ, մէկլէ հիամ յանկարծի դուռէ զարկուաւ· բացեցի դուռէ· հիամ հինգ հատ փալլահ Արաբ, հետուընին ուղտ մի, մտան ներս, հարցուցի·— Ի՞նչ բան ունիք ներս: Հիամ հալա մէկ հատէ ըսաց·— Քեզի մըն տանինք:

—Որդի, յի՞որ մըն տանին, սաս՛ հիամ, սաս՛:

— Հըմ, կըմ: Հիամ հալա մէկ հատէ գըկեց եսի, թարլեց ըղտու վըրան, տարան: Գացինք, գացինք, հասանք Գօլջուկ քիմի ջրի մը քընար: Հիամ մէկ Արաբն ասաց·— «Էս ջուրէ քեզի կ՚ուզէ: Սրտիս թելէ փըրթաւ, դժացի, յաւա՛րէ:

— Որդի, չէղնայ գիշեր էնի էր դժացիր, գիտցայ չար աքրաբ խէթէց քեզի:

— Նա խաա: Էդ Արաբ թարլեց եսի ջրի մէջէ· կը

բըրբըրդէնք, ամա չէնք խեղդուի։ Մէկլէ հիմա ջրի մէջէ դուռ մի, բաշլայ քարով դարկելէ. հիմա հալա քսանու-հինգ տարու աղջիկ մի դուռ է բացեց. գացի ներս, խա-քամլուխ վրայ նստայ։ Աղջիկէ ասեց.— Էս քէօշկէ իմ քէօշկն է. հարիր հըզար խըզմաթքար ունիմ. ինչ ըսեմ հանց կ՚ընեն։ Բեղի բերեցուցի հոս, ես քումն եմ դուն իմ է։ Ես լէ դարուլ էրէցի։ Ծամբեց երկու խըզմաթքար որ Տէրտէր բերեն։ Ադլայ։ Էն սարայի բաղչաներէ, սալւիներէ, եափուներէ չեմ կարնայ սալըխեր։

— Որդի, երթամ Սողիկ բաջին կանչեմ իգայ, հիանք ի՞նչ մըն եղնայ։

— Ամա՛ն դու լէ, մամոյ. Իշտէ գինամ, ըղատու հեծնալէ, մեռնելէ, դնա Զարխափանի ճրագներէ վա-ռեցու....։

Ո՞ւր երազն, ո՞ւր մեկնութիւն։

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎ

ՃԱՇԱԿ ՉՈՐՐՈՐԴ

ԳԵՂՋԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Հաւաքածս երգերէն շատեր ձգած եմ ի բաց, զանազան պատճառներով: Նոյնպէս ի բաց ձգած եմ անոնք, որոց հրատարակութեանը հանդիպած եմ այլոց ձեռքով: Միեւնոյն ըրած եմ նաեւ հէքեաթներու մասին, որոնցմէ բաւական թիւով ունէի, եւ ես ընտրեցի անոնք որոց պարունակութեանց մէջ ճարտար գիւտեր, կամ հին միտքեր կան. անոնք որ սիրուն նկարագրութիւններ, սուր առածներ եւ ասացուածքներ ունին. անոնք որ կեանքի նկարագիր եւ փորձ ու խրատ ունին. անոնք որ գաւառի լեզուին ու ոճոյն բացատրութիւն մը կը համարուին, եւայլն: Ասոնցմէ կը գտնուին որ ազգային հին տիպ չունին, բայց արդէն ազգայնացած են: Խօսքն ու լեզուն ալ իրենց ազգախառնութիւնն կ'ունենան, ինչպէս ազգի մը արիւնն՝ ուրիշ ազգի մը արեան հետ, պէս պէս առիթներով:

Ազգային գաւառական առածներ հրատարակելու համար ձեռք բերած եմ բաւական, բայց տեսնալով արդէն անոնցմէ շատը Ազգ. ամսական Հանդէսներու եւ ուրիշ հրատարակութեանց մէջ տպուած, շատ կարեւոր չ'թուեցաւ ինձ կրկնել զանոնք: Ժամանակ պէտք է որ մարդ զանոնք բաղդատէ ու տարբեր կամ նոր ա-

սացուածքներ զատ։ Այսպէս նաեւ հանելուկներ, օրհնէնքներ, անէծքներ, որոնցմէ խառնիխուռն կը գըտնուին քովս, ինչպէս այլոց քովն ալ։ Սակայն լաւագոյնն է գործածել զանոնք ազգային վէպերու կամ այլ եւ այլ գրութեանց մէջ, զոր օրինակ մեծաւ յաջողակութեամբ ի գործ կը դնէ Պ. Րաֆֆին, գաւառացի հայ ժողովրդեան հոգւոյն ու մարմնոյն քաջածանօթ եւ քաջակիր վիպասանն։ Որոնողն կրնայ տեսնել մեր հրատարակած հէքեաթներու մէջ ալ։

Երգերուս մէջ աւելորդ համարեցի զասաւորութիւն, որ թերեւս զգալի երեւի ոմանց։ Դաշտի ծաղիկներ խառն կը լինին տեսակով եւ գոյնով, այդ եւս իւր հաճոյականն ունի։ Եւ միթէ մարդն իսկ այնպէս չէ՞. միեւնոյն ժամուն մերթ կ'աղօթէ, մերթ կը տխրի, մերթ կը սիրէ, մերթ կ'ատէ, մերթ կ'օրհնէ, մեոթ կ'անիծէ, մերթ կը հանգչի, մերթ կը գործէ, մերթ կը հառաչէ, մերթ կը զբօսնու, խաղ կը կանչէ. եւ ահա այս է երգոց պատկերն ու եղանակը։

Հետեւեալն ուղղեալ է

«Առ Մեծ խմբագիր «Արեւելեան Մամլոյ».

«Իմ ամենասիրելի բարեկամ,

«... Գիտէք որ «Գրոց Բրոց»ի 60րդ երեսին յիշատակած եմ «Սարէ Սիփանէ» երգ մը, եւ անոր իմաստը թեթեւակի իմն ծանուցած։ Այժմեան զրկածս այն է, Պ. Լեւոն Մաքսուտեանի միջոցաւ ձեռք բերած ի Պուլանըխ, քրդերէնէ թարգմանուած է, որ սակայն բաւական վաստակեցոյց զիս, մինչեւ այս վիճակին վերածեցի։«Թէպէտ ընթերցողն պիտի գտնէ«ԳրոցԲրոց»ի «Սարէ Սիփանէ»ին եւ սոյն գրուածքիս մէջ՝ ինչ ինչ ոչ համանման, այլ գրեթէ ոգին ու նիւթը նոյնն է, ինչպէս նաեւ բանին հիւսուածքը։ Բնականաբար տարբե-

րութիւն տեղի կ'ունենայ ամէն բանի, երբ անգիր կը գրուցուի բերանէ ի բերան:

«Կու գամ յիշել նաեւ թէ՝ որքան եւ քրդերէնէ կ'առնուամ գայս, բայց ես յաճախ լսած ունիմ այլ եւ այլ ասողներէ թէ Սխամանդօն է հայու տղայ, Սեւ Ցարօն, իսկ Խըջէ–Զարին արդարեւ քրդու աղջիկ է, եւ Զըրըդանցի անուանեալ էլին (ցեղին) մեծատան ծը–նունդ: «Խըջէ» կամ «կըճէ» կը նշանակէ «աղջիկ», «Զարէ» դուցէ «Զարեհ», հօրը անունն է, որով կը հասկցուի Զարէի աղջիկ, կամ Զարուհի:

«Քրդերը գտնուելով Հայոց հետ երկրացի եւ կեն–ցաղակից, շատ նիւթ կ'ընծայեն հետաքրքիր եղողնե-րուն՝ Հայոց կեանքին. եւ որովհետեւ անգիր ժողո–վուրդ են Քրդերը ինչպէս անոնց չափ անգիր են նաեւ մեր լեռնագաւառացի Հայերը, ու տեղ տեղ քրդախօս, բանահաւաք մը կրնայ պատուական վաստակներ ձեռք բերել նոյն իսկ քրդերէն յօրինուած երգեր ու վէպերը գրելով: Պոլսոյ մեր Մատենադարանին յարմար գործ է յատկացնել մի պաշտօնեայ այս նպատակին համար:

«Այս խնդիրը յանձնելով նաեւ Ձեր եւ այլ բանա-սիրաց ուշադրութեան, ինչպէս եւ ներկայ գրուածքիս նիւթին ու շէնքին դատաստանը, կ'անցնիմ հարեւանցի յիշել թէ Արեւելեան եւ ընդհանրապէս հին ազգաց ճա–շակ է այս եղանակաւ կազմել վէպ, գրոյց եւ երգ, յորս յանգը հազիւ կը տեսնուի, եւ այն՝ եթէ ինքնին գայ. մասնաւորապէս դիւցազներգութիւնք եւ եղերգանք այս ոճն ունին, եւ եղանակողն ալեծածան բարձրացնելով ու իջեցնելով ձայնը, իմաստներն ու բառերը ամբողջ կը հնչէ, ըստ տեղւոյն հուժկու եւ դաժան, ըստ տեղ–ւոյն՝ աղու կամ ողորմուկ, ոգեւորելով կամ լացնելով լսողները...»:

Ս. Գ. Վ.

ՍԱՐԷ ՍԻՓԱՆԷ
ԿԱՄ
ՍԻԱ-ՄԱՆԴՈՆ ԵՒ ԽԸՋԷ-ՋԱՐԷ

●

Սիամանդոն երազով էր Խըջէզարէին
Երազի մէջ իւր մատնին փոխանակեր էր Խըջէզարէի մատնիկին,
Նոյն բանը պատահեր էր Խըջէզարէին ալ միեւնոյն գիշերին:
Աղօթրան էր, կանուխ քան զառաւօտ արթնցաւ Սիամանդոն
Հեծաւ իւր աշխոյժ ու հաւատարիմ ձինը.
Գլուխն ուղղեց, արշաւեց դէհ Ջըռըգանցւոց էլին,
Իջաւ, հիւրընկալուեցաւ մի պառաւայ կոնի տակը:
Դամբ դամբի եւ զուռնայի ձայնը կը դղրդէր ողջոյն էլը,
— Ինչի՞ է այս ուրախութիւնը, եւ որո՞յ համար այս հանդէսը, ո՛ մամիկ:
Պատասխանեց պառաւն.
— Խըջէզարէի հարսնիքն է, ո՛րդի, անոր հարսնառն էկեր է,

Այս եղաւ երեք գիշեր ու երեք ցերեկ այս ուրախութիւնը կը կատարուի:
Սիամանդօն արտասուալից աղերսեց, խնդրեց պառաւէն
Որ նշան մը իրմէն տանի հասցունէ Խըջէզարէին:
Եւ հանելով մատնէն այն երազափոխ մատանին, յանձնեց պառաւին:
Պառաւ յանձն առաւ, պատրաստեց նախշուն թաշկինակ մի,
Մէջը լից անկուտ չամիչ, անոնց հետ խառնեց մատանին,
Գընաց ի տես 'ւ աչքի լոյս հարսնութեան Խըջէզարէին:
Խըջէզարէն կ'ընդունի ընծայն, կը բանայ, ու մատի ծայրով կը խառնէ, կը խաղայ·
Եւ ահա չամիչներու կարգին մատանին կը հանդիպի աչքին: Կը ճանչնայ:
Կը հառաչէ՛ խորին: Կ'ուշաթափի, աչքեր կը մթնին, կը թուլնա՛յ, կ'իյնա՛յ:
Կը թըռի պառաւն, մէկ ձեռքը կը դնէ Խըջէզարէի աչերուն,
Մէկալ ձեռքով կը շըտկէ կախ ինկած գլուխն, եւ կ'ըսէ մոլմոքալից·
— Քոռանան թող իմ աչքեր, Խըջէզարէ, ուշդ գլուխդ բեր,
Բաց արա բիբերդ, բաց արա շըթներդ,
Ի՞նչ եղար, ի՞նչ տեսար, ի՞նչ բանի զարնուեցար...:
Պառաւոյ պաղուկ ափէն, կարեկեց ձայնէն սթափեցաւ Խըջէզարէն:
Ասաց·
— Մամի՛կ, Խըջէզարէն քեզ մատաղ, գիտե՞ս այս մատնիկին տէրն ո՛ւր է:

— Այդ մատնիկին ակըը իմ տունը իջեւանած է:
— Կը տեսնա՛ս որ, կրկնեց Խըջէզարէն, իմ հարսնխուր
էկած է.
Երեք օր, երեք գիշեր լրացաւ, ա՛լ ինձ ճար ու միջոց
չը մնաց,
Գընա՛, մամիկ, գընա՛ Սխամանդոյին ասա՛, մէկ օր
կայ ու մէկ հնարք.
Վաղ առաւօտ մօրս գերեզմանին վրայ կ'երթամ յուխտ,
մինակ կ'երթամ,
Թող այնտեղը գայ Սխամանդոն. այն տեղը գիս կը
գտնէ, գընա՛:
Դարձաւ պառաւն, Սխամանդոյին ասաց իր տեսածն
ու լսածը:
Գիշերանց ելաւ Սխամանդոն, այն գիշերը քուն չէր
եղեր.
Ելաւ ու գընաց Խըջէզարէի մօրը գումբէթէն ներս
մըտաւ,
Աչքեր ծանըրցան, երկար արան իր գլուխը քաշեց,
քունը զինքն կոխեց:
Էկաւ Խըջէզարէն, գըմբէթի մէջն անցաւ.
Շա՛տ կայնեցաւ, շա՛տ նայեցաւ, խընայեց,
Ձեռք չ'դպցուց, ձայն չը հանեց.
Բայց Սխամանդոն կը քնանար,
Աչքերը անթարթ, խո՛ր կը քնանար:
Դարձաւ դատեց, մեղդրեց Խըջէզարէն, ըզՍխա-
մանդոն,
Եւ, ջուխտակ մի ոսկէ ճան իր ջօրէն հանեց անոր
ջօրը դըրեց,
Պառեկը Սխամանդոյին դարձուց, ու երեսը իր հօրը
տունը: Ետ եկաւ:

Արեւն կէսօրը նըշներ էր, Սիամանդոն իր աչքերը
բաց արաց,
Չորս կողմն նայեցաւ, գլուխը ծեծեց, ու պառաւոյ
կոնը դարձաւ:
Տըխո՛ւր կու գար Սիամանդոն:
Եւ, պառաւոյ հարցմանց տխրագին պատասխանեց·
— Մամի՛կ, ես գընացի, ոչ ոք գըտայ·
Քունը բռներ էր գլխ, արթընցա՛յ, մէկը չը տեսայ:
— Որդի, դու շատ միամիտ ես, քո ծոցն ու ջոբը
որոնե՞ր ես, ասաց պառաւն:
Որոնեց Սիամանդոն, եւ ջուխտակ ոսկէ ճաները
գտաւ:
— Ահա՛, վրայ բերաւ պառաւն, Խըջեզարէն քեզի
թողած նըշանը:
— Բայց այս բանը ի՞նչ խորհուրդ ունի:
— Քեզ հասկըցուցեր է թէ՝ Դու դեռ մանուկ ես, Սիրոյ
մարդ չես:
Գընա՛ մանուկներու հետ ճան խաղա, դու այս գործոյն
մարդը չես:
Ամչցաւ, ու լալով աղերսեց ըզպառաւն Սիամանդոն,
Թէ՝ — վերջին անգամ մ՚ալ գնա, թող Խըջեզարէն
վերջին խօսք մ՚ըսէ, ու ընեմ:
Գընաց, ու պատասխան բերաւ պառաւն Խըջեզարէէն·
— Եթէ Սիամանդոն մա՛րդ է, եթէ սէր ընել գիտէ,
Ահա վաղը հանդիսով կը տանին գլխ, թող հանի,
Իր նըժոյգը հեծած, նետն ու աղեղը ուսին, գայ կենայ
ճամբուն վրայ,
Արծւոյ նըմանակ սըրանայ, խուռն հեծելոց մէջէն յա-
փշտակէ գլխ,
Դընէ իր ձիոյն վըրայ, քըշենք գոյգ, Սիփանայ
գըլուխը,

Այնտեղ հանգչէինք, այնտեղ սէր անէնք,
Ծածկուէինք մըժ ու դումանի մէջը:
Մէկալ օր, առաւօտ, կու գար հարսն ու հարսնառն, ձիաւորեալ սպառազէն.
Սիամանթօն իր նժոյգին վրայ կը սպասէր,
Ինկաւ կէծակի նման ձիաւորաց մէջը,
Մէկ ձեռքով բռնեց Խջեզարէի կակուղ մէջքէն,
Դըրաւ իր կռնակը, ու երեքօրեայ գընացքը քըշեցին մէկ լար:
Նոյն թափով կը քշէին ետեւէն վազողները,
Եւ, քան զամենքն աւելի կը մօտէր Խէշէնբօզ ձիոյ հեծեալն:
— Ո՞վ է սա, հարցուց Սիամանթօն Խջեզարէին,
Ո՞վ է սա որ զինքն ու իր նժոյգը վըտանգի է դըրեր:
— Դա է նա, յորմէ դու իրեն մէկ տարուան նշանածն ես խըլեր.
Սիրտն էրուկ է, Սիամանթօյ, զինքն մի՛ մեղադըրեր:
Իջաւ Սիամանթօն, իր աբան չորստակեց, Խջէ-զարէն վրան նստեցուց.
Հեծաւ, ետ դարձաւ, յիսուն ձի ու ձիաւոր վըր իրերաց թափեց,
Էկաւ, վերուց Խջեզարէն, Սիփանայ գլուխը դէմ դիմեց:
Հանգչեցան ապահով: Երանութեամբ կը նայէր Սիամանթօն,
Խջեզարէի ծնկաբարձին վրայ իր խոնջեալ գլուխը դըրած,
Յանկարծ կ'ոստնու Խջեզարէի շարժումէն ու սար-սռումէն.
— Ի՞նչ տեսար, ի՞նչ ունիս, աչքիս լոյս Խջեզարէ,

Ըսէ՛, շո՛ւտ ըսէ. ինչո՞ւ կը դողդըղաս, ինչո՞ւ կը սարսուիս:
— Զարմանալիք մի տեսայ այս անտառուն վայրը.
Քառասուն վայրի եղներ էկան ջուր խըմելու.
Մի կով եւ եթ կար այդ քառասունին հետը.
Ճակատամարտ բացին եղներ, եւ մէկը միայն, հէշէնբօզ եղն,
Յաղթեց քառասունին, խըլեց կովն իրեն:
Յիշեցի ըզքեզ, Սիամանդոյ, յիշեցի զիս, ու մեր դիպուածը.
Յիշեցի քո սպաննած յիսուն կըտրիճները...
Այս բանը զիս շարժեց, դողացի՛, ու սարսուռ զիս բռնեց:
Չը համբերեց Սիամանդօն, էլաւ առաւ նետն ու աղեղն,
Տեսաւ, հասաւ հէշէնբօզ եզին, զարկաւ նետը:
Գըլորեցաւ հէշէնբօզ եղն քարէն ի վար,
Առաւ դանակն ու վազեց վըրան Սիամանդօն:
Վէրու եղն կատաղի ուժով կոտոշները ժաժեց,
Մըռռա՛ց: Ու ըզՍիամանդօն զըմարէն ի վայր հոլովեց:
Ինկաւ Սիամանդօն կաղնւոյ կըտրոնի վրայ՝ կըռնակէն,
Ինկաւ, եւ չորս թիզ կըտրոնն ի դուրս ցըցուեցաւ կուրծքէն.
Խըջջզարէն կ'երթայ Սիամանդոյի հետուց եռեւէն.
Արձանացաւ, կեցաւ զըմարի գըլուխը.
Այն տեղէն տեսաւ զարնուած եզին վիճակը,
Այն տեղը դըպաւ իր ականջին Սիամանդոյի ցաւէն տըքալու ձայնը,
Այն տեղը ծըգուած դըտաւ Սիամանդոյի նետն ու աղեղը.

Վերցուց, խոնարհեցաւ, Սիամանթոյին նայեցաւ, ու այս ողբը լացաւ.

— Աղաչա՛նք, հազա՛ր աղաչանք:
Սիամանթոյի նետն ու աղեղը կուռ արծաթ է.
Սիամանթոյ, քեզ ի՛նչ պիտէր երթալ վէրու եղի ետեւէ.
Ա՜խ, մի՛ տըքար, իմ Սիամանթոյ, մի՛ տըքար...:

— Մի՛ լար, իմ Խըջէզարէ, մի՛ լար...
Քո լացը ինձ աւելի ցաւ է... մի՛ լար...:
— Կը տըքաս, Սիամանթոյ, ի՞նչպէս չը լամ, խորին կը տըքաս.
Քո տըքալը կու գայ, իմ լացը սըրտէս կը բերէ.

Սիփանայ սարի գըլուխը սաստիկ փոթորիկ է.
Սիամանթոյ, քո նետն ու աղեղը ահաւասիկ է.
Ինչո՞ւ չ'անսացիր ինծի, քեզ ասի, Մի՛ երթար,
Նետ ու աղեղդ վար դիր, դարձիր. Մի՛ երթար,
Վէրու եղին ետեւէն մի՛ երթար,
Թող անոնք ալ ինծի ու քեզի պէս ապրին. մի՛ երթար:
Թող իրարու հետ սէր անեն, ապրին. մի՛ երթար:

Վէրու եղն, վէրու եղն՝ ահաւոր ու անգութ եղն,
Քո կոտոշներ երկաթի նըման ամուր, եւ դու սոսկալի,
Սիփանայ սարի գըլուխը՝ սիրածն սիրողէն բաժնեցիր:

Սիփանայ սարի գըլուխը դուման ու մըժ է,
Սիամանթոյի նետն ու աղեղը խըժախըժ է:
Ժամանակէ հետէ ո՞վ լըսեր է՝ որսն որսորդն սպաննէ:

Սիամանթոյ, քեզ ասի. մի՛ երթար.
Թող վէրու եղն իր էշխին հետ երթայ. մի՛ երթար.
Թէ քեզ որս պիտի, ես քեզ որս հերիք եմ. մի՛ երթար.

Ա՜հ, մի՞ գուցէ Վերին կամքն էր տնօրինած այսպէս.

Երկնից կամքը երկրիս վրայ անդարձ ու անփոփոխ է:
Սեփանայ սարի գըլուխը ժայռ ու մացառ է.
Քամի մը կը փըչէ, քամի մահաբեր ու սառն է:
Սիամանդոյ, ինձ ճամբայ մի տուր քովդ գալու,
Ճամբայ մի ցոյց տուր, գամ քեզի հետ հոգի տալու:
Փայտատ ու թի բերէք, բերէք պալեր ու գընարներ
չըռըջեցէք,
Խըջէզարէն ու Սիամանդոն մէկտեղ քարերուն տակ
թաղեցէք...:

Այս կ'ըսէ, ու աչքերը կը խըփէ,
Ջինքն ի վայր կը հոսէ.
Մէկ անգամ միայն կ'աւաղէ.
— Ի՛Մ ՍԻԱՄԱՆԴՈՅ...
Եւ Սիամանդոն հազիւ արձագանգ մի կը տայ
— Ի՛Մ ԽԸՋԷԶԱՐԷ...
Եւ երկուքեանն մէկանց կը լռեն...
Կը մեռնին...
Հո՛ն են...:

×

Աւանդութիւնը կ'ըսէ թէ այնտեղը երկու ծաղիկ-ներ կը բուսնին համանըման ամէն գարնան, եւ երկու թիթեռնիկներ կու գան կը թառին ու կը թըռուըռան այդ խորհրդաւոր ծաղկանց շուրջն ու վրան:

●

ԳՈՎԱՍԱՆՔ ԾԱՂԿԱՆՑ

(ՆՈՒԷՐ ԱՌ Հ. ԵՒ Վ. ՄԱՄՈՒՐԵԱՆ)

Հուր սրտաց, քամին հնչեց, եւ բաժանեաց զհողն ի ջրոյն·
Ջուրն սպիտակ է ու աղի· քամին կարմիր կանանչագոյն,
Հուրն գեղին է եւ լեղի, սեաւ եւ թըթու համըն հողոյն:
Հուրն օր է, քամին շաբաթ, ջուրն ալեւոր, հողըն տարւոյն,
Հուրն երեխայ, քամին մանուկ, ջուրն ալեւոր, հողըն մահուն:
Այսպէս չորս են մեր եղանակ, ամառ, աշուն, ձմեռ, գարուն·
Գարուն տարի, ամիսքն են ճիւղ, սեաւ ու սպիտակ պտուղ չարուն:
Երկոտասան ամիսք որ կան, մարտն է խարիսխ հիմըն տարւոյն·
Յորժամ մարտին ամիսն գայ, Տէրն հրաման կու տայ հողոյն·
Հողն ի քնոյն հետ կու զարթի, ջարա (շնորհ) կու տայ բոյս եւ տնկոյն:
Բուսնին գետնէն ի վեր կու գան, կանանչ հագնին բոյսքն բիթուն (ամէնքն):
Ապա օդոյն հրաման կու տայ, որ կը թափէ զցօղն ի յամպոյն·
Ցօղէ աշխարհս ցընծացունէ, դաստուր լինի ծաղկըներուն·
Ծաղկունքն բուսնին հարիւր հազար, ցեղ ցեղ ներկած եւ գոյնըզգոյն·

Դուրլու գուրլու հոտեր ունին, մինն քան զմիւսն սիրուն.
Նախ ձընծաղիկն ու ջրիկտամ, բարդն, խաժուակն յառաջագոյն.
Սոքա չորսըն միաբանին, ու ձայն ածեն ծաղկըներուն.
— Ծաղկո՛ւնք, զարթիք ի խոր քնոյն, քանի՛ պառկիք ներքեւ հողոյն.
Զարթիք, աշխարհս ծաղկեցուցէք, բուրք ի բուրոց անթիւ անհուն:
Ապա բուսան ի ծառն ու տունկն, ծաղկին ծառերն եւ պտղատուն.
Յետեյ բերդօշն ու բոբոռոջն կու ջահաւին ի հետ ամրոյն.
Ցինկըն դեղին ծաղկի, ցընծայ, փայլէ, ծպտայ մէջ ջըրերուն.
Ջուրն ու չայիր չիման ծաղկունք ցնծան ի հետ ձնաբերոյն.
Լեռն ու մարմանդ ծաղիկ դառնայ, ծաղկունք ծաղկին ի սարերուն.
Ծիծաղին սարն ու ձոր ծաղկօք, ծափ զարնեն, ծըփան բուրագոյն:
Կարմիր կակաչն, ալ ու դեղին, մոռ ու մախմուր է զարդարուն.
Սումբուլն մանավուշ է հագել, զըրմըզ է եօթնաղբերանց արիւն.
Հոռոմծաղիկն է փոշոտել, բուսել հետ մոշին մորենւոյն.
Պուտն ու պտուան ու մատուտիկ, եւ այլ ծաղկունք բացուին սիրուն:
Եզընծաղիկն է խիստ դեղին, գոյնըն գունով քան զծիրանւոյն.

Անջրդի տեղըն կու բուսնի, կու ժրանայ ամռան չորըյն.
Ծափն ու ծափծալն ու ծափկոտրուկն կը բուսնի
կարգըն խնկուկոյն.
Նափափն, չինարն ու ըռէհան, հոտեղն անոյշ քանց
ամենուն.
Ղատիփան ալ է ներկուել նըման բեհեզ ու ծիրանւոյն.
Ղարանֆիլն ալ մօռ է հագեր, գոյն գեղեցիկ նարկիզոյն:
Այլ մանր ու մենծ ծաղկունք գովեմ, թուրն ու շահէն
հետ մըշկերոյն.
Աւգեր ծաղիկն ու մամխոպող կու բացուին հետ առու-
ղերուն.
Ծափծափն ծափ տայ ծիծաղի ծիլծափի ծըլոյն թխու-
լուն.
Ծափծափն ծաղկի ծիրանի, խիստ գեղեցիկ է, շատ
սիրուն:
Կաթնուկի ծաղիկն է գեղին, գոյնն է գլուխ գեղիննե-
րուն.
Կոճղեզն ներկած զանավուզ, հաւան չէ միւս գոյննե-
րուն.
Ծափծիլն սպիտակ է հագել, գեղին քաշել վերայ
գլխուն.
Բոլորն ամէն շար են շարուել, հայեցէք ի սպիտակ
շարուն.
Ծիլն ու ծըլուանն ու ծարուրիկն սուրմա են քաշել
աչերուն.
Շատ գոյնզգոյն ներկեր ունին նըման դեղձանի ծա-
ռուրոյն.
Հորոտ մորոտն մաւի ներկած ժանկարի նման սուր-
մայուն:
Հիմի ծաղկունքըն զօրացան, չեմ գիտել ո՞րն է հետ
որուն.

Խառնուել են յիրար կու ցնծան, եւ փառք կու տան
տէրանց Տէրուն։
Տուղտն ու թորթն ու մեղրիկ ծաղիկն նման են ծաղկած
ծառերուն.
Սուտ վարդն բաժնուել յերամէն, խառնուել յերամ
մասուրուն.
Խաշխաշն թագ է բոլորել, գեղեցկացեր հետ թուխ–
մարուն.
Բոլոր գլխոյն ալ է կապեր, մօռ է քաշել վերայ փո–
րուն։
Խըրընդատն ծաղկել ծառովն յընկեր եղել հետ գօջ-
մէրուն։
Ծաղկունքն ամէն յերամ ծողվել ծաղիկ կու տան մե–
ղուներուն։
Բարձէնակին գոյնն է պակաս, հոտիկն անուշ է բէ–
ջարուն,
Քանց ամէնն խոնարհ կու կենայ, կու բուսնի ծաղկու–
նանց հեռուն։
Լեզուակ անուն ծաղիկ մի կայ, որ կը բացուի մէջ
մարգերուն.
Ծաղիկն մօռ մանաւուշ է, նորա երանգն է երկնագոյն։
Շըրվանն ծաղիկն է սպիտակ, մարգն բուսնի հետ
մըրուանուն.
Խոլորձն ջահառի թըփին, պայծառանայ առաւօտուն.
Սինձն, երիցուկն ու եղերթագն կու սպասեն արեւոդ–
ւոյն.
Նոցա երամըն ուրիշ է, որ կը հրջին հետ արեւուն։
Ջատըր ծաղիկն կոճակ ծաղկի հետ արտերուն.
Խընկուկն ու կացնեղէգն խիստ կը բուսնին մէջ քարե–
րուն.

Ակընջուկն ու գառնըդմակն կարօտ են մանուշակին տեսուն.
Հասրաթ են իրար տեսնելու Մուրտն ու Շուշան ու Բրաբիոն:
Սուսամբն կուհաղ է ներկած, գոյնն է գլուխ կարմիրներուն.
Միշտ գեղեցիկ է խիտ պայծառ, բուսնի պաղպըխուրներուն.
խաժն ու խալիճճն ու լալազարն, հոտիկն անուշ եւ զարդարուն.
Վարդն ու գուլվարդն ու հարզէ վարդ (յարգուարթ). երամ ծանր է վարդերուն:
Ոսկեծաղիկն սուրաթ առեր գեղեցկացել լաւուն լաւուն.
Բոլոր գլխոյն ճըղայ շարել, սա է ծաղկանց Եէնիչարուն (Եէնիչէրի):
Շարշարուրիկ ծաղիկ մի կայ դեղին հագել հետ ընկերուն.
Թըփերն ամէն պաղամ ներկել, նորա ոլոքն որպէս տորոն:
Գուլխասպահ ծաղիկ մի կայ որ չի բացուիր զօրն արեւուն.
Արեւմըտուն յետ կու բացուի, պայծառանայ մէջ գիշերուն,
Գուգէլ անուն ծաղիկ մի կայ, որ դեղ է ամէն անբըժիշկ ցաւերուն.
Փենաի ծաղիկն ու լօշտակն Աստուած դեղ տուեալ դարդերուն.
խազալն թուփն է բոլորել, բուսել է հետ ճշնարօրուն:
Գինարբբին հոտն է գովական, շատոնք հասրաթ են նորա հոտոյն

Ծաղիկն փունջ փունջ է եղել, մարդ չի յագել իւր կարօտոյն·
Ճաշքինար ծաղիկն է խիստ հոտով, դեղին է նման զաֆրանոյն·
Բարձր լեռներն կու բուսնի զաֆրանըն հետ կնքաւորոյն:
Զամբիւղ ծաղիկն հոտով անուշ, ինքն սպիտակ է կարմրագոյն·
Նարդոս ծաղիկն ու կինամոն, լըցուել են Աստուծոյ բարւոյն·
Խաս բուրթիա ծաղիկն որ կայ, ձեռքն չի գալ ջառահներուն·
Ամէն սահմանը չի գտնուիլ, ղիյմաթ չունի ինքն իւր տեղւոյն:
Այն Սապուսան ծաղիկն որ կայ խակի վար չիգալ լեռներուն·
Վառ կապուտ է, հոտըն սակաւ, արմատըն դեղ է եղներուն·
Այն Անթառամ ծաղիկն որ կայ, ծաղիկ ծաղկել ծաղկըներուն,
Ամառ ձմեռ չի չորանալ, հինն է պայծառ նըման նորոյն:
Այն Նունուֆար ծաղիկն որ կայ, բուսնի յատակըս ծովերուն·
Օձերն գլինքն կու պահեն, մարդ չի քաղել նոցա ահուն·
Այն Բուրաղան ծաղիկն որ կայ, վարդ է չարել հետ խունկերուն·
Կարմիր խնծոր թագաւորաց, ոսկի բուրվառ խունկով լեցուն·
Այն Բալասան ծաղիկն որ կայ, երամն շատ է·

Սուրբ մեռոնին մակարդն այն է, որ կարդան ի մէջ
գրերոյն.

Այն Գոհար վարդ ծաղիկն որ կայ, գեղեցկացել պայ-
ծառագոյն.

Երբոր բացուի վերեւ Թըփին, գեղեցիկ է ու խիստ
սիրուն:

Այն Համասփիւռ ծաղիկն որ կայ, ծաղկել ծառովն հա-
զարագոյն.

Կոյր աչերուն լոյս կու բերէ, թէ՛ Տէրն տայ Ադա-
մորդւոյն.

Երկոտասան արմատ ունի, բուսնի երկոտասան տար-
ւոյն.

Ամէն Թըփին գոյն մի ծաղիկ, մարդ կու մայլի անուշ
հոտոյն:

Արճայիկ օձն է թագաւոր ինքն սպիտակ որպէս ըղձիւն.
Համասփիւռին կու հետեւի, եւ զօրութիւն կ'առնու
հոտոյն:

Սալաձորցի սարկաւագ որբ Դաւիթն եմ անգէտ
գրոց բաներուն.

Կեանքըս նըման ծաղկըներուն, որ կը բացուի առա-
ւօտուն եւ չորանայ մինչ իրիկուն,
Շատ դատեցայ թէ գըլխըն առնում ծաղկըներուն,
Ծաղկունք որ զարդ են աշխարհիս, օրինակ երկնից
աստղերուն.

Սակաւ ծաղկունքս գովեցի, բազումն մնաց վարպետ-
ներուն:

ԳՈՎԱՍԱՆՔ ԲԻՒԼԲԻՒԼԻՆ ԵՒ ՎԱՐԴԻՆ

Ականջ դրէք բանիս որ պատուական է.
Հոգւոյ այլ եւ մարմնոյ ուրախական է.
Գովեմ զգոյնըն վարդին որ աննման է,
Զբլբուլն ի հետ նորա որ քաղցրաձայն է:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Ի սէ՛ր քո ես եկի. Զի սէր քեզ ունեմ
Սիրով քո տո՛ւր տեղի,

Եւ սէրն սրբութեան ի քեզ բնակի.
Սիրով քո զարդարին ծաղկունքն ի յերկրի:
Վարդն ի բլբուլն ասաց.
— Թռչո՛ւն գովելի. Ո՞րպէս մտօք իմ բանից քոյ հաւան լինի.
Դու ես հաւք երկնից, եւ ես բոյս երկրի.
Զիա՞րդ իմ սէրս եւ քոյդ միաբանեսցի:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Իմ բանիս լսէ՛. որ քո սիրտն իմ սիրոյս վկայէ.
Ես ցօղ բերեմ յերկնից որ զքեզ զարդարէ,
Յայնժամ իմ սէրս եւ քոյդ միաբանեալ է:

Վարդն բլբուլին զայս պատասխան առնէ.
— Վախե՛մ. թէ հետ ցօղոյն կայծակ իջանէ.
Եւ զիմ պայծառ տերեւս հրով տոչորէ.
Ծաղկանց ամենայնի նախատինք զիս առնէ:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Խօսից իմ դու լո՛ւր. Որ ես քեզ ցուցանեմ սիրոյ մեծ
աղբիւր.
Որ զդեղ յիւր ակն պահէ կանանչ եւ մաքուր.
Եւ ամենայն ծաղկանց արբուցանես ջուր:

Վարդն բլբուլին յայնժամ զայս ջուղաբըս ետուր.
— Ե՛ս. Բանից քոյին ոչ հաւանիմ զիւր.
Վախեմ թէ որդ խաղայ այն աղբիւրին ջուր,
Տերեւներէս առնէ զիս թափուր:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Քե՛զ. Ամր լինիմ եւ հովանի ես,
Արեգական տօթոյն պահեմ զքեզ,
Եւ քաղցրագոյն օդով սնուցանեմ զքեզ:

Վարդն ի բլբուլն ասաց.
— Ի քէն վախե՛մ ես. Զի մի՛ որոտալովդ ինձ ահ ար-
կանես,
Ի գեղեցիկ գունոյս թառամեցուցանես,
Եւ ամենայն ծաղկանց զրոյց լինիմ ես:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Ես առաւօ՛տ եմ. Զլոյսն արեգական վերա քո ծա-
գեմ,
Ազգի ազգի գունով զքեզ զարդարեմ,
Ծաղկանց ամենայնի պարծանք ցուցանեմ:

Վարդն ի բլբուլն ասաց.
— Ես զիմակա՛ց չեմ. Ի ծագմանէ լուսոյն զողալով
սարսեմ,

Վախեմ թէ զարեգակն առ խս տեսանեմ,
Կոկոնն իմ գեղեցիկ յինէն թօթափեմ:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Դու զովելի՛ ես. Զի ամենայն ծաղկանց ցանկալի
ես,
Տեսով քո արբեցայ զերդ ըզգինով ես,
Արարիչն Աստուած կանանչ պահէ զքեզ:

Վարդն ի բլբուլն ասաց.
— Գեղեցկաձա՛յն ես. Որ զամենայն մարդիկ դու ու-
րախ առնես,
Ազգի ազգի գունով դու եղանակես,
Թռչնոց ամենայնի գեղ պարծանաց ես:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Դու գեղ ցաւո՛ց ես. Որ զամենայն հիւանդ սիրով
բժշկես,
Ո՞վ ոք ցաւ ունիցի եւ ոչ յիշէ զքեզ,
Յետոյ փոշիմանի, 'ւ ոչ գտանէ զքեզ:

Վարդն ի բլբուլն ասաց.
— Թռչո՛ւն դու աղուոր. Ուստի՞ ունիս զայս ձայն քաջ
եւ զօրաւոր,
Զիս զարմացուցիր խօսիւքդ ահաւոր,
Կարծեմ թէ այլ չկայ քեզ նմանաւոր:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Մեզ թագաւո՛ր կայ. Որ ամենայն թռչնոց պարգեւք
նա կու տայ,
Եթէ հաւան լինիս գալստեան նորա,
Նա՛ երկինք եւ երկիր քեզ երանի՛ տայ:

Վարդն ի բլբուլն ասաց․
— Քեզ երանե՜մ ես․ Որ այն Թագաւորին դու սպասա-
ւոր ես,
Եւ ի նմանէ այն ցեղ շնորհք առնես,
Որ ի քոյ տեսութիւնդ զիս մոռացնես։

Բլբուլն ի վարդն ասաց պատասխանելով․
— Եթէ՜․ Լսող լինիս բանից իմ սիրով,
Նա ամենայն երկիր հոգւով եւ մարմնով
Ծառայ քեզ լինիցին, երանի՜ տալով։

Վարդն ի բլբուլն ասաց․
— Խօսի՜ր․ Զոր ինչ եւ կամիս, զի խօսից քոյին փա-
փաքի հոգիս,
Յինէն մի՛ Թագուցաներ զինչ բան որ ունիս,
Եթէ կամիս սիրով հաւան առնել զիս։

Բլբուլն ի վարդն ասաց․
— Տա՜մ քեզ աւետիս․ Զի մեծ Թագաւորի դարպաս
դու լինիս,
Եւ ի ձայնէ իմմէ հանապազ գովիս,
Եւ յամենայն Թռչնոց միշտ փառաբանիս։

Վարդն ի բլբուլն ասաց․
— Հոգիս իմ ցանկա՜յ․ Որ այն Թագաւորին լինիցիմ
ծառայ,
Այլ երկնչիմ յահէ փառաց նորա,
Զոր դու ինձ ասացեր, նա՛ ո՞վ դիմանայ։

Բլբուլն ի վարդն ասաց․

— Դու մի՛ վախնար. Չի նա կամենայ զքեզ իւրեան դադար,
Այլ ուրախացի՛ր սիրով ծածկաբար,
Եթէ նորա կամիս լինել տեղի եւ տաճար:

Վարդն ի բլբուլն ասաց.
— Քեզ հաւա՛ն եղէ. Այլ գործ քո Թագաւորին դու ինծի պատմէ՛,
Թէ ի՞նչ արուեստ ունի, կամ ո՞ր ձեւով է,
Քան զքեզ է՞ քաղցրաձայն, թէ այլ փառաւոր է:

Բլբուլն գայս ետուր պատասխան վարդին.
— Չկա՛յ այլ. Նըմանակ իմ Թագաւորին
Ոչ ոք կարէ գիտել ըզգործըս նորին,
Ո՛չ ի յերկրաւորաց եւ ո՛չ երկնային:

Վարդն ի բլբուլն ասաց.
Դուն գա՛յս ինձ ասա. Ե՛րբ գայ այն Թագաւորն, ինձ իմա՛ց արա,
Որ ես տեղ պատրաստեմ արժանի նորա,
Որ ընդունիմ սիրով, եւ իմ սրտին մէջ հանգչի նա:

Բլբուլն ի վարդն ասաց.
— Քեզ աւե՛մ, լսէ՛. Քան զքո ծաղկիլն յառաջ նա զքեզ ընտրեալ է,
Եւ իւր բնակութեան տեղ տեղ պատրաստեալ է,
Որ այժմ ի քեզ իջեալ գործ մեծ կատարէ:

Բլբուլն՝ Գաբրիէլ հրեշտակապետն է.
Վարդն՝ Մարիամ Աստուածածինն է,
Թագաւորն երկնաւոր՝ Յիսուս Քրիստոս է,
Որ անթառամ վարդին մարմին առեալ է:

Ես Առաքել մեղօք լցեալ աշխարհի,
Որ ըզբլբուլն ընդ վարդն սակաւ գովեցի,
Եւ Գաբրիէլ հրեշտակն օրինակեցի,
Եւ ի կոյսն Մարիամ ծընողն Յիսուսի։
Զձեզ աղաչեմ, ով ոք բանիս հանդիպի,
Եղանակէ սիրով ձայնին բերկրալի,
Յիշեսցէ զիս եւ տասցէ՝ Աստուած ողորմի (1)։

---

(1) Այս, եւ «Գովասանք ծաղկանց» երգերն օրինակ-եալ են ձեռագրէ, ի Զարսանեագ, փէրի գիւղ։

ԱԿՆԱՑ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԽՐԳԵՐ

ՀԱՐՍՆԱՌ ԳՆԱՑՈՂ ԿԱՆԱՅՔ ԱՌ ՀԱՐՍՆ ԱՍԵՆ

Մենք, այ աղուոր աչխի էկեր ենք ձերը,
Քեզ հազար նազերով տի տանինք մերը:
Էկու քեզի մերը տանինք նազերով,
Պահենք չարէն չապիկով, ազիզ լաթերով,
Ճակատդ ճրուերով, ականջդ օղերով:
Կախթով լաթ ենք բերել, կռնակդ անցուր:
Քեզ տանիլ ենք էկեր, մարիկդ լացուր,
Ոտքդ խառէմլը է, դուն մեզ խնդացուր:

Ա՛յ իմ հարսաի դըստրիկ, ելի կայնէ ոտ կաց ի վըրայ,
Քալէ մանտրտիկ քալէ, քու աղուոր բօյիկդ երեւայ:
Ականջդ յիս արէ, ի՛նչ ըսեմ ամուր ծըրարէ,
Ուր գան, ուր հազար ըսեն, հազրէն մէկ խօսք լսէ, ըսէ,
Ան ալ չը գիտեմ ըսէ, դուն քեզ հազար չարէն ազատէ:
Մեր տունն Աստուծոյ շինած, Աստուծոյ շինածն ու օրհնած,
Հայր Աբրահամու քարէն, մարգըրիտէն թէմէլը ձըգած:

Բաղնեց դուռը զարկին սազը
Տալուըտաքն քաշեն նազը,
Ներուըտաքդ հիւսեն մազը:
Նազ ըրէ, նազըդ վերցընեմ,
Ալա թօզ չաքար կերցընեմ,
Ջուր ուզես, շարբաթ խըմցընեմ:

ՄԵԿՆԵԼՈՒ ՊԱՀՈՒՆ ԱՍԵՆ

Խընամի, տունըդ չէն կենայ,
Այս դըռնակըդ բաց մընայ,
Ջուխտակ ողջիկըդ ապրած կենայ:
Մի՛լար, մարիկ, մի՛ լար, ես ալեւ տի գամ, աշխի՛,
նայ նայ նայ,
Ութ օրն ուր լմննայ, ընկերովս տի գամ, աշխի նայ
նայ նայ.
Տարին ուր լմննայ, դըրկովս տի գամ. աշխի նայ նայ
նայ:

ԱՌ ԴՐԱՆ ՓԵՍԱՅԻՆ ԱՍԵՆ

Բարով եկիր, դուն բարկ արեւ,
Ծագեցար դուն մեր տան վերեւ.
Դուն ո՞ւր էիր, ուր խա դոար,
Հէյ, Աղամայ բաղչան մըտար.
Բուլբուլ եղար վարդիս դիմաց,
Ելիր, էկուր կամաց կամաց:
Երկու կաքվուկ կայեն բունը,
Կը թափէր երեսին դոյնը,
Դուն ես մեր տան ոսկի սիւնը:

Ժամէն կու գայ ջուխտ մի Փիտան,
Ելնենք տեսնենք մե՞րը կու գան,
Առնենք ելնենք վերը օտան:
Բարով եկիր դուն ի մերը,
Առջիդ քաշեմ սերն ու մեղրը:

Բալէ՛, հարմնուկ, քալէ՛ հարմնուկ,
Վըրայ խալուն քալէ՛, հարմնուկ,
Բալէ՛ ու մանտրտիկ քալէ՛,
Ալուկ փէշերըդ վեր ծալէ:

Թագւորի մար, դուն դուրս էկուր,
Քու թագւոր որդիդ էկեր է,
Քեզի կաքվու ձագ բերեր է,
Թէք գնացեր, ջուխտ էկեր է:
Թագւոր, գովեմ գլխուդ ի վար,
Խաջ ես քո բոյիկդ ըսեմ,
Ուր սէլվիյի ծառ կու նմանի:
Անկէց ես քու երեսդ ըսեմ,
Ուր սըրմայի թել կու նմանի:
Հա՛յ իմ հա՛յ աննըման ազւոր:

Ազւոր, քեզ ո՞վ մարն է բերեր,
Ան թուխ աչեր մարն է բերեր,
Մարն է բերեր մեզի համար,
Մենք ենք եկեր քեզի համար:

ՕՐՕՐ

Օրօր, օրօր, քուն ունիս,
Պէչիկթաշը տուն ունիս, է՛, է՛, է՛:
Մարգըրտէ եօրղան ունիս,
Ջէւահիրէ բարձ ունիս, է՛, է՛, է՛:
Ոսկի օրրոց, կապ ունիս,
Շարուքընար չոր ունիս, է՛, է՛, է՛:
Օրօր կապեմ կախ օրրան,
Ծառէ ծառ չուքեր վրան, է՛, է՛, է՛:
Ծառի չուքեր վրա՛յ էկէք,

Շո՛ւք արէք, որ աշխուս քնանայ, է՛, է՛, է՛:

Օրօր օրօր օրերուդ,
Թեւս դէմ բերեմ չարերուդ:
Զարխափան չարերդ խափանէ,
Աստուածամայր արեւդ պահէ:

Բաղչայիդ բաղչըպանն եմ ես,
Բա՛ց դըռնակդ ուր մտնեմ ներս:
Մըտնեմ վարդ ու նուռ քաղեմ,
Արմաղան զըկեմ ղարիբիս:

Օր օր, իմ տըղաս ու խաս,
Քեզ աղուորին սափառն է դըրած,
Ջաւկէ զատիկ ի դուրս է հանած,
Արեգական չէ ցըցուցած:

Դուն քուն չես ու այըխ ես,
Լաճուռ չալի լայըխ ես,
Երեսդ երեք բէնի ունիս,
Թագըւորի լայըխ ես:

Բուլբուլն ի վարդի չըքոյն
Կուտ կ'ուտէ 'ւ արցունք կու թափէ,
Կուտ կ'ուտէ 'ւ արցունք կու թափէ,
Իր բընիկն ու տեղիկը կ'ուզէ:

Օրօր օրօր քընէր ես,
Ծածկեր եմ քըրտընէր ես.
Երեսիդ չարը դէն տանիմ,
Վարդի նըման բացուէր ես:

Վարդերու անոյշ հոտոյն
Գառկէ՛՝ւ եղէ՛ր անոյշ քուն։

ՀՈՎԵՐՈՎ ՍԷՐ

Հովե՛ր, տարուբե՛ր հովեր,
Եղբօրմէս մէյ գըրիկ բե՛ր.
Թէ գըրին տալապ չանէ,
Բարչամէն թելիկ մի բե՛ր։

Հովե՛ր, տարուբե՛ր հովեր,
Գէշը տար աղուորը բե՛ր.
Գէշին տէրը արեւ չունի,
Աղուորին գիշերն· է արեւ։

Գացէ՛ք մեծ վարպետ բերէք,
Աղուորին խարդան ձեւեցէ՛ք
Արեգակն երես արէ՛ք,
Լուսընկան աստառ ձեւեցէ՛ք։

Ինչ սէր կայ դըրէք սուզակ
Ինչ անոյշ բաներ կան՝ կօճակ։

ԱՆՏՈՒՆԻ (1)

Ա՜յ իմ կարօտով նարուկ, սիրունիկ,
Որ գացած տասն երկու տարի,
Ի՞նչըխ եմ կարօտացեր,
Երեսին չէւքէթն եմ մոռցեր:
Ոչ աչերս քեզ տեսեր,
Ոչ լեզուս հետդ խօսաթեր:
Տարին տասներկու ամիս,
Դուն ծովուն եալըն կու կենաս,
Ծովը մահանայ կ'ընես,
Իս քենէ հարամթ կու պահես:
Թեւերս կարմունջ կապեմ,
Ծովեզերէն անցնիս ու գաս,
Եկոր քեզ բաղնիք տանիմ,
Սըրմայ թէլ՝ բարչամդ վլանամ,
Երբ բաղնիքէն ուր ելլես,
Ղալորընաս ու մեր տունը գաս.
Փըռեմ ապրուշում խալի,
Որ գործած տասն երկու տարի:
Ձըգեմ խուչ թիւյլու տօշակ,
Թուլբանտէն չարշաֆն ի վրան,

---

(1) Շատ կան Ակնայ մէջ այս տեսակ ընտիր երգեր, որ կը կոչուին «Անտունի»: Արդեօք Անտօնի՞, հեղինակին անուամբ, թէ ընտանի, կամ Անտունի՝ իբր տան կինն առ իր էրիկն, կամ նշանած աղջիկն առ իր խօսեցեալն, որոց երկար պանդխտութիւնը առիթ տուեր այսպէս սրտագին կարօտով երգեր յօրինելու:

Շարեմ շարասար բարձեր,
Սըրմայ պօրտ եօրղանն ի վրայ,
Զարդարեմ ոսկի սեղնակ,
Խաչ խոտրւած կաքաւն ի վրայ․
Բերեմ նռան հատ գինի
Ուր գոյնը գոյնդ կու նմանի,
Խըմէ, ուր ըսեմ, անուշ,
Ինչ անուշ է սէրն ու գինին:
Սէրը սիրողին վայլէ,
Գինինը անուշ խմողաց:

* * *

Եկին ու բերին խաբար,
Թունդ ելէր քունկինդ ու կու գայ,
Ամէն բանս ի տան գըրի,
Ջուր դրի, մազըս լուացի:
Հագայ ձարէ ձար շապիկ,
Կապեցի լահոռ շալ գօտիս․
Դըրմակ մը նըռան գինի
Ես առի ու դէմը գնացի:
Դուշմանս ալ երեսս ելաւ․
— Ո՛ւր կ՚երթաս, ան քու մարդը չէ:
Թուլցաւ շահէնն ի բազկէս,
Թափեցաւ նռան հատ գինիս:
— Դուշման, աչքդ կոյր կենայ,
Նենգաւոր լեզուդ չորանայ:
Մէկ մ՚ալ դուշման տեսնամ,
Տի հանեմ չախուեկս ի ջոբէս,
Տի մորթեմ սեւ ոչխըրի պէս,
Արիւնը պատէհն առնեմ,

Տի խմեմ անապակ գինու պէս,
Մըսիկն ալ քաբաբ տ'ընեմ,
Տի ուտեմ կաքւու մըսի պէս:
Բիւլբիւլ, վարդին սիրոյն,
Ձայներով Փիղան կու անէ,
Ես ալ իմ մարդուս սիրոյն
Եղեր եմ բիւլբիւլի նման:
Ա՛յ իմ սիրական մարդուկ,
Կարօտ եմ քու լուս երեսիդ,
Ծարւեր եմ սիրոյ գինիդ,
Փափկեր եմ եղնիկի նման.
Սէրդ անուշ, խօսքունքդ անուշ,
Կու խօսիս լուսունկայ լուսուն,
Հոտդ ալ անուշ կու բուրէ,
Գարնան ծաղկունուց նման:
Ա՛յ իմ կարօտով մարդուկ,
Բոյլիկդ է սալւի նման,
Ելեր է արեւի մէջս,
Բարշամդ սըրմայ թել նման.
Թուխ աչքդ ու քէման ընքուիդ,
Թարթիչուիդ լուսունկի նման,
Պուկունքդ է ալ քիրազի,
Սանամչայ բույունդ ի վրան:
Այս հասրաթէս էրեցայ,
Եուվառող բիւլբիւլի նման,
Բալակ ցաւով մաշեցայ,
Ձգուելի եարայիս մէհլամ:
Գացեր թեւերուս ուժը,
Նւաղեր աչքերուս լուսը,

Դուն ես իմ սրտիս յուսը,
Դուն ես իմ աչքերուս լուսը:
Եկոր նստինք միասին,
Սէր անենք անուշ խօսքերով,
Աշէկ ու կէնձ օրերնիս
Զանցունենք զարտ ու ցաւերով:
Բարձր սարերու հովեր,
Ուր իջեր գոնակն է ծեծեր,
Նորուկ ջահելուկ հարսնուկ,
Ուր իջեր գոնակն է բացեր,
Տեսեր ուր իր մարդը չէ,
Մալուլեր ու եա է դարձեր:
Կեսրակը հարցմունք արեր.
— Հարսնուկ, քու ո՞ր տեղդ է ցաւցեր:
— Մարիկ, քու որդւոյդ սիրուն
Իմ ամէն տեղիկս է ցաւցեր:
— Մի՛ լար, ջահելուկ հարսնուկ,
Գիր կ՚անեմ, որդիս կ՚բերեմ:
— Գիր անես որդիդ բերես,
Աստուծոյ լուսուն տիրանաս,
Գիր չանես որդիդ չ՚բերես,
Կ՚անիծեմ ուր քար կու դառնաս:
Լուսիկ մը փրթաւ սարէն,
Կէսն է խոռ, ու կէսն է բոլոր:
— Լուսիկ, դուն լուսով կենաս,
Թէ կենաս պահիկ մ՚հուտայ,
Երկու խօսք գանգատ ունիմ,
Գանգտիմ, դուն ալւայ գնա:
Գնա՛ զարիբիս ըսէ,
Զ՚կենայ ու ելլէ գայ:

— Խօսկունքդ գլխուս վրայ,
Դուռը չ'գիտեմ ղարիբիդ:
— Եկոր նշանով ցոյց տամ,
Բարձր պատ ու ծառն ի վրան,
Նստեր է ծառին շուքը,
Նուշ դրեր, շաքար կու ծախէ
Ամէնուն աժան աժան,
Իս մոռցեր, նո՛ւշ կը ծախէ:

ՄԱՀԵՐԳ (1)

Ճամբորդ կու գայ, ի՞նչ գումաշ ու բեռներ կայ,
Արանիս ալ ի՞նչ ծովեր ու լեռներ կայ:
Տուն էկո՛ւր, տուն էկո՛ւր, աղա՛ս, տուն էկո՛ւր,
Աշխարհս ոչինչ է, մեզի ալ մեռնիլ կայ:

Հաներ ես կարմիր, հագեր ես ալըդ,
Ես քենէ կարօտ եմ, ի՞նչ անեմ մալըդ,
Սաղլըղով չէր բերեր քու բերող մարըդ,
Զարկիր, կրակ տուիր, կ'էրիմ, կու վառիմ,
Ջըրի պէս ծարւեր եմ, ճամբուդ կու նայիմ:

Հարիկ էիր, իրաւ կ'ըսէիր, չառնէիր առիկն ի առէն,
Առիկն ի առէն առնէիր, քու որդիկդ չար գրողէն:
Ա՛յ իմ սեւ աչեր սուրմայ, բօյաջին ո՞ւր տեղ կու կենայ,
Քու եաշմաղդ որ սեւ ներկեց, ան գլխէ թէ իր տի մնա՞յ:

(1) Ակնայ Ապուշեխ եւ Կամրկապ գիւղերու ժողովրդեան կանանց իրենց ղարիբին եւ սիրելեաց վրայ:

Ղարիբ մեռար, ղարիբ թաղեցին,
Ղարիբ լացին, հողիկդ ի վրադ․
Եկին օտար մարեր ի վըրադ
Եկին օտար քուրեր ի վըրադ։

Եկին ու վա՛յ բերին բերողին (ծնողին),
Վա՛յ բերողին, վա՛յ մեծցնողին,
Վա՜յ լուսալուս արթուն կեցողին,
Մաղկատը սըրտին, ծիծը տուողին։

— Եամա՛ն, եաման, իս Ուսկուտար անցուցէ՛ք,
Սեւ ծովը ճեղքեցէ՛ք, ճամբան ցըցուեցէք,
Տարէ՛ք իմ մօրըս դըռնակ, վա՛ր դրէք, պօհ մի լացէք,
Եարուկս ալ վա՛ր իջուցէք, հիւսած ծամեր քակեցէ՛ք,
Քուրուկս ալ վա՛ր բերէք, ծարուրած աչքն լացուցէ՛ք։
Զրկա՜ն... չեն, գա՜ր...
Անտերունչ տարէք թաղեցէ՛ք։

— Երթամ քաջ արծիւ լինիմ, գամ թառիմ քու պա-
տուհանին.
Ինչաքը Փիղան անեմ, Փիղանէս քունըս չի տանի։
Եկո՛ւ, որդեակ, գիս մի՛ լացուներ. ես չատ եմ լացեր,
ա՛լ մի լացուներ,
Իմ ղարղլու սրտիկս մի՛ թնղացուներ։

Աչերս են չարղախի նըման,
Մէջըն երկու աղբար կու կենան։
Մեծիս մեծ արեւ կ՚ըսեն,
Պզտիկին՝ արեւ լուսընկան։
Նուրին ու Թուրին կ՚ըսեն. Անի մեր բաղչան լինի.

Նուրին ու Թուրին կոտրտեցաւ, պզտիկ Ջրէկ վաթուր–
թեցաւ:
Ալ չեմ երթար բաղչան վարդենւոյն տակը·
Ինկեր է մատնիկս ջէւահիր ակը:
Ա՜հ, ի՜նչ դժուար ցաւ է ջօլխմին խակը:

Եկին ու բերին խաբար, Սուրբ Յակոբ (1) օտա կը
չինէ,
Նստեր օտային վերեւ, նուշ դրեր շաքար կը ծախէ:

Եկո՛ւ քեզ բաղչան թաղենք, ու մաղենք հողդ շարերով,
Հողիդ վըրան ծաղիկ ցանենք, ցանկենք կարմիր վար–
դերով:

Սուրբ Յակոբայ վրան չօքեր է դուման,
Պառկեր է սրտիկս կու կանչէ եամա՜ն,
Եամա՜ն մարիկ, եամա՜ն գլխ տակէ վերցուցէ՛ք,
Աջ ու ձախ գլուխս, կողերուս բարձիկներ դրէ՛ք:

Ջուխտակ ազաւնոյ նըման էր երեսիդ բէնկը,
Ո՛չ Հայոգւոյն մէջ կար, ոչ Տաճիկն ունէր ոչ Ֆրէնկը·
Ղալամքեար չէր որ հանէր անըման ըռանդ:

Լա՛մ, դահերու վրայ հերկ անեմ,
Արցունքովս ցօղեմ, ցաւերովս ցանեմ:

(1) Այն կողմերու գերեզմանատները սուրբ Յակոբայ անունով մատուռ մը ունին: Նուշ ու շաքար բաժնել թաղմանէն զկնի՝ գերեզմանատան մէջը, ծանուցեալ սովորութիւն մ'է:

Սուրբ Աստուածածնայ ծոցէն մարգրիտ մի ինկեր, գին չունի,
Երնե՛կ գտնողին, վա՛յ էկեր կորուսողին։
— Եկիք նէ բարով եկիք, իմ որդիէս խաբրիկ մի բերի՞ք.
Խաբրիկ մի գալուն բերէ՛ք աչերս լալուն կըտրի, սրտիկս թալկըտելուն:
Իմ որդեկս չէ մեռեր, սուրբ Յակոբ ուխտ է գընացեր,
Ի՛նչ վարդ կայ՝ գըլխուն է դըրեր, մանուշկին հոտոյն է քնացեր:

Գընա ու գընամ՝ կ'ըսեմ. ես կ'երթամ, բարով մնա՝ կ'ըսեմ,
Ամէնքըդ հաւասար նստէ՛ք, իմ տեղս խո՛ռ պահեցէք.
Ամէնուդ խըմածն անուշ, իմինը իմ տեղս վաթեցէ՛ք:
— Շարուած մարգրիտ էիր, կտրեցար կուտ կուտ եղար.
Քուրուըտա՛նք, վրայ եկէ՛ք, ժողվեցէ՛ք որ ալ չի մնայ:

Մեռաւ, վախաթ ըրաւ, զիս ճամբուն վրայ թաղեցէ՛ք,
Քարըս նշանո՛վ դրէք, ցաւերս վըրան գըրեցէք.
Երբ որդեկս թագաւոր անէք, աչօք անեմ դուք նայեցէ՛ք:
— Լացէ՛ք, մա՛րեր, լացէ՛ք, քո՛ւրեր. հոս մարդ չկայ որ չէ մեռեր.
Քեզի մոոր մատղաշ որդով, մեզի մեռեր մեր տանուտէր:
— Եկո՛ւր երթանք լեռնակն ի վեր, ես կանչելով, դուն փնտռելով,
Զինքն չը գտնանք, հող կը գտնանք, իր ապառաժ քարըն համբուրենք:

— Այս գիշեր ես դուրս ելայ, ողորմուկ ձա՛յն մի կու գար.
Ցածցայ ու ականջ դրի, իմ որդեկիս ձայնն էր կու գար:
Տարէ՛ք հօր ու մօր գլոնակ վա՛ր դրէք, պօհ մի լացէ՛ք,
Գառնուկ մարիկը վա՛ր կանչեցէք, մարած աչքերը լա-ցուցէք:
— Օտար բաղչային վրայ, պաղ աղբիւր, ոսկի լուլայ,
Տեսէ՛ք թէ ինչո՞ւ կու լայ, Տէրն է զարկեր, նստեր կու լայ:
Նոր էի դրեր մատնիկն ի մատ,
Ֆալակ չը թողուց առնէի մուրատ:
— Եղբայրն է քրոջ սրտին երակ, անուշ խօսի ու տայ մուրատ:
Եղբա՞յրն անուշ թէ եղբօրդին, երկուքը մէկ կու նըմանին:
Մարիկն է տաքուկ հացիկ, ով որ ուտէ կշտացընէ.
Հայրիկն է անպակ գինի, ով որ խմէ հանգչեցնէ:

ՈՒՂՂԵԱԼ «ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄԼՈՅՆ»

«... Հասկացողին շատ քնքոյշ է Գաւառական ժողովրդական երգ, մանաւանդ երբ ընկերներու բերնով կ'երգուի եւ երբ կորիճ երիտասարդներէ եւ կարմիր հարսներէ խառն կը պարեն, թեւ թեւի, ծնկածալ, միջքածալ, գլխաճօճան: Մենք տեսանք այդ պարը Շատախցի Հայերով, Հոգւոց Վանից տանիքը, գիշերուան լուսնակով, ուր եկած էին յուխտ, եւ Հոգւոյ ուրախութեան հետ քիչ մ'ալ մարմնաւոր ուրախութիւն կ'ընէին: Չեմ կրնար պատմել այն տպաւորութիւնն զոր կրեցի այդ տեսարանին առջեւ: Անձեւացեաց ապառաժ-

ներով պատուած խոր ձորի մը մէջը, Տիգրիս ծըւծը-ւալով ալէփայլիկ կ'ընթանայ մօտէն· Տրդատը յաւիտենական քունը կը ննջէ ջրին ափը· հոն է գերեզմանը։ Հի՞ն, մթի՞ն, ահաւո՞ր, լռի՞ն, բայց եւ հրաշիւք մեծահռչակ Վանքն է Հոգւոց կամ Հոգեաց։ Իւր չորս կողմը գազանները եւ աւազակները· կամարին տակ՝ ժամ ու պատարագի սեղան· տանիքը երամ մի կայտառ անձինք, ծեր, պատանւ, այր, կին, հարս ու փեսայ, աղջիկ, մանրիկ ճժեր, խաղ, պար, մառաղ, կրակ, բոց, մուխ, ողոց ճըղվըժոց, խորովածի հոտն ու ըրժըրժոց։ — Մէկ կողմն ալ կային բազմեալ քահանայ, վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս, եւայլն»։

ՄՈԿԱՑԻ ՀԱՅՈՑ ՀԱՐՍԱՆԵԱՑ ՊԱՐ

Մոկաց սարեր պէտ պէտ քարեր,
Դէլ չէր լուսցեր, արեւն առեր։
Հէվարն իրե, բերի գահ է,
Ջուար սարէք եարոջս, վա՛հ է։
Աչկունք կուլէր, սիրան ուրախ էր·
Սըրախն մեռնիմ սէր կէր ի նե,
Աչից մեռնիմ գեղ կէր ի նե։
Տ'ելնեմ սարեր սէյրան ա'էնեմ,
Տ'իջնեմ կալեր հէրան ա'էնեմ։
Սիրեղ չ'ունիմ պատճառ կ'էնեմ,
Ագար լաճու խոզին խանեմ։
Ես քե մեռնիմ ապտալի ծուռ,
Բաս այ կան գաս չիւար ու ծուռ։
Ախչար էսեն քո եարն իրե,
Ալամն էսեն քո եարն իրե։
— Թըզար իրե·— Իմ տուն չ'իրե։

Այնման կարճ օր էրկէն գիշեր,
Զում լոս պառկիմ ձիկ քուն չի գէր:
Ախշար էսեն քո եար ծուռ էր,
Ալամ էսեն քո եար ծուռ էր:
— Խըղճար ծուռ էր. — Մէջ իմ սրտին լալ ու դուր էր,
Ջիկ կը կըպչէր ես քե գընէր:
Բարակ մանած, էրկէն խինած,
Մանեմ մանեմ, կըտրաւ մանած:
Գարուն էրե խինած չը կայ,
Ես քո սիրուն վառայ մըրկայ,
Տակ մ՚էլ կըտրեմ, բուռ մ՚էլ փընջեմ,
Ագար լաճուն սէր օրօխկեմ:
Տօ՛ ագար լաճ... տօ՛ Մոկացի...
Վա՛յ Մոկացի... Թա՛ւ Մոկացի...:
Հինգ էծ ունիմ եօթ ուլթն ուլով,
Կաթ կը կթեմ գոմշու տիկով:
Էգի մ՚ունիմ քե նըմանակ,
Պըտուղ բաներ նեցուկն ի տակ,
Երթամ քաղեմ կողովներով,
Բերեմ լըցեմ կարասներով:
Ծաղկուն աւել, ծակ ծակ քարեր,
Կէս գիշերուն լուսնակն առեր,
Երկու պըստիկ դօստ եմ ճարեր,
Քամին էլեր գէն մէկ տարեր:
Էն մէկ տը տամ չար գըրողին,
Թուրկեմ երթամ խետ սիրողին:
Սիրող պառկեր մէջ խոտնոցին,
Ջեռնիկ ծոցին, ախն երեսին:
Խաբար տարէք մեր գոքընչին,
Աղջիկ գընաց խետ կըտըրճին:

Տարա՛նք, տարա՛նք։ Առինք տարանք,
Կրէխանօ՛ր, նանանօ՛ր,
Կրէխանօ՛ր, նանանօ՛ր։
Մէր խաբեցինք սալու լաչով,
Խէր խաբեցինք թօփ մի շալով։
Եկին եկին Մոկաց խարսներ,
Մոկաց խարսներ երկնուց աստղեր։
Եկինք խասանք մեր ճոչ աղբիւր
Պար բոլորեր գեղլի խարսխուր։
Մեր ճոչ աղբիւրն էր կամարով,
Համ կամարով, համ քընարով։
Զարկէք խաղցէք, կընտիք, ողղէք,
Քաղցր ու բաղարջ, խունկ մոմ խանէք,
Տէրտէր կանչէք գայ բուրվառով,
Պըսակն օրհնէ Աւետըրնով։
— Աստուած բարի վայելում տա՛յ,
— Աստուած մէկ բարձի ծերացուցէ՛։

ԾԱԾՈՒԿ ՍԻՐՈՂԻ ԵՐԳ

Դաշտի միջու խօրօտիկներ
Հըղըրաց կ՚իգան էգուց, ձորուց,
Քաղած են վարդ ու մանուշակ,
Անուշ հոտ կ՚իգէր ձեռներուց։
Մեռնիմ քըղի, սո՛ւրբ Թալալոս,
Հա՛ նա Շուշան ընձի խըսմաթ էնես։
Ես հըմալ եմ Շուշանի սիրոյն.
Ինչ մեղքէ մոմն էր գէմ գոլոյն
Ես հալանէնք ջուր դառանէնք,
Էնոր ակն ու աղբրունք խառնուէնք։

Կէս գիշերէն չուր ի մըկայ,
Աղջիկ քո ձէն անոյշ կ'իգայ,
Աչքովդ ձէնովդ գիս էրեցիր,
Քո սէրն ի վրէս թափեցիր:
Նախշուն մէզարով աղջիկ,
Ոսկի մազերով աղջիկ,
Քո սէրն հազարով աղջիկ:

ՄՕՐ ԳՈՎԱՍԱՆՔ ԻՒՐ ԱՂՋԿԱՆ

Դուն կայներ էր յընտրական․
Էկաւ ծանրիկ բազիրկան․
Հայլի առի շող երեսիդ,
Սանտրիկ առի չէկ աչերուդ
Ջուխտ մի ջիզմէ տօտերուդ:
Ծամերէդ կախ ջուխտակ պուխ,
Մէջն ըսպիտակ ղուրան էր թուխ:
Մազերդ հիւսուած չէրվընակ,
Թալիր յետեւդ քրղանակ:
Գացիր նստար ծառին հով,
Դեղիր գաչքերդ ընքուերով:
Ազաբ տղէք գքե տեսան,
Հացից ջըրից կըտրեցան․
Էկան եղան մեզ մըշակ,
Վերցին տընէն քո գօշակ:
Նըստէր կայնէ՛ր խանըմնակ,
Աստղ ու լուսնի նըմանակ:
Գլուխդ սըրմա արախչի,
Ականջդ ոսկի կախեցի:

Կանչուն ձեռը մորթեցի,
Բալաճին քեզ կերուցի։
Ձեռն էր երկու փարայի,
Երկու ոսկւոյ գընեցի։
Գընեցի Ջուխտ մի մարջան,
Վառ վառ Թըշերուդ նըման։
Լացի՛ր, ու ասիր հէ՛յ մար,
Հազար հոգի Թափան քո յաւար։
Մէկն ասաց. Ըռմա՛ն էդ իմալ ձէն ա՛,
Մէկն ասաց. Հէ՛յ յաւա՛ր ես էտոր ձէնից մեռա՛յ։

— էդ ըմէն բաներ քո միտը կի գա՞յ...։

ՍԻՐՈՂՆԵՐ

ՏՂԱՆ.— Ես սարէն կ'իջնէի,
Դու դռնիկդ բացիր,
Ձեռնիկդ ի ծոցիկդ տարար,
Ա՛խ ըրիր, լացիր։
Ես պաղի կտոր մ'էի,
Հալեցայ քո հրեղէն արտասունքով,
Ասի դու զիս կը սիրես,
Կանչըցայ քո էշխի կըրակով։
Թէ դու զիս չէիր առներ
Ինչո՞ւ լացիր, խաբեցիր,
Թ'ընծի եար չէիր եղներ,
Ինչո՞ւ դուռդ իմ առջեւ բացիր։

ԱՂՋԻԿԸ.— Սիրտդ տա՛ք արա, ա՛ղայ, մի՛ պաղեր.
Բուռ մի մազ իմ ծամիցն եմ կըտրեր պահեր.

Նախշուն ազլուխի ճոթին եմ կապեր,
Իմ ատլաս կապայի ծոցի ջորն եմ ծալեր
դըրեր,
Կապէն է Վան քաղաք պահ եմ տուեր,
Թէ մարդ էրե, հետ կը ճամբեմ,
Թէ հաւք էրե, թեւը կը կապեմ:
Էկար ու ընցար, գիշեր չը մնացիր,
Շալգ ու չապկէգ թողիր գընացիր,
Լըւամ լըւամ չխառըկի
Վարդի ջրով կ'խառըկի:
Բերնիս բուքով փոշին հանեմ
Շուռ տամ ու ծալծալ անեմ։

ՆՈՐ ՀԱՐՍԸ ՀԷՐԱՆՑ ՏՈՒՆԸ ԴԱՐՁ ԿԸ ՏԱՆԻՆ ՆՈՐ ՓԵՍԱՅՆ ԻՆՔԶԻՆՔԸ ԿԸ ՄԽԻԹԱՐԷ ԵՐԳԵԼՈՎ

Տարա՛ն, թող տանին Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Ջատկին կը բերեն Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Կանանչ մոմերով Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Դեղին սօլերով Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Նախշուն թաթերով Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Ոսկի բաղերով Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Անուշ հոտերով Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Կըլոր տոտերով Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Սալու լաչիկով Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Գուհաղ մէզարով Ջընկլիկ· հանօ՛ր նանանօ՛ր.
Տարան, թող տանին Ջընկլիկ,
Ջատկին կը բերեն Ջընկլիկ:

ՅԱՐՕ ՈՒ ՄԱՅՐՕ

ՅԱՐՕ.—Վարդի բլբուլ վարդի ջան,
Վարդ խռովաւ գընաց Վան։
Վարդ եմ քաղեր ձեր արտէն։
Թօրկեմ կօրեմ քո դարդէն։
Կըռունկ խանչէր սարերուն,
Ես քո սիրոյն երերուն։
Լէն տուն ու բոլոր էրկէն,
Խօրօտկըներ իմ ջերգէն։
Սիւն ու գերան բար պլտէր,
Սրտով սիրով սէր պլտէր։
Լուսնակն էր սարի ոլոր,
Իմ խօրօտիկ իմ բոլոր։

ՄԱՅՐՕ.— Տօ տըղայ, տօ ջան տըղայ,
Ջանսը քեզ ղուրբան, տըղայ,
Ծամսը քեզ խարգան, տըղայ,
Զարկես սեւ եզան տըղայ։
Տըղայ տըղայ կալօտէս,
Պաղ աղբիւրի սալը տես։
Իմ հէր քե աղջիկ չի տայ,
Գընա՛ գլխուդ ճարը տես։

ՅԱՐՕ.— Մայրօ, յօրի՞ն գլս խաբեցիր,
Գինովդ գլս սարխօշցուցիր,
Գիշերըս ես դուրս եկայ
Քո սիրոյն հիւանդ եղայ։
Լուսնակն ի բակ իջեր էր,
Բակ շողերով լըցեր էր,
Լուսնակն իջեր վէր չըմին.

Մեռնիմ քո թուխ բըռչըմին:
Լուսնակ գիշեր հովն անոյշ,
Երեսդ կարմիր թուշն անոյշ,
Լուսնակն էլեր լուսէ լուս·
Կանչէք Մայրօն թող գայ դուրս:
Մայրօ, մ՚անիծեր ընծի,
Քըրդու դըռէն ծեծեցի·
Առուէ առու եմ թըռեր
Քառասուն կաքաւ եմ բըռներ:
Լուսուն էլայ մէկ չը կէր,
Կըշտիս իլին բառչ մի կէր,
Առայ բերանս լեղի էր;
Թափի գետին գինի էր:
Գինի գինի գինըստան,
Աղբէր մ՚ունիմ չահարստան,
Մանր ուլնիկլի չարող է,
Թաֆթայ չապիկ կարող է:
Աղբէր աղբէր, ջան աղբէր,
Գուլ ու լալ մարջան աղբէր,
Սարեր բռներ ձիուն կու գայ,
Աղբէր քըրոջ հետ կու գայ:
Նախըրդընէն ուռի ծառ,
Խընծոր թալեմ արի տար,
Խընծորի կէս խածած է,
Ջուրս բոլոր արծըթած է:

ՄԱՅՐՕ.— Ծօ տըղայ տըղայ, ջան տըղայ,
Ցառփուռի փինջան տըղայ,
Քաֆըր էրիկս չիմանայ,
Քեզ կ՚անէ եարայ փարայ:

Սարեր հըմէն խըձերով
Գաղտուկ կու գամ բըձերով·
Մխինայ սարի քարին տակ,
Քեզ կը գտնեմ գիշերով։

ՓՈՔՐԻԿ ԵՐԿՐԱԳՈՐԾ

Եկաւ գարուն, եկան հաւքեր,
Տաքցաւ արեւ, գըլգլան ջըրեր։
Եկաւ վարուցանելու հըեամ,
Կըռուեկ ամպ լծեցի,
Ղազեր հօրիկ լըծեցի
Ծըեճուղ հօսաղ վարձեցի
Կաճառ հացւոր բըռնեցի,
Արտիկս վարեցի՛, ցանեցի՛,
—Ցանեցի՛ ու թըմմեցի...։
Եկաւ ջըրելու հըեամ,
Աչքերս աղբիւր էրեցի,
Արտասուքներս քամեցի,
Թեւերս թիակ էրեցի,
— Ջըրեցի՛ ու թըմմեցի...։
Եկաւ կըրելու հըեամ,
Ձեռքերս մանգղոն էրեցի,
— Քաղեցի՛ ու թըմմեցի...։
Եկաւ փոծխելու հըեամ,
Մատներըս փոծխ էրեցի,
— Փոծխեցի՛ ու թըմմեցի...։
Եկաւ կապելու հըեամ,
Մազերս կեմ ոլրեցի,
Մէկ ձեռքս բունաքի էրեցի,

— Խոռմեցի՛ ու կապեցի,
— Բարդեցի՛ ու թըմմեցի…:
Եկաւ կրելու հըեամ,
Պառեկս բալխիր կրեցի,
Կըրեցի ու կա՛լ լըցի,
— Փըռեցի՛ ու թըմմեցի…:
Եկաւ ծեծելու հըեամ,
Լագլագ կոփի լըծեցի,
Կիվիւ վըրէն նըստուցի,
Հէյլէ՛ւ, հէյլէ՛ւ կանչեցի,
Ծեծեցի՛ ու թըմմեցի…:
Եկաւ թեղելու հըեամ,
Մառերս հոսելի արի,
— Թեղեցի՛ ու թըմմեցի…:
Եկաւ հէրնելու հըեամ,
Բերնովս քամի փըչեցի,
— Հէրնեցի՛ ու թըմմեցի…:
Եկաւ թաճելու հըեամ,
Գացի թաճող բերեցի,
— Ցեղջս թաճեցի՛ ու թըմմեցի…:
Եկաւ չափելու հըեամ,
Գացի չահնէն կանչեցի,
Ականջս չընիկ կրեցի,
— Չափեցի՛ ու թըմմեցի…:
Եկաւ վերցնելու հըեամ,
Բուճերս չուալ արեցի,
Երկու բուճ կէս կէս լըցի,
Հօտաղ մըշակ հաւքերուս
Հախիկը թամամ բաժնեցի,
— Մնացածը վերցի,
— Բնաղուն աղցի…:

ԿԻՏՈՒՐ (ՄԱՐԱԽ)

Հանա կիտուր կանանչ կոլոս,
Կորեկ զականջն էր Թալեր գուրս.
Վախնամ կըտրէ զկորեկի բոյս:
Մեռնիմ քըզի սուրբ Հանդըրան,
Մարկոս աղէն էկաւ մէյվան.
Կորեկ մ՚չեղաւ որ բըրդէր Թան:
Տօ տղայ լաւօ հօրիկ քըշէ,
Ջալօն չեղ տուր, Բըաչօն քըշէ,
Աչքերդ ի բաց Թըրթուռ իշէ:
Էլանք գացինք մեր կորեկնոց,
Արտ քաղեցինք լըցինք մեր ծոց,
Շահնէն չափեց չեղաւ կըԹոց մ՚:
Կիտուր գնաց չուր ի Խոփեր,
Կերաւ կըռոյԹ, Թորկեց չոփեր:
Մեռնիմ քըզի սուրբ Դէրէսօր,
Կորեկ մի արտ ուտեմ էսօր:
Մեռնիմ քըզի սուրբ Կարէվան,
Կորեկ մի տաս բըրդեմ ի Թան:
Մեռնիմ քըզի սուրբ Կարապետ,
Մատաղ անեմ Կարոյի ձեռ.
Կիտուր վարէ ընցուր Դըմետ,
ԵրԹայ կորչի, չդառնայ ետ:

ԳՈՒԹԱՆԻ ՀՕՏԱՂ

Գութան գութան, Աստըծու բան,
Ջարկի խորուն, էլաւ տորոն,

Բարձայ ջորւոյն, տարայ Հէրուն:
Փունջ մանիշակ նոր հարսներուն,
Բոլ խունկ ու մոմ պաւըլներուն:
Դալար վարդ հոտաղներուն,
Ծիժ վաստըկեն կիրակմտին,
Հարօրվարներ տան գութանին:
Ճամբորդն էկաւ, մեր մաճկալին
Բարեւ չէ տուր, վա՛յ իր հալին:
Քառսուն սամի, պառեկ զարկի,
Քառսուն բըգլի գըլխին զարկի:
Գութան նստէ զատ գին կ՚ուզէ,
Գութնի զոմէշ կըռիւ կ՚ուզէ:
Շէկ ու Շիրին, չօքն ի գետնին,
Առանք էլանք գլխէրն ու բարին:
Խէր ու բարին վեր մանճկըլին,
Վեր իւր կըտրիճ հօտըղներին,
Վեր իւր մարալ ամոլներին,
Խէր բարաքաթ մեր գութանին:

ԾՈՅԼ ՀՆՁՈՂՔ

Ալէքսան
Ու իր տըղանեւին փեսան,
Քըսան գերընդի
Քառսո՛ւն յէսան.
Նըստին,
Սըրեն,
Ուտեն,
Պառկեն,
Քաղեն,

Փոծխեն,
Կապեն,
Բարդեն.
Յետոյն անգամ Համրեն տեսան
Բարդէն պակաս էր քըսան:

ԱՐՏՈՒՏԻԿ

Արտուտիկ,
Նախշուն տոտիկ.
Իջնեն կալեր,
Գողտիկ մողտիկ,
Ընտրեն քարեր,
Ուտեն կուտիկ,
Կը ծըլվըլան
Կըլթիկ կըլթիկ:

ԼԱԳԼԱԳ

— Լագլագօ, հաճի Բէգօ,
Յուստէ՞ կ'իգաս:
— Սեւ սարերուց:
—Ի՞նչ ես բերեր:
— Թուխթ մի սապոն:
— Ո՞ւր կը տանիս:
— Սուսկայ Մամուն:
— Որ ի՞նչ անի:
—Լաչիկ լըւայ,
Թալի գլխուն,
Ելնէ գարուն:

ԳԵՂՋՈՒԿ ԱՂՋԿԱՆՑ ԱՍԱԾ

Տըմբըլ տըմբըլ դամբուրէն,
Առայ էլայ տանիքի դուրէն.
Խաղ կանչեցի արաբկերէն,
Ձէնսի Հասաւ Գօզալդարէն:

Աղբէր աղբէր ես քե չուն,
Ի՞նչ ես բարձեր վէր իշուն.
—Վե՞ւր կը տանես:
— Բըզէզուն:

Բըզէզ ետեւ սարերուն,
Բուրդ կը գըզէ գայլերուն:
Ծախրակ մանէ արջերուն,
Գէլ չը դիպնի մեր էծուն:

Մեռնիմ ես քըմէր էծուն,
Ուլ մի ունի ճըտպըտուն,
Գըրկեմ տանիմ ժամի տուն,
Մատաղ անեմ Աստըծուն:
Թուր ու թուանք վերի տուն,
Խաչ գաւազան իմ գըլխուն:

ԱՂՕԹՔ

Ուսին ուսին սուրբ Կուսին,
Երեք բեւեռ Քրիստոսին,
Մէկն ի սիրտ չար սատանին,
Մէկն ի բերան գէլ գազանին,

Մէկն օգնական իւր ծառային։
Ես գիշերս, մէջ գիշերս,
Ջա՛ր, կալլիս, կապուիս, կործանուիս։
Իմ Տէրն էկաւ ամբախաղաց,
Աշխարհ սարսեց չորեքղլիմաց․
Գաբրէլական փողի ձէնից
Մեղաւորի հոգին դողաց։
Դրախտենական ծառ ծաղկաւ,
Անմահութենի հոտ բուրաւ։
Մարիամ չոքեր դիլաք կ՚անէ,
Աստուած հրմէն Հայ Քրիստոնէին
Մեղքը թողնէ, արժան անէ
Կաթն աղբիւրին, լոյս տաճարին։

ԱԼԱԶԱՑ ՊԱՐ (1).

Սամսան կ՚ելնէր բարակ ծուխ, Գըլէջան,
Եարուկ մ՚ունէինք Պուլանուխ․ Մըրալէ․
Զարկեց մախճան, թալեց պուխ, Գըլէջան,
Երես կարմիր, աչքեր թուխ, Մըրալէ։

---

(1) Վանայ, Մշոյ եւ Պուլանըխի գեղերու Հայոց խաղերը․— իբր քսան կամ աւելի ու պակաս, այր եւ կին, տղայ եւ աղջիկ, մէջ ընդ մէջ, իրարու ձեռք բռնած, քով քովի անքաժան, ծնկածալիկ կը պարեն, կարծես մէկ անձի պէս․ եւ իւրաքանչիւր տողը մէկ կամ քանի մը հոգի կ՚երգեն․ իսկ *գըլէջան ու մըրալէ* եւ *տըլէմ տըլէմ սընջարի* ամէնքը մէկ բերան կը կրկնեն ու կը թըռնեն։

Տըլէմ տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի
Նախըրդընէն վար կ'էնէնք,
Քու անծեղուն քար կ'էնէնք, Մըրալէ·
Իմ հէր քե աղջիկ չի տայ, Գըլէջան,
Ջահելութիւն թարկ էնէնք, Մըրալէ:
Տըլէմ տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:
Շող թափեր գետին հալեր, Գըլէջան,
Բոբիկ հետիկն էր կորեր, Մըրալէ·
Առայ զհետիկն ու գացի, Գըլէջան,
Եարոջ դուռ հանդըրուցուցի, Մըրալէ:
Տըլէմ տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:
Կաքաւ կայներ վըր քարին, Գըլէջան,
Կըռուց գըրեր քըմարին, Մըրալէ·
Ես աղջիկ ենք բէլլի ենք, Գըլէջան
Նըշանլու ենք տէլլի ենք· Մըրալէ:
Տըլէմ տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:
Եարիկս ի բաղչէն էր քուն, Գըլէջան,
Բուրաայի բարձն էր գլխուն: Մըրալէ·
Գացի գացի հեռըցայ, Գըլէջան,
Բանձըր գեղին մօտեցայ: Մըրալէ:
Տըլէմ տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի,
Գացի թ'առնենք թագայ հաց, Գըլէջան,
Անտէր թուլան գիս էխած, Մըրալէ·
Փախայ էլայ վըր դարին, Գըլէջան,
Յաւար արի իմ եարին: Մըրալէ:
Տըլէմ տըլէմ սընջարի,

Ըմրա տըլէմ սընջարի:
Եարոջ դըռնով ընցայ ես, Գըլէջան,
Անձրեւ եկաւ, թացւայ ես, Մըրալէ.
Արեւ զարկաւ, թըխռայ ես, Գըլէջան,
Քանց կարմիր վարդ բացւայ ես: Մըրալէ:
Տըլէմ տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:
Ջեռնակայ բերդն էր փլեր, Գըլէջան,
Եարիկս ի տակն էր քըներ. Մըրալէ.
Քըներ էր ու քըրտըներ, Գըլէջան,
Հիալով էր, ա՛խ կ՚էնէր: Մըրալէ:
Տըլէմ տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:
Բաղչոյ քաղաք ձորոյ մէջ, Գըլէջան,
Իմ եար գըտայ քարի մէջ. Մըրալէ.
Ցար ե՛րբ կենանք փախէ փախ, Գըլէջան,
Արի անենք առ ու փախ: Մըրալէ:
Տըլէմ տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:

ՍԻՐՈՂԻ ԵՐԳԵՐ

Հերիք, աղջիկ, դուն եարկի խեւցընես.
Մամիդ քեզի խիստ խորոտիկ բերեր է:
Երես մ՚ունես շամս ու կամար կը նըմնի,
Տեսնողների կ՚ըսեն ամիս նորեր է:
Վիզէ կապեր թօղմաջայ ոսկի փողերով,
Ալմաստըրաշ կամար զմրուտ օղերով.
Իգայ տունէ պաւկի ղումաշ տեղերով,
Ըմմըն ատեն իգայ զարդըրման լաթերով:

Աչքիդ ծարըրման, յունքիդ աննըման,
Սիրոյդ զարկման էրեցիր եախ.
Անակն ու անկուման ողջ ողջ գերեզման,
Զեմ գինայ ի՛նչ աման ամնեցիր եախ:
Ջիրինտ էնեմ վրադ կիզամ էլզարով,
Քեզի չեմ խտայ գակմայ հալերով,
'Զար զօռով մօռով քովիդի գալով,
Զարկելով ծեծելով վարեցիր եախ:

×

ՏՂԱՆ.— Կ'երթամ կ'երթամ հեռանիմ,
Ես քո դարդէն մեռանիմ,
Իմ սիրածէ կորուսի,
Հապա ես ընդո՞ւր անեմ:
Սիմ սրմալլի ալ փուշի,
Աղջիկ սիրտիս կը մաշի,
Մէկ տեսիդի չեմ խտայ
Հարիր հազար ղուրուշի:
Աղջիկ, մազիդ հիւսէիր
Թունչիդ ռէհան քըսէիր,
Ելլայիր վարդի ծառին,
Բըլբուլի պէս խօսէիր:
Շալէ գլխուդ կ'ոլորտիս,
Հիալուս կ'անցնի սիրտիս,
Ակար եախ չըսիրես,
Աճէր ի՞նչ մն'եղնայ հալիս:
Շըթաքէն էլեր կը հիայ,
Աչուընէրէ կը բըբլայ,
Երթամ քովլի մօտենամ,

Կը վախնամ էլնայ գըժայ։
Աղջիկ, անունդ ի Թումայ,
Ծոցիդ երկու գումգումայ,
Եկո՛ ինծի խօ՛սք մի տուր
Քեզի պըհէ սըրբ Թումա։

ԱՂՋԻԿԸ.— Իջայ ղամղամին. մութ է,
Ճիվսի ընկաւ քութէ,
Աստծու խաշմին իղաս,
Էս իրիկուն կիրակմուտք է։
Բաղչան իջեր խորոզէ,
Բաղչի քարէ լոլոզ է,
Կ'ուզեմ հալաջ մի սիրեմ,
Ուընտիկ եղնայ քօլօզէ։
Դէ, հերիք է քաշես չալիս,
Խօսք չեմ խտայ, մաշիս հալուխս.
Կ'երթամ պապուսի կ'ըսեմ,
Հերիք է ետիս աղջիս։

×

Նստեր է թոնտիրտունէ,
Երեսէ կարմիրտուն է,
Իգամ աչքիդի մօտենամ,
Եղնամ հոգուդի տունէ։
Նստեր է պատի տակէ,
Կը փէլլայ մաննուակէ,
Աչքով յընքով կը կանչէ,
Ադլաս ընկողին տակն է։
Իջայ Ջայի քընարէ,
Տեսայ աչքէ խումար է,
Աչքով եսի կը կանչէ,
Գինամ ինչու համար է։

X

Աղջիկ, աղջիկ ի՞ ուր կ'ոլորիս ջրերուն,
Մամիդ ի՛նչ քաշեր է քեզի բերելուն,
Գըշեր քուն՝ չէ քըներ օրան օրրելուն:
Աղջիկ, աղջիկ, ի՞ւրցէն կիգաս ջրերուն,
Ջարկեր եմ ճակտնոցիդ քովերուն,
Կ'ուզեմ մազքեան կապեմ ի ղամ քովիդի,
Ջատուներէ վրաս եղած ղատարուն:
Աղջիկ, աղջիկ, ժողվէ ըջճիդ մազերէ,
Շատ կը սիրեմ երեսիդ համզաներէ,
Քեզի ջ̀իմի աղջիկ մի կուզեմ, չեմ գըննայ,
Ակար գըննամ, կը քաշեմ իր նազերէ:
Բոյիդի եասամի, երեսդի լալայ,
Խույդի խելքդի շատ լաւ ու ալայ,
Խըղճուկ եմ, մի՛ բերեր գլխուսի բալայ:
Ես քեզի հիմա փառով,
Մէջքիդի բարակ ճարով,
Էլեր ես քաղքէն կ'երթաս,
Չես ըսեր կեցի՛ բարով:

ՄԱՅՐ ԻՐ ԶԱՒԱԿԸ ԶՈՒԱՐՃԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ծոր գնա, բոր էկո, հըմա կիգայ մոնծ մաման,
Բերէ քըզի արմաղան,
Ուտես ուտես մեծանաս,
Զոչոներուն հեծընաս,
Ըմմէն տեղրանք ոլրտիս,
Մամուդ պապուդ հաց բերես:

Նաննի ըսեմ քընցնեմ,
Նուշ ու շաքար կերցնեմ:
Ծոր գնա, բոր էկո, եղնիկ ու մեղրիկ բեր,
Կէսն խանք լըծորկան,
Կէսն խանք մամային.
Կէսն խանք դադային,
Կէսն խանք բաբային:

ԱՂՕԹՔ

Ճրագ ճրագ ճշմարիտ,
Ճշմարտապէս մարտիրոս,
Մարտիրոս հեծաւ քուռակէ,
Գնաց Ուռֆա քաղաքէ,
Շըշեր քաշեց պողպըտէ,
Դոներ բացեց երկըթէ:
Դընդըր մնըրդըր ձէն կիգայ,
Ելէք հիացէք ով կիգայ.
Երեք սիւտակ ձիաւոր,
Լուս երեսով փառաւոր:
Մէկն է Յիսուս Քրիստոս,
Մէկ Մարիամ Տէրամայր կոյս,
Մէկն մանուկ սըրբ Կիրակոս:
Իկան տունէ ծննդականին,
Խաչնի սիւնէ դրին սրտին,
Աւետարան վէր գլխին:
Զարեր խափանուին:

ՄԵԾ ՊԱՀՈՑ ՄԷՋ, ԿԱՐՕՏՈՎ ԶԱՏԿԻՆ

Մըքըրէն բռներ հալայէ,
Թանրալ կնկառւց եղեր կօլայէ,
Հորու ջուրով կ'էնէն ղալայէ.
Ե՞րբ մըն իգայ սըրբ Զատիկէ:
Թարխանայ չօրբան մերխօշ է,
Նանան չեղնայ, էընէ բօշէ,
Ես կը սիրեմ քալաղօշէ.
Ե՞րբ մըն ի գայ սըրբ Զատիկէ:
Գացինք հարցուցինք Թումաս աթթարէն,
Խաբար մի տայ մըզի Զատկի Թաթարէն.
Մըզի խաբար տուեց զէյթուն ու ձիթրէն.
Ե՞րբ մըն իգայ սըրբ Զատիկէ:
Քրիստոս յարեաւ ըսէինք,
Երես երեսի քըսէինք,
Քաբար, ոսկուր կըրծէինք,
Երբոր իգար սըրբ Զատիկէ:

ՊԱՐԵՐԳ

Ծառի տակի պաղ աղբիւր,
Մէկ դու խըմէ, մէկ ծի տուր:
Նատերիս ու Նըխշ կ'անես,
Հաւերն էկան քըշ կ'անես:
Աղբօր բօղչան կանթ ունէր,
Քըրոջ բօղչան վարդ ունէր,
Պըրծայ սարէն էկայ ցած,
Դըռներ թողեր կիսաբաց:

Իմ գըլխու կանանչ փուշին,
Քու գլխու կանանչ փուշին.
Ջուխտակ ծըծեր վեր գօշին.
Ինչ որ հալուէն մէջ լօշին։
Տանքով ընցայ թափ քէլեցի,
Բաղէն տուն չէր, նստայ լացի,
Տըղէն կուլար, օրօրեցի։
Բաղէն գացեր բակն ի լուաց,
Տաշտիկ կոտրաւ սապոն գնաց,
Որբուկ տըղի չապիկ մընաց,
Խան Աւտալի խադըր մնաց։
Ել ու երթանք Կըրընկու սար,
Քօշկ մի շինենք մըտնենք հիսար.
Զող գայ վըր մե Շահն ու Խոնդքար,
Ուզէ հարիւր, կու տամ հըզար,
Բաղէ, քո թուխ աչքիդ համար։
Երէկ հէվարին, ոչխար վեր բէրին,
Թըւանքով զարկին բըրինդար արին։
Կ'երթամ Վանայ բերդ, տաքերս չի գայ հետ,
Կ'ուզեմ դառնամ ետ, իմ եարն առնեմ հետ։
Ծովուն հաւք մի կէր, անուն էր Ուրուր,
Ճըտիկն էր կարմիր, սրտիկ սեւաւոր։
Կապեմ բէչարէն, երթամ հետ ինոր.
Էն իմ դարդ գիտէր, ես էլ գօ ինոր։
Դու զարդըրուեր ես, կ'երթաս սըրբ Նըշան,
Մատիս մատընիկ կու տամ քէ նշան։
Էս օր ինչ օր է, ուրբաթ ու պահս է,
Աղջիկ քո գըլուխ արծըթէ թաս է.
Խորած վարդապետ կ'ասէ չըհաս է,
Երկինքն էր ամպեր, կու գէր մարմար ձիւն,
Կը հալէր կաթէր վէր մալուլ լաճուն,

Աստուած աւրէր ղամաղ մարդու տուն։
Էլեր ես լգին խաղող կը քաղես,
Շամամ ծըծերովդ չաքար կը մաղես,
Աչքիդ խանչալով սըրտիկս կը ղաղես։

ՑՐՈՆՑԻ ԱՂՋԻԿ ԵՒ ՍԵՒ ՀԱՐՈՆ

Առաւօտուն ելայ, զկուժ դըրի թեւոյս,
Կ'երթէնք ի աղբիւր,
Ինչեցի սեւ Հարոն էկաւ, կոլաւ վըր թեւերուն,
Կը մըշըշէ՛ր Բլբլայ դարուն։
Դու կ'ասես Փխօնաց (1) Նատիր աղան էր,
Փողրկովայ Խալիլ բէգն էր,
Մոգուց Խուրշիդ բէգն էր,
Քրթագոմու Նասիր բէգն էր…
Բացեցի զաչքերս ու տեսայ, չէ,
Իմ սեւ Հարո՛ն էր, սեւ Հարոն էր…։
Քանի սեւ Հարոն հուտայ էր,
Երկու պտղունց թուխ դեղ աչքերս կը քաշէր․
Հըմկայ ա՛խ կ'անեմ, թօղիկ մի առքի մըրիկ ձեռքս
չի կպե՛ր։

Քանի սեւ Հարոն հուտայ էր,
Իմ ոչխըրիկ երկու էծուկ էր։
Խալխին ճըղերով էր,
Քընց զըմէն շուտ կ'երթէնք, կըթէնք,
Ու քընց զըմէն իմ կաթնուկ շատ էր,

(1․ Խիօնք, Փողրկով, Մոգունք, Քրդագոմ՝ գեղ են Մշոյ դաշտը։

Հարցէք գուր ու գըկըցին։
Էգի որի՞ խէրուն էր,
Ա՛խ. սեւ Հարոյի խէրո՛ւն էր...։
Սեւ Հարոն ե՞րբ դառնէր ի գէր,
Վըր Բըլբլայ գարուն մըշըշէր։

×

Աղէկ ես, աղէկ ես, մարըդ կը նմանիս,
Գարնան ծընրած մաքուն գառը կը նմանիս,
Նոր հասած բաղչային ծառը կը նմանիս,
Ծովուն մէջու անգին քարը կը նմանիս։
Էկան էկան գարնան էրկան օրեր,
Առնեմ անոյշ եարն ելնեմ լեռները,
Քաղեմ վարդ մանուշակ, բռնեմ ձեռները։
Լեռներ, լեռներ, ա՛յ պաղ պաղ ջըրեր,
Առանց եարիս ինսուզ մնացին քո նուրդերը։

Մայրամ թոնիր վառեր, տները մուխ էր,
Աչուին ծարուրը քաշեր, ընքուներ թուխ էր։
Մայրամ, մի՛ լար, աչուիդ կ՚աւիրուի,
Քեզի տանողին տնիկն աւրուի։

Զատըր զարկեր եմ օռմանն ու լեռները,
Մէկ դին խոյեր կ՚արածան, մէկ դինը գառները.
Վախեմ ինծի համար դուն թուղթ ես արեր,
Սիրտս գետի պէս կը վազէ, լեզուս բռնուեր։

Բամբակ եմ ցաներ Խարբերդի ովան,
Բիւլբիւլ մի՛ փլցուներ ձագերուս եուվան։
Տուն էկո, տուն էկո, սիրածս տուն էկո,
Արմաղան պէտքը չէ, արեւդ առ էկո։

Գոգնոցս ներկեր եմ կէնձու տորոնով,
Սրտիկս լեցուեր է գունդ գունդ արիւնով.
Սիրա՛ծ, աղբիւր շինէ, ես գամ ջուր խըմեմ,
Ընքուերդ սեւ գար արա, ես վրան թառիմ:

Դուն էկո, դուն էկո, սիրածս դուն էկո,
Հաց ու գինի ունինք, արեւդ առ էկո:

Ջորերուն ջուրերն են տաքցեր, վախեմ սիրածս
մէջն է լողկըցեր,
Աղբար, հերիք պառկես, օրն ու արեւն է անցեր,
Մարն ու մանուշակի հոտ սարն ու դաշտ՝ լեցեր:
Տուն դարձիր, գլս ջուրը մի՛ նետեր, գայլու կեր-
մ՚ըներ, տուն դարձիր:

ԿԱՂ ԵԶՆ

Աստուած սիրէք ականջ արէք
Իմ եղան գովանքն անեմ ես:
Խօլ եզն էկաւ վերին թաղէն,
Շներն առէջ թեւխաղ խաղէն:
Գացէք տեսէք Խօլոյի մսուր,
Երկու մարդակ թալուկ մսուր:
Խօլոյի բեռն երկու քիլայ,
Զարկեց չիվդան գընաց դէնա:
Բարձ գԽօլոն զարկ սարուբար
Մէկ թայ մարջան մէկ քարուբար,
Քըշէ ու տար Աբուլբահար (1):

(1) Աբուլբահար, Հունան, Ագրակ, Ցրօնք, Մառնիկ, Թիլ՝ Գեղ են Մշոյ դաշտը:

Գնա՛ Հուման բեր բարդի ծառ,
Գնա՛ յԱգրակ բեր մանրուկ քար,
Գնա՛ Ցրօնք ցըրուէ պտաւար,
Գնա՛ Մառնիկ մանրէ զծաւար,
Գնա՛ ի Թիլ Փաշի ջաղաց,
Կեր ըզ տօնիկ, կեր ըզ բաղարջ։
— Կերայ, ակրէքս խըխըչաց.
— Աւզով քարով էր շաղըխուած։
Խօլոյի շուան սեւ ու բարակ,
Ջարկեց գշիվգէն էլաւ Փալաք։
Խօլոյի կաշին սեւ ու բըշիկ,
Բարձան զԽօլոն, էրէց տըռճիկ։
Խօլոն պառկեր ինչ որ Մառկու,
Փորէն քակեն շատ ճըրագու։
Արի երթանք դէսա դէնա,
Ես վարդ քաղեմ դու փունջ արա,
Սարու սըր Գորգ դու ուխտ արա,
Սուրբ Յովհաննէս մեր ճարն արա։
Կըռուաւ էրիկ, կըռուաւ կընիկ,
Փաթթուան յիրար Թափան Թօնտրիկ։

ՀԱՆԴԷՍ ԹՌՉՆՈՑ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ԳԵՂՋԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎՐԱՅ ՅՕՐԻՆՈՒԱԾ

ԿԻՒՎԻԻ	*Թագաւոր կամ պարոն*
ԱԼԻ ՉԱԽՉԱԽ ՏԻՌԼԻԼԻՆ ՇԱՀԷՆ ԲԱԶԷՆ ՔՕՌ ՊՈՒՊՈՒՆ	*Ասպատակողք*

Ալի չախչախ. Տիռ լրլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եկերիչ քըշեցին վըր Լակլակուն,
Լակլակ *թափ տուեց իր թեւերուն. ասաց.*
Մի՛ գպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Ջըրտըկուորն եմ Պարոն Կեւլիուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եկերիչ քըշեցին վըր Ջըրխօթանին.
Ջըրխօթան *թափ տուեց իր թեւերուն, ասաց.*
Մի՛ գպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Նաւավարն եմ Պարոն Կիվլիուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եկերիչ քըշեցին վըր Ագռաւուն.
Ագռաւ *թափ տուեց իր թեւերուն, ասաց.*
Մի՛ գպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Դումանջին եմ Պարոն Կիվլիուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Խաբլաննննուղին.
Խաբլաննննուղն թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Քամու փըչողն եմ Կիլիկիուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Բաղուն.
Բաղ թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Լողւորիկն եմ Պարոն Կիլիկիուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Գէլհաւքուն.
Գէլհաւք թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Տանէրէցն եմ Պարոն Կիլիկիուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Արօսուն.
Արօսն թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Նուիրակն եմ Պարոն Կիլիկիուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Լորուն.
Լոր թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Սարկաւագն եմ Պարոն Կիլիկիուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Կունդօյին.

Կունդօն թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպչէք իմ մանրիկ ձագերուն.
Ես Ժամկոչն եմ Պարոն Կիվիուն։

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Թումօյին.
Թումօն թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպչէք իմ մանրիկ ձագերուն.
Ես Գըզիրն եմ Պարոն Կիվիուն։

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Խազուն.
Խազն թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպչէք իմ մանրիկ ձագերուն.
Ես Տանտիկինն եմ Պարոն Կիվիուն։

Ալի չախչախ, Տիդ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Տատրակուն.
Տատրակ թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպչէք իմ մանրիկ ձագերուն.
Ես Ալուրմաղողն եմ Պարոն Կիվիուն։

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Էծէծուն.
Էծէծ թափ տուեց իր թեւերուն, ասաց.
Մի՛ դպչէք իմ մանրիկ ձագերուն.
Ես Փոշեհանն եմ Պարոն Կիվիուն։

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քօռ պուպուն
Եէրիշ քըշեցին վըր Գիշերահաւուկին.
Գիշերահաւուկ թափ տուեց իր թեւերուն, ասաց.

Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Երդիքբացողն եմ Պարոն Կիվիւ*ուն*:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Բօռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Տանհաւ*ուն*.
Տանհաւ *թափ տուեց իր թեւերուն, ասաց*.
Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Տախտաւողն եմ Պարոն Կիվիւ*ուն*:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Բօռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Եղունկ*ուն*.
Եղունկ *թափ տուեց իր թեւերուն, ասաց*.
Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Խընամին եմ Պարոն Կիվիւ*ուն*:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Բօռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Կըռօկըռօ*յին*.
Կըռօկըռօն *թափ տուեց իր թեւերուն, ասաց*.
Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Դըռնապանն եմ Պարոն Կիվիւ*ուն*:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Բօռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Ուգիխըչօ*յին*.
Ուգիխըչօն *թափ տուեց իր թեւերուն, ասաց*.
Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Շուռաջին եմ Պարոն Կիվիւ*ուն*:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Բօռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Ցուրուր*ուն*.
Ցուրուր *թափ տուեց իր թեւերուն, ասաց*.
Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Թըւընքջին եմ Պարոն Կիվիւ*ուն*:

Ալի չալխչալխ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
    Եէրիշ քըշեցին վըր Ճարեկուն.
Ճարեկ թափ տուեց իր թեւերուն, ասաց.
 Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Գառնարածն եմ Պարոն Կիվլիւուն:

Ալի չալխչալխ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
    Եէրիշ քըշեցին վըր Անծեղուն.
Անծեղ թափ տուեց իր թեւերուն, ասաց.
 Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Շաւեռքաշողն եմ Պարոն Կիվլիւուն:

Ալի չալխչալխ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
    Եէրիշ քըշեցին վըր Սարեկուն.
Սարեկ թափ տուեց իր թեւերուն, ասաց.
 Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Դափածողն եմ Պարոն Կիվլիւուն:

Ալի չալխչալխ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
    Եէրիշ քըշեցին վըր Կռունկուն.
Կռունկ թափ տուեց իր թեւերուն, ասաց.
 Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Մեծ Աշուղն եմ Պարոն Կիվլիւուն:

Ալի չալխչալխ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
    Եէրիշ քըշեցին վըր Կիւլէրկիւլէրուն.
Կիւլէրկիւլէր թափ տուեց իր թեւերու՛
 Մի՛ դպչիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Դուդուկչին եմ Պարոն Կիվլիւուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Դեղիններըղկուն.
Դեղիննընեղուկ *թափ տուեց իր թեւերուն, ըսաց.*
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Քօչակխաղացողն եմ Պարոն Կիվիւուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Ծիծեռնըկուն.
Ծիծեռնիկ *թափ տուեց իր թեւերուն, ըսաց.*
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Զարխաճին եմ Պարոն Կիվիւուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Սըրսըրկուն:
Սըրսըրիկ *թափ տուեց իր թեւերուն, ըսաց.*
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Փօշտաճին եմ Պարոն Կիվիւուն:

Ալի չախչախ, Տիռ լիլին, Շահէն Բազէն, Քոռ պուպուն
Եկրիչ քըշեցին վըր Բըլբըլուն.
Բուլբուլ *թափ տուեց իր թեւերուն, ըսաց.*
Մի՛ դպիք իմ մանրիկ ձագերուն.
Ես Հէքաթասողն եմ խաղ կանչողն եմ Պարոն Կի-
վիւուն:

ՓԵՍԱՅԻ ՀԱՄԱՐ ՕՐՀՆԷՆՔ

Սուրբ Սարգիսն իջաւ սարէն,
Քառասուն աղբիւր բղխաց քարէն.
Քսանեւչորս սուրբ Մարգարէն
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Արտերը կը բուսնի բոյսը,
Երուսաղէմ կ'ելնէ լոյսը,
Հռիփսիմէ, քառասուն կոյսը
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Շատ կտրիճներ կու գան եօլով,
Տօյումէն ըռզակով մալով,
Այասօֆին Ստամբօլով
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Սուրբ Թագաւոր Թէքիրտաղի,
Անարծաթն էր Եալովացի,
Լուսաւորիչն Երզնկայի
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Կռունկ կու գայ բօլուկ բօլուկ,
Որն է զուռնախ, որը բանուկ,
Սեւրստու մէջ Քառասուն Մանուկ
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Աստղ մի ելաւ ի Հընտիստան,
Մեր տէրն երետ մեզի նշան,
Սեւրստու վերեւն սուրբ Նշան,
Օրհնէ այս մեր Թագաւորը:
Աստղ մի էլաւ գէտ ագեւոր,
Վըրան նստեր Տէր Հոգեւոր,
Տիվրիկու Մոգուց Թագաւոր
Օրհնէ այս մեր Թագաւորը:

Այարով է կայնեմ Ջորին,
Տէր, դուն ազատ անես գերին.
Սեւագլուխ Արեղանին
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Հրեշտակներ դըռուընին բացին,
Ողորմութիւն մեզ շնորհեցին.
Հազար եւ մէկ Եկեղեցին
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Այն ո՞վ էր որ դըրին դամին,
Հետը դըրին հաց ու գինին.
Այն էր Յովնան սուրբ Մարգարէն,
Օրհնէ այս մեր Թագաւորը:
Այն ո՞վ էր որ դըրին հորը,
Վրան լըցին օձն ու գորտը.
Լուսաւորիչ սուրբ Գրիգոր,
Օրհնէ այս մեր Թագաւորը:
Այն ո՞վ էր որ նետեց նետը,
Երկաթէ սըլաքն ի հետը,
Անհայր անմայր Մելքիսեդը
Օրհնէ այս մեր Թագաւորը:
Կոյս Մարիամ կ՚աղօթէր այրը,
Ան էր Քրիստոսի մայրը.
Եզնկայ փոսին Ղըրխլարը.
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Եկայք ի մէջ Եզնկա փոսին,
Բազում սըրբեր հոն կը խօսին.
Աւագ վանքը, Կայիփոսին (1),
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Երուսաղէմ Արաբիստան,
Սուրբ Կարապետն է Քիւրդիստան.

---

(1) Կայիփոսի Ս. Յակոբ վանք է:

Էջմիածին Աճամստան,
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Սուրբ Կարապետ կայնեցուցին,
Լուսեղէն շուրջառ հագուցին,
Քրիստոս գիրկը մկրտեցին.
Օրհնէ այս մեր Թագաւորը:
Ջուրը կ'երթայ ծովէն ատան
Տէրը փրկէ չարն ու ղատան
Արզուրումցի Բուրսախ դէդէն
Օրհնէ այս մեր Թագաւորը:
Երկնուց երեսի բոյլքը
Ի՞նչ անեմ աշխարհքիս մուլքը.
Ջորս կողմ աստընւորիս սուրբքը,
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Շատ Հայրապետք ալ հաւաքեր,
Թագաւորաց գլուխ Թագեր,
Սըսոյ (1) *վերեւ սուրբ Առաքել,*
Օրհնեն այս մեր Թագաւորը:
Մըշակնոցի (2) *վերեւ Բուրքը*
Հոն ուխտի կ'երթայ Թուրքը,
Սուրբ Յակոբ զօրաւոր սուրբը
Օրհնէ այս մեր Թագաւորը:
Տեսէք թէ Մուրատն ի՛նչ կ'ըսէ,
Ով որ ականջ դնէ լսէ,
Ով որ սրտանց Հայր Մեր մ'ըսէ,
Աստըծոյ լուսոյն տիրանայ:

---

(1) Սիս՝ գեղ է եւ Ս. Առաքել վանք է ի Շապին Գարահիսար:

(2) Մշակնոց եւ Բուրք՝ գեղ են Շապին Գարահիսար: Բուրքէն նշանաւոր հնութիւնք ելած են:

ԱՂՕԹՔՆԵՐ

Աստուածածին լեռներն այ,
Աստուածորդին դրկին այ,
Սաղմոսարան սրտին այ,
Իրեք բեւեռն ափին այ,
Մէկն սիրտը սատանին,
Մէկն բերանը գազանին,
Մէկն էլ տըժմին ու բըժմին,
Որ ժուռ կու գայ,
Գլխուս վրայ:

×

Ութը մատով, երկու բոյթով,
Աստուածամօր քաղցրիկ կաթով,
Սուրբ Սարգըսին ձիոյն ձարով,
366 Հայրապետի աղօթքներով,
Գայլին, գազանին բերան
Կալուին, կապ մընան:

×

Լուսիկ լուսիկ երեք լուսիկ
Երեքին հագածն է ճերմակ,
Մէկն է Յիսուս, մէկն Մարիամ կոյս,
Մէկն է Օհան Ոսկեբերան:
Մէկն դուռն կը պահէ, մէկն երդիքն,
Մէկն ալ գալած չարերս խափանէ:
Զարխափան Աստուածամար,
Տիրամար սուրբ Աստուածամար:

×

Երթամ սարով, գամ ձորով,
Քրիստոս դէմս էլաւ զօրով:
— Իմ տէր, ո՞ւր կ'երթաս բարով:
— Կ'երթամ ի դուռըն հիւընդին,
Ելլեմ երդիքը ծննդկանին,
Խաչըս ձգգեմ վերայ բարձին,
Որ ամըրնայ սիրտն ի փորին:
Մարիամ մայր իջաւ վէրնէնի,
Կըյրեց երեք ճիւղ վարդենի,
Ղըրկեց ի սուրբ եկեղեցի:
Ով որ ըսէ ու լսէ, օրն երեք անգամ յիշէ,
Աստուած իւր մեղքը չը յիշէ:

×

Ճըրագն ընցաւ, չարն խափանաւ,
Սուրբն Սարգիս վրայ հասաւ,
Բօզ ձիով
Կանանչ խաբայով,
Լուսեղէն փիլոնով:
— Լուսունկիկ, լուսունկիկ, յո՞ւսկայ կու գաս:
— Հէր Աբրահամու ծովուն վըրաւէն:
— Դուն դեղին, ձիդ է դեղին,
Մօրուքդ էկել, գոյնը դեղին,
Աջն ու խաչը բարձիս վրայ
Հէրը ըսէ, որդին լսէ,
Հոգին սուրբ արթնցունէ:
Գլխիկս վեր բարձին
Հոգիս ամանաթ, սուրբ Աստուածածին:

×

Աստուածամէր, է մէր, է՛ մէր,
Աղջիկս էմէր, քուն է եղեր,
Երազ տեսեր ու զարմացեր,
Ինքն իր կամով խաչ է հաներ:
    Խաչափայտը ես կը շալկեմ,
    Գլխուս ոսկին թագ կը շինեմ.
    Ջուրը ձրդեմ, ջուր չը տանի,
    Զարը տեսնայ, չար չը տանի:
Սըրբ լուսն էկաւ մեր էրդիքը,
Մէջ երկինքն ու մէջ գետինքը.
Լուսեղէն սիւնն էր սրտին,
Սուրբ աւետարան էր գրկին,
Փէճկեր զմաղեր թափեր էոջին,
Մէկիկ որդին էր վեր խաչին:
Ով որ էս աղօթք կարդայ,
Աստուած էնոր մեղքը թող տայ:

×

Կէս գիշերուն ես դուրս ելայ,
Հայ զօրաւոր սուրբ մի տեսայ,
Զոդուկ գացի ոտքը ինկայ,
— Տէր, քո անունն ինծի ասա:
— Իմ անունըս է սուրբ Վարդեր.
Աղբօրս անունն է Համազիկ:
    Սուրբ Վարդեր ձիոյ վրայ,
    Սուրբ Համազիկն ջորւոյ վրայ:
    Արծըրթէ թաս կէր ափերը,
    Առան էլան պաղ աղբերը.

Մէկ մ'էր ընկեր խիստ նեղութեն,
Առան էլան համբերութեն (1):

ԳԵՐԵԶՄԱՆԻ ՄԸ ՎՐԱՅ

Արաբկերու մէջ մէկ վարդ մի բուսաւ,
Էլաւ գընաց Երուսաղէմ սըրբ լոսը տեսաւ:
Զար սատանէք եռեւէն մանգլըլով հասան,.
Լեռները թնդացին, թըփերը լացան:

Հորովին բոյովը քարը կըյրեցին,
Երկու կարմիր խնծոր ծառէն կախեցին.
Էւելցածը տուրին խունկ մոմ գընեցին,
Ըմէն կիրակմուտքին հոգւոյն ծըխեցին:

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ՕՐ ՎԻՃԱԿԻ ԽԱՂ

Վիճակ վիճակ, ոսկի կոճակ,
Մամս բերէր եօթն կարճակ,
Ոլորաին դուքնէ դուքան,
Զարկին ոսկիէ սիքան:
— Բարձ բարձի վըրան,

---

(1) Աղօթքներէն եւ սիրոյ երգերէն քանիները Գղեցւոց եւ Խարբերդցւոց են, զորս դրկած էր ինձ Յ. Յ. (Յովհաննէս Յարութիւնեան = Թլկատնցին): Իսկ միւսները՝ Ակնէն, Վանէն, Մուշէն եւ Տիգրանակերտէն հաւաքուած են: Այս առթիւ շնորհակալութիւն ամենեցուն որ դիւրութիւն ընծայած են ինձ:

Հրամմէ նաւի վըրան․
Տըսուներկու աստղը ծագէր,
Ըմէնն էլ քու բախտի վրան:
— Երնեկ էն օր դուն եղար,
Երկինք գետին խնդում եղաւ,
Աստղերը ծափ ծեծեցին,
Էս ի՛նչ բարի պտուղ եղար:
— Ինքն կը նմանի խաթունի խաթուն,
Ոսկին կու գայ բիթուն բիթուն,
Կոխեց ձըւկին թըռաւ թախդին,
Աշխարհքը ցանկացաւ բախտին:
— Վերին շուկան տաքուկ հացիկ,
Վարի քուչան դըդման բամբկիկ,
Քրիստոս իր բերնովը ըսեր,
Ասի քու ճակտիկն է գրուեր:
— Կանուխմանց մտայ էգին,
Գըլոխը կըպաւ թըփին․
Դեռ մուրատ չեմ առեր եմ,
Ի՞նչխէ տի մըռնամ գետին:
— Կանուխմանց իջայ բաղչան,
Բուլբուլն բաշլաւ մայան․
Քաղեցի որթոտ խաղողին
Դըրի ոսկէ սինին:
—Երկնուց մատնի մը իջաւ,
Էկաւ մատըս խըճեցաւ․
Ես գիտէի ակը խամ էր,
Բախտէս գոհար բացուեցաւ:

ԱՆԾԵՂՆ ԵՒ ԻՒՐ ՊՈՉԻԿ

Պառաւ կովը կթեր, կթոցով կաթը գետին դրեր, ու գնացեր ցան ու ցախ բերելու որ կրակ վառէ, կաթն եռցունէ։

Անծեղ մը էնդեհէն եկեր, կտուցը մխեր մէջ կթոցին որ կաթն խմէ, կթոցը շրջուեր, կաթը գետին թափուեր։

Պառաւն է համա՛ կը հասնի, անծղան պոչից կը բռնէ. անծեղն կ'անէ որ թռնի, պոչ կը մնայ պառւոյ ձեռնը։

Անծեղն կը թռնի կ'երթայ վեր արապահին կը նըստի, կ'աղաւըրի պառւոյ երեսնըվեր, ու կըկչալով կ'ասէ.

— Պառա՛ւ, պառա՛ւ, իմ պոչ տու, կցեմ կըցմըցեմ, երթամ իմ ընկերներաց հասնեմ։

Պառաւն է կ'ասէ.

— Գնա՛ իմ կաթ բեր։

Անծեղն է կ'երթայ կովու մօտ, կ'աղաւըրի ու կ'ասէ.

— Կովիկ, կովիկ, ձիկ կաթ տու. տանիմ տամ պառւուն. պառաւն իմ պոչ տայ, կցեմ կըցմըցեմ, երթամ իմ ընկերներաց հասնեմ։

Կովն է կ'ասէ.

— Գնա ձիկ խոտ բեր։

Անծեղն է կ'երթայ արտին մօտ, կ'աղաւըրի ու կ'ասէ.

— Արտիկ, արտիկ, ձիկ խոտ տու. տանիմ տամ կովուն, կովիկ ձիկ կաթ տայ, տանիմ տամ պառւուն, պառաւն իմ պոչ տայ, կցեմ կըցմըցեմ, երթամ իմ ընկերներաց հասնեմ։

Արտն է կ'ասէ.

— Գնա՛ ձիկ ջուր բեր:

Անծեղն է կ՚երթայ Ջրբաշխի մօտ, կ՚աղաչէ ու կ՚ասէ.

— Ջըրբա՛շ, Ջըրբա՛շ, ձիկ ջուր տու, տանիմ տամ արտին. արտիկ ձիկ խոտ տայ, տանիմ տամ կովուն. կովիկ ձիկ կաթ տայ, տանիմ տամ պառաւուն. պառաւն իմ պոչ տայ, կցեմ կըցմըցեմ, երթամ իմ ընկերներաց հասնեմ:

Ջրբաշն է կ՚ասէ.

— Գնա՛ ձիկ ձու բեր:

Անծեղն է կ՚երթայ հաւուն մօտ, կ՚աղաչէ ու կ՚ասէ.

Հաւի՛կ, հաւի՛կ, ձիկ ձու տու, տանիմ Ջրբաշին. Ջրբաշն ձիկ ջուր տայ, տանիմ տամ արտին. արտիկ ձիկ խոտ տայ, տանիմ տամ կովուն. կովիկ ձիկ կաթ տայ, տանիմ տամ պառաւուն. պառաւն իմ պոչ տայ, կցեմ կըցմըցեմ, երթամ իմ ընկերներաց հասնեմ:

Հաւուն սիրտը կը մղկտայ վէր անծըղան, կը նստի երկու ձու կ՚ածէ. անծեղն կը բերէ Ջրբաշին՝ Ջրբաշ ջուր կու տայ, կը տանի արտին. արտիկ խոտ կու տայ, կը տանի կովուն. կովիկ կաթ կու տայ, կը տանի պառաւուն. պառաւն պոչ կու տայ, կցէ կըցմըցէ, կը թռնէ՛ կ՚երթայ ընկերներաց կը հասնի:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ (1)

Ի վան՝ Քրիստոսի ծննդեան խթման ճրագալոյցին՝ խումբ խումբ մանկտիք չոր-ցած դղում մը կը ծակծկեն, վառուած ճրագ մը մէջ կը դնեն ու երդիքներէն վար կախելով գայն թաղի տները՝ միաձայն կ'երգեն·

Ցընծացէ՛ք ուրախացէք· Ալէլուիա :

Այսօր տօն էր Միարեամեայ· Ալէլուիա
Մարիամ գընաց 'դուռն ի յետին· Ալէլուիա
Քամակն ի գարկ խաչաքարին· Ալէլուիա
Ծընաւ ի բեր Յիսուս արտին Ալէլուիա

---

(1) Գարեգին Եպս· Սրուանձտեանցի ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎը հոս կը վերջանայ, որուն կը յաջորդէ ԲԱՌԱՑԱՆԿԸ :

ՀԱՄՈՎ ՀՈՏՈՎի առաջին տպագրութիւնը լոյս տե-սած է 1884ին: Այս թուականէն յետոյ հանգուցեալ Սրբազանին ստորագրութեամբ լոյս տեսած են նաեւ ուրիշ *ժողովրդական երգեր* : Բայց հրատարակիչնե-րէն եւ ոչ մէկը նկատի առած է զանոնք նոր տպագրու-թիւններու ատեն : Ուրախ ենք յայտնելու, որ շնորհիւ ծանօթ գրագէտ եւ Փարիզի Նուպարեան Մատենադա-րանի մատենադարանապետ Պ· Արամ Անտոնեանի խը-նամքին եւ բարեացակամութեան, ի վիճակի ենք իբրեւ յաւելուած տալու այդ էջերն ալ, փրկելով զանոնք կո-րուստէ : Եւ որոնց պիտի հետեւի ԲԱՌԱՑԱՆԿԸ :

Հ· Գ· Բ·

Երնեկ է քե, պոռնի՛կ Մարիամ, Ալէլուիա։
Որ Քրիստոսին գաղմէր եղար․ Ալէլուիա
Երնեկ է քե, բո՛ւրդ խանձարուր, Ալէլուիա
Որ Քրիստոս մէջ քե փաթթուեցին․ Ալէլուիա
Երնեկ է քե, քարէ՛ մսուր, Ալէլուիա
Որ Քրիստոս մէջ քե ծուարեցին․ Ալէլուիա
Երնեկ է քե, ալի՛նա ծանորմակ, Ալէլուիա
Որ Քրիստոս մէջ քե օրօրեցին, Ալէլուիա
Երնեկ է քե, Մարիամ Յովսայ, Ալէլուիա
Որ Քրիստոսին օրօր ասեր․ Ալէլուիա
Երնեկ է քե, կո՛յս Մարիամ, Ալէլուիա
Որ թագաւորներ քու տես եկան․ Ալէլուիա
Երնեկ է քե, ս՛րբ Ովանէս, Ալէլուիա
Որ Քրիստոսին քաւոր եղար․ Ալէլուիա
Երնեկ է քե, գե՛տ Որդանէս, Ալէլուիա
Որ Քրիստոս մէջ քե մկրտեցին․ Ալէլուիա

Երնեկ էր էն տարին, էս տարին, Ալէլուիա
Որ Երուսաղէմ շինեցին․ Ալէլուիա
Շինեցին թամամեցին, Ալէլուիա
Սանն ու գերան պակսեցուցին․ Ալէլուիա․
Ծառին զարնեն, ծառ կը ճըչայ Ալէլուիա
Սըղոց քաշեն, արուն փըչայ։ Ալէլուիա
Ով որ Յիսուս երեք բերան կէչայ
Իր հօր մօր մեղք գատաստանին Աստուած չկէչայ։

(Տանը փոքր երեխային անունը կը հարցանեն այստեղ․ ըսենք թէ կը պատասխանուի՝ Ներսէս է)․

Ներսէսը ճութ էր ճըթացու, Ալէլուիա
Իր զաւակներին ամբրաւոյաւ, Ալէլուիա

Հէրը կերաւ ուրախացաւ, Ալէլուիա
Մէրը կերաւ անմահացաւ, Ալէլուիա
Աղբեր կերաւ վեր վեր թըռաւ Ալէլուիա
Քոյրը կերաւ, ինկաւ թոնիր, կօտն երեւցաւ: Ալէլուիա

Ներսէս նստեր ծառի հովին, Ալէլուիա
Բըռչամ թալեր կանանչ ճիւղին. Ալէլուիա
Առջեւ դըրեր բոլոր սինին, Ալէլուիա
Վըրէն եղին հազար բարին, Ալէլուիա
Կը թխեն ի ձեռն նըռան գինին: Ալէլուիա

Օձու լեզուն երկու ճըղէն, Ալէլուիա
Մէկն էր չարոց, մէկն էր բարոց Ալէլուիա
Չարոցն երթէր վեր սարերաց, Ալէլուիա
Բարոցն ի գէր վեր ձեր տան, վեր ձեր տեղաց, Ալէ-
լուիա

— Մամիկ, մամիկ, ի՞նչ կը բանիս. Ալէլուիա
— Բուրդ կը գզեմ, բուրդ կը մանեմ, Ալէլուիա
Սարկաւագին շապիկ կարեմ, Ալէլուիա
Վարդապետին կընգուղ անեմ: Ալէլուիա

— Մամիկ, մամիկ, ես քու ծառայ, Ալէլուիա
Սոլերդ հագի՛ր թող ճըռվըռայ, Ալէլուիա
Դեհ մառնի դուռ ելիր դըրնա՛, Ալէլուիա
Մենք չենք ուզի ձի մ'ու ջորի մ' Ալէլ.
Մենք կ'ուզենք մեր քէֆի գին, Ալէլուիա
Մեր քէֆի գին — պուտիկ մ'գինի: Ալէլուիա

Թէ կու տաք, դուք չէն կենաք,
Թէ չէք իտար, դուք չէն կենաք:

Արեւ արեւ ելի դուրս,
Ոսկի ծամեր թալի դուրս,
Ես կը շողամ,
Ես կը դողամ,
Շող շող սաւան թալ գլխուն:

ԶԱՐՍԱՆՃԱԳԻ ՏԱՂԱՐԱՆԷ ՄԸ ԳՐՈՒԱԾ

Թուխ աչեր, չես իգալ օր մի հարցանես,
Շատ եմ քաշել դարդ ու ղահր քեզ համա՜ր.
Այս կրակխս այլ չեմ կարող դիմանալ.
Սպիտիկ ճակատ, բարակ յօնքըդ են կամար,
Ա՛յ անօղօրմ, ես եղել եմ նաւալար,
Ղարղ եմ եղել, ծովըդ ելնել չեմ կրնար.
Այս կրակխս այլ չեմ կարող դիմանալ:
Գիշեր ցերեկ քո սէրն արել գլխս վարամ,
Ա՛յ անօղօրմ, դեմ քար չե՛մ որ դիմանամ,
Քունս չի գալ, ելլեմ երթամ քնանամ,
Երթամ պահ մի լալով ժուռ գամ, այլ սիգամ:
Գիշեր ցերեկ քունս է հատել աչերուս,
Ա՛յ անօղօրմ, ակա՛նջ արա քու դերոյս
Հէքիմ ես դու, դաս դեղ անես խոցերուս,
Այլ չեմ կարող այս ցաւերուն դիմանալ:
Գիշեր ցերեկ քո սիրոյդ ես հառաչեմ,
Կ'ուզեմ անունդ բէյան անեմ ու կանչեմ,
Այլ չեմ կարող դաղտուկ ապրիլ, կու կանչեմ,
Այս կրակխս ո՛վ կարող է դիմանալ:

Գացինք Գուլէսօր,
Առինք Ջուխ մի սօլ
Հագանք գօրէ գօր:

Գացինք Մօլի դեղ,
Առինք նուկի մ'եղ,
Արինք ծուպեղ։
Տարանք հովլուն,
Առնենք կաթ մածուն։
Հովիւ խըռովաւ,
Կըթոց գըլորաւ,
Ոչխար մալուլաւ,
Բերուր չիւարաւ։

ԸՆԿԶՈՎ ԵՒ ԵՂՈՎ ՊԱՌԱՒ

Պառաւ եկաւ կուղէ կուզ,
Ծոցեր լիքն էր ընկուզ.
Ցրմէնուն բաժնեց երկուս երկուս,
Կիրակոսին քառսուններկուս։
Պառաւ եկաւ խլաթայ,
Եղն ի բղիկէն կը կաթայ,
Ընենք խլենք հալւա ու գաղայ,
Թող Կիրակոս փրթմրթայ.
Ահա՛ յըմէնուս երկուս երկուս,
Ահա՛ Կիրակոսին քառսուններկուս։

ԼՈՒԵՐ
(Մշոյ դաշտէն)

Հաւար լուեր, մատաթ լուեր
Սուր մըռութներ (1), բարակ ձիւեր,

---

(1) Տրթունք։

Ցերեկ կ՚ելնէք պատերն ի վեր,
Գիշեր կ՚ելնէք ծընկներս ի վեր։
Լուսեր եկա՛ն հուրի հուրի,
Քանզ Աճմու հեծիլ ասքըրի.
Հազար տեղով արուն հանեն,
Տընէն հանեն գերի արին։
Հաւար լուսեր, եւայլն։

Լուսերն եկան խաթար խաթա՛ր,
Ելայ փախայ զուր (2) ի Լաթար,
Բոլըրեցի չարք մի աթար (3)
Վըզէս բռնեց լուի թաթար։
Հաւար լուսեր, եւայլն։

Լուսերն եկան չըմալ չըմալ,
Ջիս թալեցի մօտ ուէս Բէմալ,
Ոճիլն առեց բէր ու քէմալ,
Անիծ չըռջեց գըլխուս թէմէլ։
Հաւար լուսեր, եւայլն։

Լուսեր եկան կը խըրխընջան,
Ասըրցուցին գիս մութ քընջան (4),
Կէս գիշերին փըշուր Բ՚մընջան,
Ելայ փախայ ջուրի Սրնջան։
Հաւար լուսեր, եւայլն։

Լուսերն եկան աղով մաղով,
Ելայ վազի չուր ի ձողնով,

(2) Մինչեւ։
(3) Թրիֆ։
(4) Անկիւն։

Փախայ մըտայ Թրիքի կողով,
Ջընկըռտացի աՀով դողով:
Հաւար լուեր, եւայլն:

Ելայ գացի ջուրի Բաղին,
Եկաւ լուերու ծուռ խաթին,
Փախայ մըտայ գամշու չաչին
Բռնեցին գանները կը խաչին:
Հաւար լուեր, եւայլն:

Ելայ գացի ջուրի մէջ Մուշ,
Հասաւ լուերու ծուռ չաւուշ
Փախայ պառայ Մըշու պաղէն,
Հաւար արի Մինաս աղէն·
Հաւար լուեր, եւայլն:

ԳՈՒԼԱՆԸԽԷՆ

Արեւն արեր բուլթայ բուլթայ,
Մարգըրիտ կապեր բացաք փուլթայ.
Ես քե սիրինք, թող ըսեն Յուդայ:

Արեւն արեր կամար կամար,
Մարգըրիտ կապեր ոսկի քամար,
Ես քե սիրինք ջանիս համար:

Ջառըր զարկի ըապայ ըապայ,
Սեւ թանաքայ կարմիր գուզայ;
Ջըլխըլուեթին կ'էնեմ թօրայ:

Թիֆլիզ քաղքի գալան գիտան։
Սարէն կու գան ջուղդ մի փիտան,
Աջէր Մարգրիտ ընծի կու տա՞ն.

Մեր դրան առջեւ առուն հոսած,
Միջու միջու ռէհան ցանած.
Մարգրիտն է իմ սրտի սիրած։

Մեր դրան առջեւ չիչխան ու ուռ,
Աստուած փակէր սարըլի դուռ,
Մարգրիտն ապով դարձեր եմ ծուռ։

Մեր տուն ձեր տուն դիմաց դիմաց.
Հերիք անեմ աչքով իմաց.
Մա՛րգրիտ, էլ ինձ ճար չը մնաց։

Արեւ զարկե խամուռ բերդին,
Կըրակն ինկեր մէջ իմ լերդին,
Մարգրիտն առնեմ թող գիս խեղդեն։

ԿՆԿԱՆ ՀԱԼ

Կաղնի վարոց քօքէհան
Քաշէ արի կնկան ջան.
Կընիկ սեւ օձու նըման,
Զ'Ադամ դրախտից դուրս ի հան։

Ամիկ ելեր կ'երթայ յեդին, Դիլբար ըման, ըման ըման։
Կը շորշորէր քընդ թուխ մազին. Դիլբար ըման, ըման, ըման։

Ամպիկն ելեր կ'երթայ կանգառ, Դիլբար ըման, ըման,
ըման:
Ծամեր յուսին խանգալ մանգալ. Դիլբար ըման,
ըման, ըման,
Ամպիկ ելեր կ'երթայ յօղին, Դիլբար ըման, ըման,
ըման:
Արեւ զարկեր վըղի տօղին, Դիլբար ըման, ըման,
ըման:
Ես ղուրբան եմ քո Ստեղծողին. Դիլբար ըման, ըման,
ըման:
Ամպիկ ելեր կ'երթայ ի ջուր, Դիլբար ըման, ըման,
ըման:
Շահբազին զարկեր ճընճճուռ. Դիլբար ըման, ըման,
ըման:
Ամպիկ ելեր կ'երթայ մարագ, Դիլբար ըման, ըման,
ըման:
Ինչ որ հագեր է մուբարաք: Դիլբար ըման, ըման,
ըման:

(Իմ գրական վաստակներէս)

(*Արեւելեան Մամուլ*, *Նոյեմբեր* 1884)

●

ՀԻՆ ԵՐԳԵՐ

ԳՈՎԵՍՏ ԳԵՂԵՑԿԻՆ

Մաքուր պատկերով, նըման հրեշտակի,
Անգին մարգարիտ յեռեալ ընդ ոսկի.
Սէթ, Աբիսողոմ, Յովսէփ սիրալի,
Անձամբ փայլելուչ ի մէջ ամէնի:

Կու նմանիս դու ծաղիկ նոնենի
Պաղով բարունակ եւ դալար ոստի·
Դու քաղցրահայեաց փթթեալ վարդենի,
Արմաւ եւ շուշան եւ նըշդըրաբենի:
Ցաներդ (յօներդ) է քաշած քան դնչդարի սուր,
Սպանես գերես յաւուրն (յօրն) հազար ու բիւր,
Յով որ կու նայիս նա առնես Եատուր:
Սիրովդ լափեցիր 'ւ արիր սիրտս խոց,
Կու տապիմ կ'այրիմ ես որպէս հընոց,
Սրտէս կու թափի կայծ, կրակ ու բոց,
Զայդ Աստուածային պատկեր քո ինձ ցո՛յց:
Ոսկի ի Հնդկաց 'ւ ակըն պատուական,
Շուրջ գամ եւ փնտռեմ զքեզ անխափան,
Ես եմ քեզ խնդրող եւ վաճառական,
Նա՛յեաց մէկ ընդ իս աչաւքդ (աչօքդ) լուսընկան,
Կամ քա՛ղցր խաւսէ (խօսէ), կամ տո՛ւր պատասխան:
Քո մէջքդ է բարակ քան զուռի վարոց,
Սպիտակ ատամունքդ մարգարտէ շարոց:
Ո՛վ քաղցրատեսիլ պըտուղ դու ծառոց
Այդ շրթին լեզուէդ տո՛ւր երկու զրոյց:
Քան զշամբ եղէգան եղեր ես շիտակ,
Ունքերդ է կամար որպէս զաղեղնակ,
Ղարդ եղէ ի ներս, 'ւ եղէ անճարակ:
Խանչարով սիրոյդ հրեղէն այտերուդ
Հոտայ ի սրտէս եղէ խուրդ ու մուրդ,
Ամպի պէս ածես յիս տատրիկ կարկուտ,
Թէ ես մեռանիմ, քեզ ի՞նչ շահ 'ւ աւգուտ (օգուտ):
Պետրո՛ս, երազդ ի բարին,
Ե՛րնեկ երազ՝ տեսնողին:

×

ՏԱՂ ԳԻՆՒՈՅ

Արարիչ Տէրըն քաղցրացաւ վասն Ադամայ,
Եւ մարդացաւ ի սուրբ կուսէն Մարիամայ,
Յայտնեաց ըզփառս իւր աշխարհի՝ երեսնամեայ·
Նախ սքանչելիսն արար Կանայ ի Գալիլեայ։
Վարդապետն մեծարեցին ի հարսանիսն,
Սպառեցաւ փութով գինին ի սեղանին,
Աւրհնեաց ըզջուրն եւ փոխանակեաց յանուշ գինիս,
Աւրհնութիւն Փրկչին ի տունս եւ սեղանիս։
Քահանայք եւ վարդապետք լցեան սեղան,
Ի առնուն գլըթխայն գինւոյն ի ձեռս անուշահա՛մ է,
Քաղցր երգեն տաղ, մեղեդի եւ շարական,
Անուշանայ բաժակն աւրհնեալ, քաղցրաճաշա՛կ է
Աւրհնեաց Տէրն զհինգ նկանակն հինգ հազարին,
Որ կերան, եւ յաւելաւ եօթն սակառին·
Այն աւրհնութիւն Աստուածային իջնէ ի տունս,
Աւրհնէ զսեղանս, զանուշ գինիս եւ զըմպելին։
Այս աշխարհի սէր եւ պտուղ Տէրն ետ զգինին,
Սիրտ ցաւած մարդն սպեղանի արար սրտին·
Այլ է գինին որ ըմպողաց տայ խնդութիւն։
Յորժամ նստիս դու ի գինին շատ մի՛ խաւսիր,
Քո ընկերին զաղէկն ու վատըն մի՛ ասեր,
Զայլոց մեղքըն հրապարակաւ մի՛ բամբասեր,
Քրիստոս աւրհնէ ըզքո սեղան եւ քո ընկեր։
Թէ ստակ տաս, գինի առնուս եւ արբենաս,
Վէճ բորբոքես, կռիւ հանես, ի բանտն երթաս,
Զընտան ձրգեն, շատ տուգանք տաս, ի զուր զըղջաս·
Քաղցրիկ խմեցէք, եւ բարո՛վ կացէք։

Բիւր քանքարոյ ես պարտական, Աշարխա,
Սակաւիկ բանս որ ասացիր գինւոյն վերայ,
Քաղցրացի՛ քեզ Տէր,
Քաղցրացի՛ մեզ Տէր:

×

ԳՈՎԱՍԱՆՔ Ի ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ

Պայծառ արեգակն ես դու ի գարնան օրերն ի նըման,
Շառաւիղք ի ծաղկունքն իջնուն, ու ծաղի լոյսն դանա-
դան:
Առիւծու նըման ես դու որ անվախն է իշխանական,
Աստուած օգնական լինի քեզ աջովըն տէրունական:
Քո սէրն իմ սրտիս միջին է պատրուս, ծաղկեալ դանա-
դան;
Դու ես վարդ անոյշ հոտով ու կանանչ գինչ ըղմանու-
չակն
Դու ես պալասան հոտով եւ բուրմամբ հոգւոյն՝ սրբու-
թեան
Շնորհքն որ ի քէն բղխէ, նա խնդան հոգիք բանական:
Քարոզ ես Հոգւոյն Սրբոյ եւ խրախոյս առ որդիս
մարդկան,
Համեղ ու քաղցրիկ խօսիս որ դառնան Աստուածսի-
րութեան:
Մոլորելոց խրատ ես եւ դարձուցիչ խիստ անզգամաց,
Լոյս ես դու ի Հոգւոյն Սրբոյ, քեւ ցնծան հոգիքն ի
կայանս:
Դու ես նունուֆար ծաղիկ որ բուսնի անհուն գետնմն
այն,

Խիստ ես գեղեցիկ գունով, որ խնդան մարդիկն ի վը-
րան:
Հիրիկ, կինամոն, շուշան եւ նարգիս, ծաղիկ մեռոնի,
Եղէգնախունկ ես հոտով, որ ծըխեն ի սուրբ սեղանի:
Քըրքում եւ զըմուռս, հալուէ եւ ըստաշխ, զազրէ հնդ-
կական,
Մարդիկն որ վաճառ գընան ու գընեն, խնդութեամբ
դառնան:
Անունդ Արթնութիւն կոչի Գրիգոր զուարթ պետական,
Աստուած դասակից առնէ զքեզ գնդին Առաքելական:
Առ ձեզ պաղատիմք յընկնիմ իմ եղբարք հոգեւորական,
Բերան մ'ողորմիս առէք Մինասին մեղօք պարտական:

ՏԱՂ ԽԱՂՈՂՈՅ ԵՒ ԳԻՆՒՈՅ

Զայն առաջին ժամանակին
Որ պտղատունկն տօնեցին,
Յառաջ զխաղողըն գովեցին,
Մեղացըն զեղ անուանեցին:
Այ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Զանոյշ գինին զանապական:

Պատեցին բոլորեցին,
Պայծառ ծաղկօք զարդարեցին,
Ամէն բարեօք զայգին լցին,
Ապա զայգւոյն զովքն ասացին:
Այ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Զանոյշ գինին զանապական:

Այգւոյ պտուերն են թըզենի,
Շուրջն ու բոլոր արմաւենի,
Ծառերն համայն են խնձենի,
Պտուղ բերեն քաղցր ու բարի:
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Զանոյշ գինին զանապական:

Ծիլն ու բողբոջ դալար բարակ,
Երկայնացեալ զինչ բարունակ,
Ուռեր հաներ մանր ու չիտակ,
Խաղողն ի կախ սեւ ու սպիտակ:
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Զանոյշ գինին զանապական:

Յորժամ աշունքըն մօտենան,
Այգեպաններն ելնեն եւ գան,
Յաջոյ ձեռին սուր ու դանակ,
Զախուն բռնեն կթոց քաղելակ:
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Զանոյշ գինին զանապական:

Ըղքեղ քաղեն, դընեն հընձան,
Ըղքեղ կոխեն լընուն յաման,
Ըղքեղ ծեփեն, այլ ո՛չ բանան,
Լինիս բաժակ անապական:
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Զանոյշ գինին զանապական:

Թաղաւորաց առաջ երթաս,
Ոչ ամաչես, ոչ վախենաս,
Շատ պարոնայք սպանել դու տաս,
Բազմած խելաց առնուս եւ տաս:
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Ջանոյշ գինին զանապական:

Նոյ նահապետն է քո մշակ,
Եւ ի Փրկչէն օրհնեալ բաժակ,
Ի յայն տեղըն դու չլինիս,
Ոչ ժամ ասեն ւ՛ ոչ պատարագ:
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Ջանոյշ գինին զանապական:

Շատ սիրելիք կռուեցունես,
Շատ ատելիք հաշտեցունես,
Շատ անխելք մարդ ի խելք բերես,
Շատ խելացիք խեւացունես.
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Ջանոյշ գինին զանապական:

Սարկաւագներ ըզքեզ տեսին,
Սաղմոսելով ի դէմ եկին,
Մոմով, խնկով մեծարեցին,
Առեալ տարան յեկեղեցին:
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Ջանոյշ գինին զանապական:

Այլ ւ՛ի վեր մեծարեցին,
Վերայ բեմին բազմեցուցին,

Զքեզ սուրբ հայորդք պաշտեցին,
Մեղաց քաւիչ անուանեցին:
Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր, իմ Խաչատուր,
Զանոյշ գինին զանապական:

Տեառն պարգեւ ես Տիրատուր,
Իմ անունս է Աստուածատուր,
Զկըթխայն ՚ի լի արա եւ տուր,
Դու շատ ապրիս, իմ Խաչատուր,

Ա՛յ, լից ու տուր, լից ու տուր,
Զանոյշ գինին զանապական:

×

ԾԱՆՐՈՒԹԻՒՆ ԿԵՆՑԱՂՈՑՍ

Ե՛ղբարք, ձեզ շատ բարեւ, շայով,
Թէ յաշխարհէս ո՞նց կայք դուք բարով,
Ժամանակ երկանցաւ,
Ի միմեանց եմք կարօտով:

Մարմինս չաղախեալ մեղօք,
Սեւացեալ հոգիս իմ աղմովք,
Ճարակն յԱստուծոյ լինի,
Բժշկէ զհոգիս սուրբ գեղովք:

Գերիս հարբեցայ մեղաւք,
Զօրն ի բուն շուրջ գամ քան զգինւով.
Մատաթ, դե՛ղ արէք փութով,
Թէ չէ, կորեաւ մարմինըս հոգւով:

Զինչ նաւն ի ծովուն միջի
Ղարղ լինի նա քամւով,
Այսպէս իմացիր զգերիս,
Ցեղբօրէ եմ խիստ կարօտով:

Գինին ի գլխէս թափաւ,
Սեւերես եղէ 'ւ ամօթով,
Այլ ճար չիմացայ գերիս,
Զօրն ի բուն շուրջ գամ լալով:

Ցիմարս յաղթեցայ մեղօք,
Ու հոգիս հարաւ սլաքով,
Հարամկին ընկեր ես եղայ,
Կ'այրիմ անոնց կրակով:

Այս սուտ անցաւոր աշխարհս
Շաղախեց գլխս աղտով, աղմով,
Մինչ հիմն իմ էր ի հողին,
Ողողեց գարնան հեղեղով:

Տարաւ ի յանդունդն իջոյց,
Ու փակեց անտաշ քարերով,
Ես յոյսս յԱրարիչն ունիմ,
Խալլաէ զեղկելիս փութով:

Սպիտակն ի յալիքս անկաւ,
Կտրեցաւ սիրտըս մէկ նետով,
Զինչ ճիւղն ի ծառին չարժի
Ու թափի ղազալն իւր կամով:

Զօրացեալ խուխւ ղաւնայ
Որ ժողովլի նա աշնան քամիով,
Այս կեանքս է նանիր ունայն,
Ցնդեալ եմ ես երազով:

Քարամն Աստուծոյ լինի,
Ինձ դարձ տայ սրտի կամաւ.
Դարձեր եմ լեղի կարաս,
Խոցոտեալ մարմինս չարաւով:

Այլ ճար բան չգիտեմ դերիս,
Քան զԴաւթայն մեղայն ասելով.
Ջիւր արեամբ գընեալ ծառայս
Ցատինին չառնէ ամօթով:

×

ՎԱՍՆ ԱՂՔԱՏԱՑ ԿԵՐԱԿՐՈՅ

Եղբա՛րք, ձեզի բան մի պատմեմ,
Որ լողներն զարմանան,
Աղքատ, հարուստ, ծեր ու տղայ
Ամենեքեան թո՛ղ իմանան:

Մէջերնիս սահմանք մի մրտեց,
Կէօեա աղքատն·են հողացեր,
Ջայն եկեր աղքատն է տարեր,
Որ զուր տեղ զայն բերան կ'առնէն:

Աստուածածնի (տօնի) մօտ օրերը
Կ՚ելլան եկեղեցպանները,
Կ՚իջնան չարշին ու խաները,
Մատաղի համար չուրջ կու գան:

Ժամերը ծանուցումն կ՚ընեն,
Աղքատաց անունը կը հանեն.
Խեղճ ժողովուրդն ալ ի՞նչ ընէ,
Աղքատաց է տէյի՝ կու տան:

Խան չեն թողուր, չարշը, պազար,
Էսնաֆներն կ՚ընեն պէզար,
Ղուրուշ կը ժողվեն հազար,
Չի մնար մէյխանէ ու խան:

Կը բերեն հինգ–վեց եզն կ՚առնեն,
Հախ կու տան աղձը կը բռնեն,
Մեղքն ու վարձքն իրար կը խառնեն,
Տէ՛ս թէ գէր միսերն ո՛ւր կ՚երթան:

Խազանները խումիչ չըրած,
Առաջ պարխաճներ են բերած,
Ձեր պարխաճի անկն անիծած,
Դարձեր են անօթի գազան:

Աս տարին տեսանք մէկ քանին,
Հարամ չուտող ամիրանին,
Մեծ մեծ պարխաճով կը տանին
Որ տեսնողներ չընեն կիւման:

Ընկլիւզցի Հաճի Սինանը,
Սօֆնոց էն պաշ պէզիրկեանը,
Մեծ պարխաճ մը բերեր տանը,
Փէշլին ներքեւը շատ մարդ տեսան:

Գիտուն Նիկողոս դըպիրնիս,
Հէմ իշկէնպէ տարաւ, հէմ միս,
Ռաք ու գլուխն ալ մենծերնիս.
Աղքատն ուտելու չէ արժան:

Անոր կէօրէ մըտմըտացէ՛ք,
Ղուսուր մնացածն իմացէ՛ք,
Ժողովո՛ւրդ, դուք ձեզ խղճացէ՛ք,
Աստուած ըլլայ ձեզ օղնական:

Աղքատներ տահա չը գնացած,
Խազանները միս չմնաց,
Ռաք, իշկէմպէն, գլուխն գընաց,
Նայեցէ՛ք, կաշին ալ չը գողնան:

Իրիկունը դուռը ափ կ՚առնեն,
Պարխաճնի գողտուկ կը բռնեն;
Հէմ կը չալեն, հէմ կը խառնեն,
Կը փըրցունեն դըրան հալկան:

Եասաքճըն թո՛ղ չքնանայ,
Որ գալողն երթողն իմանայ,
Աղքատ որ գայ, դուռ չի բանայ,
Վա՛յն եկեր աղքատի վըրան:

Կէս գիշերուն գազանները,
Միս չեն թողուր խազանները,
Քիւրքլիւ խոշոր իշխանները,
Եկեղեցպանները ի՛նչ վայ տան:

Իշխանները պօշ չեն դատեր,
Միսը հում իքէն է հատեր.
Տէրտէրները անկուշտն է պատեր,
Թո՛ղ կրեն, պէլքիմ կըշտանան:

Չէ՛ թէ անոնց ալ հաւասար
Եաղլը կըտոր կու տան թէ ՚տար,
Աղքատ տէրտէրներուն նաչար
Անչահ տեղէն կըտոր մի տան:

Ժամկոչնե՛ր, մըտաց չի հանէ՛ք,
Եանլըշ տեղ պարխած չի տանէք,
Չէ նէ սօրա զարար կ՚ընէք,
Կը հանեն ձեզ ժամկոչութենէն:

Երբոր մատաղը կը խաշեն,
Միսը կ՚առնեն, եղ կը քաշեն,
Աղքատաց սիրտը կը մաշեն,
Թէ սա՛պր ըրէք, ժամէն ելլան:

Խեղճերը ժամուն կը նային,
Երեք չորս մարդ կ՚ըլլան թային,
Բաժնելու աղքատաց բայըն,
Ոսկոր, եա ճիկէրի լօքման:

Աղքատները անով կը խաբեն,
Խեղճերու սիրտը կը լափեն,
Անեղ ջրով փիլաւ կ'եփեն,
Բանին խօլայըն նոր գըտան:

Մէկ իշխանը բերնովն ասաց,
Թէ փիլաւին մսի ջուր չմնաց,
Թէքըմար պաղգալին մարդ գընաց,
Որ հինգ–վեց օխայ եաղ առաւ:

Ջէնկինը պարխաճով տարաւ,
Աղքատ կար որ իսկի ՝չառաւ,
Կուրին մէկն ալ քէօթէկ կերաւ,
Միս կ'ուզես տէյի՝ բարկացան:

Խափուճի Խաչօն ծըռուեցաւ,
Հաճի Մովսէսին հետ կըռուեցաւ,
Հալխը մէկզմէկու խառնուեցաւ,
Արիւն պիտի ըլլար օրթան:

Այս բան յառաջ եղեր բարի,
Սօնրա դարձուցեր են չարի,
Որ խաղք կ'ըլլան ամէն տարի,
Թէ՛ կահեա, թէ՛ եկեղեցպան:

Հոս իշխանները սուչ չունին,
Հազ չեն ըներ այս բաներէն,
Եախա կը պատռեն, կը զանեն,
Հանդիպողներն եղեր են փոշման:

Անճար մէյմն է եղեր ատէթ,
Անոնք ալ կ'ըսեն՝ նէ՛ հաճէթ,
Մեզի թող չըլլայ պէտիաթ,
Չիւնքի յառաջ եղեր է սահման:

Ամէն գալողն ասանկ կ'ըսեն,
Աս բաները գրքէ դուրս են.
Գիտցող մարդիկն ալ ի՛նչ ըսեն,
Շիտակ խօսին՝ աչքէ կ'ինկնան:

Թող թողուն մեզի մեր հալը,
Չի կողոպտեն հալխին մալը.
Պէտք չէ իրենց ժողվել տալը,
Մենք խայիլ ենք ժողովրդեան:

Տանողներն ալ ի՛նչ նախատինք,
Պէտք է օր առաջ խրատէք,
Վարձք է տէյի՝ կ'ըսեն՝ կ'ուտենք,
Չեն գիտեր, այնպէս կ'իմանան:

Հայր վարդապետն ալ ի՛նչ գիտէր,
Տանող զէնկինները կը դատէր.
Կամ օր յառաջ խըրատէր:
Անոյշ խրատով զանազան:

Ըսէր.— Մա՛րդիկ, ի՛նչ կու դատէք,
Մեծատո՞ւն էք թէ աղքատ էք,
Աղքատաց հախը ինչո՞ւ կ'ուտէք,
Չէք լսեր գիրք, Աւետարան:

Դուք տըներդ ալ ասանկ կ'ընէք,
Մատաղի անունը կը հանէք,
Մէկզմէկու տուն կը տանէք,
Ուտէք խըմէք ազգ 'ւ ազգական:

Իրաւին՝ այդպէս իմանաս,
Ժողովրդեան միտքը բանաս,
Աղքատներն ալ չմոռանաս,
Հօրդ հոգւոյն, Հա՛յր Սրբազան:

Ինչ որ է նէ, փէշտահ ըրինք,
Քանի մի խօսք մէկտեղ բերինք,
Շատ բան կայ մէջը չդրինք,
Աս հէրիք է մեղի ուէսթան:

Ես աս տէսթանս կը կարդամ,
Գիտնամ թէ քիւրէկը կ'երթամ,
Ես աղքա՛տ եմ, եօղսա փարթամ,
Որ սալթ փիլաւ առանց հաց տան:

Րախիէն զինիէն անցանք,
Միսը գնաց, հացն ալ մոռցանք,
Քիչ մի փիլաւ առինք դարձանք,
Անանկ տալուն՝ հիչ թող չի տան:

Արթըրխ_պօշ, թողունք աս բանը,
Քաշենք, կը կըտրէ չուանը·
Հէլպէթ Տէրն կու գայ դիւանը,
Կու տեսնայ չիտակ դատաստան:

Դու ամէն օր չխօս'կ ղատէ ,
Հէլալ ու հարամը զատէ',
Ասոնց պլւթիւնը Աստուած գիտէ ,
Շատ չխառնենք, եախան թող տանք:

— Ճէրեան օղլու, աս ե՞րբ ըսիր ,
Այսքան բաներ մէյտան բերիր:
— Թուրն հազար երկու հարիւր
Քսաներեքն էր թուական:

Հաւաքեց
Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

(Արեւելեան Մամուլ, *Փետրուար,*
Մարտ, Մայիս եւ Յունիս 1885)

Ի ՎԵՐԱՅ ՀԷՐԻՍԱՅԻ

Այս գովասանք Հէրիսայի
Ասացեալ է Մինաս դպրի,
Որ քաղաքաւ էր Թօխաթցի
Ցիտոմ մեռաւ Իլովատանի:

Ի հողոյ հաւասար անկնէ
Եւ անարժան ձեր ծառայէ
Շատ կարօտիւ բարեւ հասցէ,
Ծունրը կրկնեմ յուղիղ սրտէ:

Զորպէսն ձեր հարցանելով,
Կենցաղոյս ձեր որոնելով,
Առողջ կեանք երկար ամով,
Թէ' ի ցամաք եւ թէ' ի ծով:

Մտամոլոր մեղաց գերի,
Թուղթ գրեցի Հէրիսայի,
Շուտով առ ձեզ ուղարկեցի,
Միթէ բարի խապար հանի:

Կամ եւ նայիմ ես դեգերած,
Անձամբ գըծուծ, մտօք կորած,
Աչվըներովս եմ մըրափած,
Կիսահիւանդ էի պառկած:

Յանկարծակի դուռըն բացին,
Զմօհրած նամակն ի յիս տուին,
Կարդա՛ ըզսա դու առանձին,
Զքոյդ թըղթոյ պատասխանին:

Հիւանդ մարմինս ի դող ելաւ,
Շուտով փութով առողջացաւ,
Սիրտս հոգւով ուրախացաւ,
Երբ հէրիսին խապարն հասաւ:

Հոգեւո՛ր Տէր, ես քեզ ծառայ,
Քեզ անառակ որդի եղայ,
Եւ ղալտեցայ իբրեւ զՆւայ·
Թէ ՚ւ արժան չեմ, ղապո՛ւլ արա:

Սուրբ վարդապետ, քաջ եւ արի,
Արթուն անուամբն Վանեցի,
Շատ հէրիսայ կերցուց ինծի,
Մէկին հազար իւրըն տացի:

Թէպէտ ես եմ խիստ մեղաւոր,
Հիւանդ հոգւով, ծեր ալեւոր,
Ի ձեր առջին եմ գլխիկոր
Ղապո՛ւլ արէք սրտիւ յորդոր:

Բուն Բարեկենդանն մօտեցաւ,
Ուրախութեան ժամըն հասաւ,
Հարեղաթողըն բարձըւաւ,
Մորթէ թոթովն անհետ եղաւ:

Յայս դառն տեղն որ մեք անկանք,
Ամէն բանէ մահրում եղանք,
Հոգեւորէն զըկուեցանք,
Եկանք մարմնոյ ծառայ եղանք:

Յոյս ունիմ առ Տէրն ամենի,
Միթէ չուտով ինձ ողորմի,
Նաեւ փութով մահ չը կամի,
Դառնամք երթամք ի մեր տեղի:

Բարեկենդան է, մի՛ մեղադրէք,
Զինչ որ ասեմ ի վեր չառնէք,
Զհէրխայլին թաղպի՛ր արէք
Եւ կանխըկէկ ուտեցուցէք:

Ա՛յ հէրխայ իմ գովական
Ոչ ուրեք կայ ի քեզ նման,
Ամէն մարդիկ զէմ քեզ դողան,
Ես առաւել ես անարժան:

Ա՛յ հէրիսայ իմ գովելի,
Բազում բարեաց ես արժանի,
Շաքար եւ մեղր ի դէմ քեզի,
Բնաւ ի քեզ ո՛չ նմանի։

Ա՛յ հէրիսայ իմ գովելի,
Արժան լինիս դու իմ բերնի.
Կակուղ լօշով ի կուլ տայի,
Կարմիր գինով զքեզ թաղէի։

Ա՛յ հէրիսայ իմ սիրելի,
Ամենեցուն ես ցանկալի,
Յերուսաղէմ, յամեն տեղի,
Առանց քեզ մատաղ չլինի։

Ա՛յ հէրիսայ, ապուր գոված,
Յամենեցուն ես դու պատուած,
Թէ կենդանեաց եւ թէ մեռած
Դեղթափ ես դուն փորոյն քաղցած։

Ես ծեր ալեօքս մեղաւոր,
Զքեզ կու սիրեմ սրտիւ բոլոր,
Զինչ որ սպաս կայ խիստ աղւոր,
Ամենեցուն դու թագաւոր։

Վա՛չ, թէ ինչպէս անգէտ մարդ է
Որ քո հարկիքն չը գիտէ,
Կամ զքեզ սիրով չը մեծարէ,
Կամ առանց քեզ մատաղ առնէ։

Ա՛յ հէրիսայ, գիս խեղճ արիր,
Որ այս երկիրըս ձըգեցիր
Տարին անգամ չես հանդիպիր
Որ գքեզ ինծի ի կեր տայիր:

Ա՛յ խիստ անոյշ ես, հե՛րիսայ,
Երբ արդար եղըդ շատ լինայ,
Կակուղ հացիկ ընկերանայ,
Ով որ ուտէ ուրախանայ:

Այլ զինչ գովանք տամ հէրիսին,
Երնե՛կ անոր որ հանդիպի,
Կամ ես եւ դու մէն պիտէի
Սրտիս մէջըն քեզ տեղ տայի:

Զինչ ազգ որ կան ի յաշխարհի,
Քեզի գովանք տան հետ ինծի,
Եւ փափաքին ի դէմ քեզի,
Որպէս մեղու ի դէմ ծաղկի:

Վարդապետաց դասք ամենայն,
Եւ կրօնաւորքն միաբան,
Յորժամ տեսնուն ըզհէրիսան,
Ամենեքեան զվանքն ուրանան:

Երիցականքն ամենեքեան
Զերէցկնոջ ըզթարկըն տան,
Զամէն ուսումն մոռանան,
Վազեն երթան ի հէրիսան:

Աղքատք եւ կոյրք որ կու մուրան,
Ծերք եւ տղայք, կին պատուական,
Ամենեքեան համանգամայն
Վազեն երթան. ի հէրիսայն:

Տաճիկն, պարսիկն մահմետական,
Թողուն փիլաւն եւ ըզգարտան,
Ըզփախլաւանն եւ ըզգերնեան,
Եւ գան ուտեն ըզհէրիսան:

Ազնիւ ծաղկանց դու նման ես,
Համասփիւռ եւ վարդի թերթ ես,
Որտեղ որ եփեն զքեզ,
Անմահութեան հոտ կը բուրես:

Որպէս զոսկի անապական,
Քան զանդլին քար ես պատուական,
Մեռած անձինքն ուրախանան,
Եւ կենդանիքն քեւ ցընծան:

Հարք եւ եղբարք իմ պատուական,
Մայրեր, քոյրեր, ամենեքեան,
Խնդրեմ ձեզնէ լալով ական,
Որ չի մոռնաք ըզհէրիսան:

Երբոր եփէք ըզհէրիսան
Ինձ ղարիպիս կեր տայք արժան.
Ի յԱստուծոյ տացի փոխան,
Այքայութիւնն անանցական:

Ի Թվականիս հազար ամի
Եւ տասներկու Թիւ աւելի,
Ի յամսեանն փետրուարի,
Օրն էր ութրաթ հինգ համարի:

Երգս գրած է Մինասի,
Անմիտ, յիմար եւ փանաքի,
Զեզ արմաղան ընծայեցի,
Զիս յիշեցէ՛ք սիրով բարի:

Հաւաքեց
Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

(Արեւելեան Մամուլ, Յունուար 1886)

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐ

(ՍԵԲԱՍՏԻԱ)

— Օղն ի օղը օղն ի պարանն ինկաւ (= Բանը բանէն անցաւ):
— Շատ պըտըտան բապուճը՝ աղբ կը կըրէ իր տունը:
— Բերնէ բերան՝ կ'ըլլայ գերան:
— Կճիկը գլորեցաւ գարանքը գտաւ:
— Պատը պըտըտեց (= Փախաւ, անյայտ եղաւ):
— Մաղը ծակ է:
— Շատ հաջան շունը տաւրին գայլ կը բերէ (= Շատախօս մարդը միշտ կը վնասուի):
— Կ'եփի կ'եփի եփն ի վրան, ոտվին դարվեր խուփն ի վրան (= Եթէ գործ մը գաղտնի պահես կամ բախտին թողուս ինքնիրմէն կը յաջողէ):
— Կ'ելլէ կիրք կ'ըտրէ գլուխ, կ'իջնէ կիրք չգտներ

գլուխ (=Բարկութեան ժամանակ եղած գործը միշտ վնասակար կ'ըլլայ):

— Մախոխին բլուկն հոտեցաւ, ծաղարղարը մօտեցաւ (= Երկայնմտութեամբ համբերելուն վերջը բարին կ'ըլլայ):

— Քարը կ'երթայ քարկոյտը (= Հարուստին բանը միշտ յաջող կ'երթայ):

— Մածունը փչելով կ'ուտես, կաթ լեքէն բերանդ եռած է:

— Փէքսիմէտ ունիս նէ թըրջէ թըրջէ կեր:

— Երթամ Թոխաթ բերեմ մախաթ (= Դուն ի զուր կ'աշխատիս, ես գործս կարգի դրած եմ, վա՜յ խելացդ գլխուն):

— Շունը շանը միսը չուտեր:

— Հացը ծունկն է:

— Կուշտն անօթուն մանր կը փըշրէ:

— Մեծ պատառ կե՛ր, մեծ մի՛ խօրաթեր:

— Սուտ ճղնաւոր եղեր ես գեղին հորթը կը մորթես, վանքին հաւերը կը կըրես:

— Քարն ի քարը քարն ի պատը:

— Բօշի աէյնէկ ծամեր է:

— Արտը մեր էր դէմն անցաւ (= Առիթը ձեռքէ հանեցինք):

— Դուռդ ձի՛գ գիր, դրացինդ գող մի՛ բռներ:

— Անժուր ջուրին փիլաւ կ'եփեն, բանին զօլայը նոր գտան (= Խարէութիւնը ձեռք առին, կեղծաւորութեամբ մարդ որսալ սկսան):

— Բանին զօլայը գտեր ես, պաղ փռնէն տաք հաց կը խըլես:

— Ծառայ եմ կախ կախ փէշերուդ:

— Աղտեցի ես թելլի ես, ուսկից որ է պէլլի ես:

— Մարդու հալէն հի՞չ չես գիտեր, կէս գիշերուն ժամ կը ձենես։

— Գողը գողէն գողացաւ, Աստուած վերէն զարմացաւ։

— Ղաչաղուն ձեռքը որ առնես բոլոր ջուրին կը քերվի (= Անտարբեր խօսք մը որ ըսես յանցաւորը վրան կ'առնէ)։

— Մոմն իր տակն լոյս չի տար։

— Կ'երթաս առնանցդ կը փնտռես մարանցդ։

— Էշն ի՞նչ գիտէ բերնին նուշը, կ'երթայ կ'ուտէ կածըլ փուշը։

— Կու տաս Աւետարան, կ'առնես տամպուռան։

—Ուլուն կ'ըլլայ ածուն կ'ըլլայ, կը մակարդես մածուն կ'ըլլայ։

— Էշն ի՞նչ գրեր է մտին, տոպրակով զարին քթին։

— Ժամուն ելան ճաշը կերան, սխտորեցին խազը կ'ե-րան (= Ամէն մարդ իր գործը կարգին դրաւ, մեր բերանը բաց մնաց)։

— Խելօք խելքիդ ի՞նչ գրեր ես, եզան տակը հորթ կը փնտռես (= Անխելք, դու անհնար բաներու կը հետեւիս)։

Օր մը բարով բարկենդանք, օր մ'անօթի սըկըլտանք։
Խենթին կովն է կորեր, խելօքին խրատ է եղեր։
Ջուրը ծառը կը հանես (= Դիւրին գործը կը դժուարացնես)։

Անբոյսը անծինին բեռցայ, անդադարին երդիքէն ան-ցայ (= Աղը ջուրին բեռնաւորեցի, կամ որջէն անցայ)։

(Արեւելեան Մամուլ, *Փետրուար* 1886)

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԽԱՂԱՍԱՑՈՒԹԻՒՆՔ ԿԱԼԱՓԿԱՅԻ ԵՒ ՍԻՒՐՄԵՆԻՈՑ ԲՆԱԿՉԱՑ

Ա․

Դիմացն ի վեր կու գաս դուն խլվլալով,
Հագած կապած էիր գը(1) կարմրով, ալով․
Քեզի տեսնող աշուղը ժուռ կու գայ լալով։
— Վա՜յ իմ արեւուս, ցաւէդ առնում, Ովանէս։

Լերին կողնած (2), գիտեմ թէ մէն (3) ես,
Հետս չես խօսիր, գիտեմ թէ քէն ես․
— Վա՜յ իմ արեւուս, ցաւէդ առնում, Ովանէս։

Գոմերը (4) կ՚ալեն, ասուրիդ կ՚ուզուեն (5),
Մանելով եղելով փէշերդ մաշեր ես,
Երեսիդ զլլիֆներ քովէ քով քաշեր ես,
— Վա՜յ իմ արեւուս, ցաւէդ առնում, Ովանէս։

Պէրքին (6) տէրը էգառ (7) անցաւ արեգին,
Գիշուն (8) տէրը զահր ու պէնտ է ծոմակին (9 ։
— Վա՜յ իմ արեւուս, ցաւէդ առնում. Ովանէս։

Ովանէսն լաածը հողէն կու հօնդէր (10 ,
Հարիկ մարիկ չունէր ո՞վ պիտի մօն գէր (11 ·
— Վա՜յ իմ արեւուս, ցաւէդ առնում, Ովանէս։

Շատ կուճ հալ էր (12) կէնճ կտրիճը մեռնիլը,
Հարսը քըղքին տակէն երկիր առնելը (13)·
— Վա՜յ իմ արեւուս, ցաւէդ առնում, Ովանէս։

Ովանէս բածը մէկ պզտի նէզուղ (14),
Թուվանքին ունի արծաթ պլլէզուղ,
Հայ ու տաճիկ վա՛յ կ՚ըսեն, եազուղ։
— Վա՛յ իմ արեւուս, ղատէդ առնում, Ովանէս։

Մեծամեծ աղբարը մահըքէմէն գնաց
Մենծերուն սիրտը դողաց ու տըխաց։
— Վա՛յ իմ արեւուս, ղատէդ առնում, Ովանէս։

ԲԱՌԵՐ.— 1. Հազած կապած էիր տը.— Հագած կապածներդ, կամ՝ հագած կապած էիր դու։

2. Լերին կողնած.— Լերին կանգնած։

3. Մէն.— Մինակ։

4. Գումբր.— Գոմ անասնոց։ Յոգնակի՝ գոմեր։

5. Կուղոտին.— Կոյ, աղբ, կոյոտել, աղբոտել։

6. Պէրք.— Գեղեցիկ, սիրուն, լաւ։

7. Եղառ.— Էառ, առաւ։

8. Գէշ.— Տգեղ, անպէտ։

9. Ծոմակ, ծըմակ.— Ջոր ձիւնով լի, ուր արեւ չի ծագիր։

10. Հօնգել.— Հանգել, հանգչիլ։

11. Մօն գալ.— Ման գալ։ Մօն գէր.— Որոնէր, փնտռէր։

12. Կուն հալ.— «Կիւն հալ». դժուար վիճակ։

13. Հարսը քըղքին տակէն երկիր առնե-լը.— Քօղքին տակ եղած հարսը օտարէն յափշտակուիլ։

14. Պզտի նեգուղ.— Փոքրիկ եւ քնքոյշ, «նազիգ»։

Բ.

Յօքոր (1) գարունը կու գայ, Կուկուն (2) կու կօն-չէ(3),
Ոտքս փուշ պատեցաւ, սիրտս կու խոռչէ.
Կօնչէ, Կուկուս, կօնչէ, քու բօնը բօն չէ,
Կօնչէ, Կուկուս, կօնչէ բարձ ի լեռներէ,
Էշթամ (4) ղարիբութիւն, վախեմ մեռնելէ,
Կուկուն էլ թառեցաւ ածուքին (5) պատին,
Աստուած հոգիս առնուր մայրիկիս գոգին,
Ել արի, ել արի, ել քանի քանի
Սիրտս քամուեցաւ, քունս կու տանի։
Կուկուն ու մեղուն կոմակ (6) կու կրեն,
Մոմ կ'ընեն, կը գոլեն (7) Զաքարին հոգուն։
Զաքար, քու կրակը շատ մաշդիկ (8) գոլէր,
Ոչ էլ Աստուած կուտէր (9), ոչ մայր կու բերէր։

ԲԱՌԵՐ.— 1. Յօքոր.— Երբ որ։
2.— Կուկուն.— Կուկու թռչուն։
3. Կօնչէ.— Կանչէ Բօնը.— Բան (ամէն *Ա.* կը հնչուի Օ.)։
4. Էշթօմ.— Երթամ։
5. Ածուք.— Փոքր պարտէզ։
6. Կոմակ.— Պարէն, ուտեստ։ Փափկաճաշակ։
7. Գոլեն.— Վառեն։
8. Մաշտիկ, մաշտ.— Մարդիկ, մարդ։ Այսպէս է վարդանը՝ վաշդան, վարդապետ՝ վաշդապետ, եւայլն։
9. Ոչ Աստուած կուտէր.— Ոչ Աստուած կու տար։

Գ.

Ճերմակ ծոցին կարմիր խնձոր չարել է,
Զը թողին որ գլուխս առել փախել է,
Զը թողին որ էշթէլէ (1) մալխս ու մուլքխս,
Ախ ու վախ կոնչելով կու քաղուի հոգիս։
Հոգիս տուի՛ բուռ մի տեղն գնեցի,
Անզուռ անէրտիք տուն մի գնեցի.
Սարերը կը բունին եզներուն ապօր,
Հայրս ու մայրս ինձմէ մնացին կարօտ.
Արգուին ճիհէզը հինգ ձի բարձուցին,
Մակարն էրի (2) գուռը, դարտակ դարձուցին։

Գնա՛, Արգու, գնա՛, մէյմէլ եա աչէ,
Երեսիդ զիլիֆները քովէ քովէ քաշէ,
Լաչին կայծի (3) Գալաճուղին փոսերը,
Մըռեղն (4) ինկաւ Արեւժանու փոսերը,
Աղջիկները եա լարին կու ոսփերը (5)։
Մըռեղն ինկաւ ու սարերը հովեց,
Էրի Սիմոնին խապար վեր բովեց (6),
Օսկայ (7) էկին Ոսկեհատին կովերը,
Օնկանգնուց կախ ունին ոսկի օղերը,
Տուէք պաշար եկէ էշթայ քովերը։

ԲԱՌԵՐ.— 1. էշթէլէ.— Երթայի։
2. էրի.— Եկաւ։
3. Լաչին կայծի.— Ածել, արածել (Լա–

չինը թերեւս նշանակէ հոտ կամ նախիր. չը կրցի ճշդիւ իմանալ)։

4. Մոել.— Մռայլ, մութ, ստուեր:

5.— Սոփեր.— Սոփ, ոտք եւ սրունք: Լարել սոփեր.— Ոտքը վերցնել, արագել, շտապել, տուն դառնալ:

6. Էրի, էկաւ, խապար վեր բովեց.— Բովեց՝ հասաւ։

7. Օսկայ.— Ահուասիկ:

Դ.

Հարսներ կու գան տաւիկ տաւիկ,
Կարմիր խնձոր անոյշ հոտիկ,
Բեր հոտուըտամ քնթիդ մօտիկ:
Գեղէն վար՚դին արտ մի գարի,
Մէջը կայ երկու բոյն բուլբուլի,
Մէկն է հարս ու մարս,
Մէկալն է իմ սիրած եարս:
Արզուն կ՚ընէր պատին վրայ,
Աղլուխ շինէր մատիս վրայ,
Կացին առի մտայ մօրին,
Ջարկի ծառին, բղխաց արիւն:
Ղաթար ղաթալ կու գայ տէվէն,
Ծիտը ծուռ էր, ոտներն էրկէն,
Հէյ վա՜խ Արզու, հէյ վա՜խ քըզի,
Տարան տուին Թէփէկէօզին:
Ոտուխս բոպիկ, ճամբան փուշ,
Սուրբ Կարապետին համն անոյշ,

Մեր ածուքին ծաղկած է նուշ
Արգուն գընաց, էրի յուշ։

Ե.

Խաղ մի դլխեմ, չե՛մ ասեմ,
Պէհլիմ բարկենդնին կ'ըսեմ,
Մարիկս գաթայ չինէ,
Հէմ կ'ուտեմ, ու հէմ կ'լսեմ։

Ուտենք հացը, զարնենք պարը,
Ելնենք եայլանուն քարը։
Էս էլ պար էր, էս էլ խաղ էր,
Էս էլ տարուան տարպումըն էր։
Ո՛ւյ մարիկ,, ո՛ւյ մարիկ, փորս էլ ցաւեցաւ,
Ֆաթիհ Մէհմէտն էրէ, փորիս ցաւ չ'անցաւ։

×

Վերջին տողը կը յիշեցնէ Տրապիզոնի առումն Ֆէթիհ Սուլթան Մէհէմմէտէն. եթէ այսպէս՝ ուրեմն այս երգը, կամ երգին մասերը, ժամանակակից են յիշեալ դէպքին, որոյ արձագանգը հասեր եւ մուտ գտեր է գաւառի ժողովրդեան սրտին ու մտքին մէջ, եւ պահպաներ ցայսօր այդ անգիր՝ այլ անջինջ յիշատակարանին մէջ, այն է՝ աւանդութիւն եւ երգ։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

(Մասիս, 21, 31 *Մայիս եւ* 14 *Յունիս* 1886)

ԳՈՎԱՍԱՆՔ ԵՐԿՆԻ ԵՒ ԵՐԿՐԻ

Երկինք գետին յիրար ընկան:

ԵՐԿԻՆՔՆ ԱՍԱՑ

Իմ զարդարանք քան զքում շատ է.
Ջուխտակ ծառայ ունիմ, Լուսնակ, Արեգակ,
Իմ փառքն է եօթն բանդ լուսեղէն անըղնակ.
Աստղունք բիւր ու անհամար:
Իմ զարդարանք քան զքում շատ է:

ԳԵՏԻՆՆ ԱՍԱՑ

Անթիւ ծաղկունք ունիմ, խառ ու մառ է,
Սալվի, չինար ծառերս երկնուց բարերար է
Աննըման հաւքեր ունիմ, Բլբուլ վեր վարդին կը թառի,
Անդունդ ծովեր ունիմ, բոցն ու ճրագ մէջ կը վառի:
Իմ զարդարանք էլ քան զքումն է:

ԵՐԿԻՆՔՆ ԱՍԱՑ

Ինն տաս հրեշտակ ունիմ, Աթոռաց առաջ կը դողայ,
Աղօթրան ունիմ, արարածոց լոյս կը շողայ.
Ողորմութիւն ունիմ, աշխարհին կը ցօղայ:
Իմ զարդարանք քան զքում շատ է:

ԳԵՏԻՆՆ ԱՍԱՑ

Վանքեր ունիմ, անհամար են,
Գմբէթներ վրան կամար են.
Որ հազար բիւր մատաղ Աստծուն կ՚անեն:
Իմ զարդարանքս էլ քան զքումն է:

ԵՐԿԻՆՔՆ ԱՍԱՑ

Ես եմ որ կու գամ, կու տամ քեզ բարեւ,
Կը կանանչցունեմ քո ծառն ու տերեւ.
Յիսուս Քրիստոս բազմեր իմ գլխուն վերեւ:
Իմ զարդարանք քան զքում շատ է:

ԳԵՏԻՆՆ ԱՍԱՑ

Իմ կանչնալու ժամանակն Աստուածն է պարգեւեր:
Եկեղեցի, Սուրբ աւազան իմ մէջն է հաստատեր.
Երուսաղէմ, Էջմիածին, Քրիստոս տէրն իր աթոռն է դրեր:
Իմ զարդարանքս էլ քան զքումն է:

ԵՐԿԻՆՔՆ ԱՍԱՑ

Հրեղէն չարխերէս բոց ու շող կը զարնեմ,
Թէ գիշեր թէ ցերեկ քեզ լոյս կը բերեմ.
Տասներկու հազար կամարներ ունիմ:
Իմ զարդարանք քան զքում շատ է:

ԳԵՏԻՆՆ ԱՍԱՑ

Անթիւ գետեր ունիմ, զրախտի աղբիւրներ:
Յունան Մարգարէն ձկան փորը աղօթք կ'անէր:
Ունիմ Տէրինակ շատ ու շատ ուխտաւորներ:
Իմ զարդարանքն էլ քան զքում շատ է:

ԵՐԿԻՆՔՆ ԱՍԱՑ

Զամբար կապեր եմ, աշխարհի հիմն է:
Գաբրիէլ հրեշտակն ունիմ, մարդու հոգին կ'առնէ:
Զորս կողմն աղօթրան կայ, չորսն էլ իմն է:
Իմ զարդարանք քան զքում շատ է:

ԳԵՏԻՆՆ ԱՍԱՑ

Անապատներ ունիմ, ճգնաւորաց չ'կայ քուն:
Ունիմ Աւետարան, Շարական, Սաղմոս, Ութ Կանոն,
Իմաստուններ ունիմ քո աստղեր կ'իջեցուն:
Իմ զարդարանքն էլ քան զքումն է:

ԵՐԿԻՆՔՆ ԱՍԱՑ

Իմ տեղս բարձր է, Աթոռքս պայծառ.
Ամպն ու ճառագայթ շարժին անդադար,
Ենովք եւ Եղիա ինծի հիւր եկան:
Իմ զարդարանք քան զքում շատ է:

ԳԵՏԻՆՆ ԱՍԱՑ

Մշոյ Սուլթան Ս. Կարապետն ունիմ Բագուայ սար.
Բարձր ու պայծառ, շնորհքով ի լին քան զքեզ հաւա-
սար.
Կարգաւորներ ունիմ, Աթոռոց զասուն բարէբար.
Իմ զարդարանքն էլ քան զքումն է:

ԵՐԿԻՆՔՆ ԱՍԱՑ

Զորս եզ ունիմ զօրաւոր,
Տարիդ կ'անեմ տասներեք նոր,
Ունիմ չորս հատ էլ զինաւոր:
Իմ զարդարանք քան զքում շատ է:

ԳԵՏԻՆՆ ԱՍԱՑ

Շատ պտուղ ունիմ, ջան ու ջանաւար,
Ունիմ սարեր վէրի ոչխար,
Ունիմ բազիրկան խրխտար:
Իմ զարդարանքն էլ քան զքումն է:

Երկինքն է հուր,
Գետինն է ջուր,
Կանանչ մեռոն սուրբ ու մաքուր,
Գետինն երկնուց ջուարն կտուր·
Իմ զարդարանքն էլ քան զքումն է:

ԵՐԿԻՆՔ

Մենք հաւսար ենք:

ԳԵՏԻՆՆ

Բարէրար ենք:
Երկուքս զիրար համբուրենք,
Երկուքիս էլ զարդարանք մէկ է:

ԵՐԿԻՆՔՆ ԱՍԱՑ

Աստուած ունինք·

ԳԵՏԻՆՆ ԱՍԱՑ

Աստուածածին կանչեր մօտ յինին,
Շնորհք տուեր Աշուղ Միրզոյին,
Որ գովաց Երկինք, գովաց Գետինք:
Ինչ կայ Երկինք, էն կայ Գետինք,
Երկուսի զարդ ու փառքն էլ մէկ է:

ՀՈՂԱԳՈՐԾ

Հաւասարական ականջ արէք,
Խօսինք ըզբան հողագործին։
Մեր տէրն է նստեր եօթն աթոռ,
Օրհներ ըզգործ հողագործին։

Արտն առեց, սինօր չարեց,
Խոփն ու արօր տեղէ մ՚ճարեց,
Արխտակէս ծովըն վարեց,
Էն եղաւ գործ հողագործին։

Հողագործին վարձքն շատ այ,
Աստուած մէկին հազար կու տայ.
Թէ հողագործ ուշունց չի տայ,
Հողին լոյս է հողագործին։

Առաւօտուն երբ լուսանայ,
Հողագործն Աստուած յուսանայ,
Աստուած զիր բարի դուռ կը բանայ
Վերայ գլխուն հողագործին։

Անձրեւ ու ցօղ գայ երկնքէն,
Ցորեն բուսնի մաքուր հողէն,
Քամին ելնէ աջակողմէն,
Ցխտակէ զկալն հողագործին։

Կանանչ արտեր, բանձրիկ զօղան,
Ցորեն ցանէ խիստ զանազան,
Ջ՚եղնի ուշունց խտաք եղան,
Եղն է հրեշտակ հողագործին։

Եզն հըրեշտակ է հօտաղին,
Վար արողին,
Սերմ ցանողին,
Մանկեռնողին,
Գերանդւորին,
Մանգաղւորին,
Խուրձ կապողին,
Սէլ բարձողին,
Կալ քշողին,
Դառն դատողին,
Քաղցր ուտողին,
Արքայութի՛ւն հողագործին:

Գ. Ե. Ս.

(Մասիս, 1 Հոկտ. 1888):

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ ԳԱՒԱՌԱԿԱՆ ԲԱՌԵՐՈՒ ՎՐԱՅ

Երգերուն կամ ոտանաւորներուն մէջը գտնուած այլաբանութեանց եւ փափուկ ասացուածոց, ընտիր դարձուածքներուն, եւ բնական բացատրութեանց վրայ հրաւիրելով մեր խանդավառ բանահիւսից քաղցր ուշադրութիւնը, կանցնեմ գրքիս մէջ գործածեալ եւ այլ քանի մը բառեր ու անոնց նշանակութիւնը դնել այստեղ· ի բաց թողլով Թրքական ծանօթ բառերը· ինչպէս նաեւ դաս մը այլեւայլ ձեւով գործածեալները·

որոց վրայ եթէ քիչ մը ուշադրութեամբ նայուի, դիւրաւ կը հասկցուին: Ինձ ոմանք առաջարկած են գաւառական բառարան մը յօրինել, բայց ես աւելի բնական կը գտնեմ որ այսպէս մասն մասն՝ գրուածքներու մէջ առնուածները դրուին, յորոց յետոյ կրնայ կազմուիլ գոհացուցիչ գործ մը: Մեր «Մանանայի» մէջ կայ արդէն սկսուածք մը: Ոչ ես, եւ ոչ որեւիցէ մէկը բաւական է գիտնալ գաւառաց կամ գաւառի մը ամբողջ բառերը. այլ իւրաքանչիւր գաւառն իր մէջը քանի մը հաւաքողներ ունենալու է, ինչպէս վաղուց կը լսուի թէ կան ոմանք այդ աշխատութիւն սկսողները: Հարկ է ըսել թէ թեթեւ գործ չէ այդպիսի աշխատութիւն մը, նուրբ ուշադրութիւն ընծայել պէտք է ժողովրդեան արտասանութեան. զգուշանալու է որ վարժարանը մտած, կամ մեր ներկայ լրագրական ու այլ գրական բարբառոյն ծանօթ մէկէ չհանդանակուին բառերը. զի սոքա չեն պահած հնոյն իսկականութիւնը. այլ շատ ռամիկ կարծուած, կամ ծեր մամիկները գտնալ, եւ անոնցմէ լսել ու գրել: Մեծ ուսումնասիրութիւն կը պահանջէ մեր լեզուն, զի կը տեսնաս բառ մը՝ որոյ սկիզբն գրուած միեւնոյն գիրը, եթէ բառին մէջ իյնայ, կը փոխէ իր ձայնը, եթէ վերջն իյնայ նոյնպէս կը փոխէ կամ բոլորովին համր կը մնայ: Այս ձեւը կը տեսնուի գրաբառին մէջն եւս զորօրինակ յ տառը ի սկիզբն հ կը հնչէ. մէջը՝ ե. վերջը՝ համր է: Նոյն կը տեսնուի աշխարհաբարին ու անգրագէտին արտասանութեան մէջ այլ եւ այլ ձեւով ու ձայնով ե: է: կ. գ. ք: ն. լ: վ. ւ. բ. փ. պ. դ. թ. տ: զ. ս. ժ. շ: ճ. ջ. չ: ծ. ձ. ց: եւն. գրելու հնչմամբ. զորս երբեք մէկը միւսին տեղ գործածել, կամ անոնցմէ մէկն

ու միւսը աւելորդ համարել իրաւունք չէ: Անշուշտ մեր՝ գրոց մեծ Հեղինակն ժողովրդեան հնչմանց յարմար յօրինած է հայ տառերը, զի իւր առջեւ մատենագրութիւններ չկային: Ուրեմն մեր սխալը տառերու մէջ չէ, այլ արտասանելուն: Ո՞րքան խորթ կը թուի Տիգրանակերտցւոյ մը կամ Վանեցւոյ մը լեզուն երբ գրուած լինի. բայց ընդհակառակն ո՞րքան նուրբ եւ քաղցր է, երբ իրենք կը խօսին կամ կը վիպեն: Մէկուց խրտչելով խառնելու եւ դատապարտելու չէ, այլ քիչ մը լուրջ եւ սուր մտադրութիւն պէտք է: «ա» ճապաղ բերնով կ'արտասանեն տեղ տեղ իբրեւ էաը,— գամ՛ գէաըմ՛. եւն. բայց ոչ ամէն տեղ նոյն հնչումն ունին, զորօրինակ, երբ հաց ըսեն, ուղիղ մեր ծանօթ հընչմամբ կը կոչեն: Միթէ նոյն բանը չէ՞ նաեւ գաղղիերէնին եւ Թուրքերէնին մէջ a ա եւ ալիֆը: Վանայ եւ Բաղշոյ Հայք ի գիրը խ կը հնչեն, իրաւ է թէ գաւառին կոկորդական ձեւէն է. բայց ուշադիր եղողը կրնայ գրաբարուն մէկ բառն ուղղել այս սխալ հնչմամբ — նահապետ. նախապետ. ո՞րն է ուղիղ:

Պօլսոյ ծեր եւ անգրագէտ կանանց արտասանութիւնը, գրեթէ նման է գաւառացւոց լեզուին մեծաւ մասամբ:

Ես գործածել ուզած եմ գաւառացւոց բառեր իրենց հնչմանց համեմատ, թէպէտ տեղ տեղ նոյն ձեւով չը մնացին:

Ինչպէս առաջներ ձեռագիրք, նօտար կամ օրինակող դպիրներ, զգալի այլափոխութիւն մուծեր են մատենագրութեանց եւ այլ գրուածոց մէջը. արդի մեր գրաշարները անոնց տեղը կը լեցնեն: Այս խօսքը բաւական է միւս տառասխալներու մասին եւս:

ԲԱՌԵՐ

Ա.

Աքայ. *Պարեգօտ, թանձր, կարճ ու լայն վերարկու, որ առանց հագնելու կ'առնուն ուսոց վրայ. Աքէն ծալեց:*

Ագլել. *Արթննալ. Ագլայ քնուց, արթնցաւ քունէն:*

Ադայ. *Ատայ, կղզի:*

Ակահ, ակհել. *Արթուն, զարթնուլ. Քնո՞ւկ է թէ ակահ:*

Աղու. *Մահադեղ, թունաւոր օշարակ, աղու օձի, կամ թունաւոր սողուն, խոտ. Աղու խմել:*

Աղօթրան. *Արշալոյս: Կը գործածուի նաեւ արեւելք բառին տեղ: Երեսը դարձուցէք դէհ աղօթրան, աղօթարանի կողմը: Աղօթրան բացուեցաւ:*

Ամմէ. *Մօրաքոյր, Տիգրանակերտցիք կը գործածեն:*

Ամրոցք *կամ* Ամբրոցք: *Հողէ շինուած ամբար, յորում ալիւր, ընդեղէն եւ նպարեղէնք կը պահուին: Եւս անասնոց չորցուցած աղբիւսաձեւ աղբէն բերդանման շարուածքը:*

Այնցեղ. *Էնցեղ: Այնտեսակ:*

Անասուն. *Անբնակ, անմարդի վայր, անապատ:*

Անթոլկել, *Ուժով նետել:*

Անթրոց, *Թոնիրի կրակը խառնելու փայտ:*

Անկարծակի. *Չափազանց մեծ, անկարծելի:*

Անկսկծի. *Յանկարծակի, անկասկած եղած ատեն:*

Անղալատ. *Անարատ:*

Անսպեռ. *Անամօթ, աներես:*

Անվէրի· *Անշէն, անբնակ:*

Անտար հազար· *Անթիւ, անհամար:*

Անհաւատ գազան· *Անհաւատալի չար, անհաւատալի վիթխարի:*

Անաւօտ· *Չ'հաւանող, չ'հաւատացող: Ի՞նչ անաւօտ մարդ ես:*

Աշխի· *Աշխիկ: Աշղի:*

Աչկունք· *Դարակ, կամ պիւրօ, կամ պատուհանը՝ տոլապը, որոյ մէջ աչք աչք բաժնուած է: Եւս Աչքեր: Եւս Ակունք աղբերաց:*

Ապրցու· Ապուր: *Ապրուստ, ուտեստի համար ձմեռուան պարէն:*

Աջոջ-Մաջոջ· *Ագող-Մագող, գող մագող, զոր կը հասկնան ցեղ մը մարդոց, որ կը բնակին աշխարհիս ծայրը, որոց հասակն մէկ թիզէն մինչեւ մրջիւնի մը չափ փոքր է: Կայ նաեւ կարծիք մը թէ՝ վերջապէս մարդոց հասակը հետզհետէ փոքրկանալով, պիտի մտնեն ասեղի ծակէն ու ելլեն. եւ հիացմամբ ըսեն, Փառք քեզ, Աստուած ատ ի՞նչ ահագին դուռն էր: Այս եւս վերջին ցեղն է Աջոջ Մաջոջի. եւ ալ այնուհետեւ պիտի անցնի աշխարհ, եւ սպառի մարդն:*

Առնուիլ· *Վշտացուցիչ խօսք կամ ակնարկ՝ իրեն վերաբերել եւ ցաւիլ կամ ամչնալ:*

Ասըռիլ· *Արգելքի մը հանդիպելով կասիլ, Գութան ասըռաւ:*

Արիկ· *Ամուսնացեալ կնոջ այր, էրիկ:*

Աւլման· *Աւլուած մաքրուած: Աւլման խտկման:*

Անակն ու անկուման· *Յանակնկալս եւ յանկարծ: «Անակն ու անկուման դըրին գերեզման»:*

Ամաճ, ամճել. Փոս անօթ, կամ փոս ու խորունկ տեղ մը ձգել կը նշանակէ։ Ի՞նչ աման ամնեցիր եսի։

Բ.

Բաս այ. Բաւ է։ Բաս այ կան գաս. բաւ է չըջիս։

Բալամ. Աղու կամ հեգնական ձայնիւ կը գործածի՝ երբ որդեակ, օղուլ։

Բաժ. Հասակ։ Երկնաբաժ, երկայն հասակ։

Բաղաճ. Պէտէն կամ պատան. պարխալ, հիսար։

Բաղ. Ծոպ, աղջկանց կամ հարմնաց հիւսուած, մազերու ծայրերէն կապուած ու կախուած, որ կը չինուի զանազան նիւթերէ։ Ոսկի բաղերով աղջիկ։

Բալխիր, բաբխիր՝ խոտ կամ որոյ կը բուսնին ի ձմեռան ձիւնի վրայէն, կամ այլ ժամանակ՝ լեռնոտ վայրերը, ուր սայլ չ՚գործածուիր, և երկու եզնով կը քաշեն, փայտէ թանձր ձեւ մը ունի, առանց անիւի, ձիւնի կամ հողի վրայէն քսուելով կ'երթայ։

Բաճձր. Բարձր։

Բաճս. Կը հնչուի բէաջնս, կը նշանակէ վէպ կամ առասպել։ Պէս պէս բանս կապեր էին վրէն, ու կ'ասէին

Բառ. Առաջին անգամ պտղաբերութեան հասած ծառ։ Իմ տնկած խնձորի ծառ կամ մեր նորատունկ այգին այս տարի բառ կուգայ։ Բառի նոր պտուղն կը կոչեն Նուբար։

Բէր. Ոչխար կթել։ Բերւոր, կաթն կթող եւ կրող։ Բէրատեղ. ուր կը հաւաքուին խաշինք եւ կը կթուին, յատուկ տեղեր են։ Բէրի գահ, կթելու ատեն։

Բէլլի․ Յայտնի, ծանուցեալ։ Ես աղջիկ եմ բէլլի եմ։

Բըռ․ Ոչխարաց մաս մը իր երամէն բաժնուիլ ու հեռանալ կը նշանակէ։ Ոչխար բըռ եղաւ, մասն մասն եղան ըսել է։ Եւս կը գործածուի երբ բաւականի չափ։ Բըռ մը ծեծենն։ Գինիէն բըռ մը խմեցինք։ Բըռ մը ցորեն ծախեց։ Այս կերպով կը մօտի բեռ բառին։

Բէն․ Թիկունք կամ Թիկնամէջ։ Կոլաւ վըր բէճին որ ըսել է՝ Թաղիքը ուսին վրայ։

Բլաւել․ Ցիրուցան լինել, քակուիլ։ Ասքար բլաւաւ, զօրք ցրուեցաւ։ Խոտի դէզը բլաւեր քակուեր, ցաւըրտուեր։ Թեւը բլաւեր, փշրուեր։ Մաճլիս բլաւաւ, ժողովք ցրուեցաւ։

Բըգբըգալ․ Ջրի մէջ խեղդուող մարդու հանած ձայն։

Բճաղուն․ Տան պաշար աշնանէ պատրաստուած տարուան մը համար․ ցորեն կամ ալիւր, եւ ուտելու ամէն տեսակ բան, պտուղ, նպար։

Բուն, բըներ․ Գուլպայ, չօրապ։ Բըճերով տիզամ, չօրապով կուզամ։

Բարով․ Բարի, գոհացուցիչ, աղէկ Բարով մարդ է։ Բարով գործ կամ չէնք։ Բարով առուտուր։ Բարով վարժապետ։

Բոճատուն․ Բանդ։ Բռնեցին, ձերբակալեցին, տարան բանտատուն։

Բրոր, բըրորել․ Գլտոր, պլտորուիլ ծովուն, գետոյն կամ արտին, տակն ու վրայ լինելով։

Բրին, բրինդար․ Վէրք, վիրաւոր։

Բէչարայ, բէչարէն․ Լաստանաւ։

Բըրչ, բըչիկ, բըչոտ․ Բաշ, բարշամ, մազ, մազոտ։ Խոլոյի կաշին սեւ ու բըչիկ։

Գ.

Գալարս, գալարել. *Փորի ցաւ, սանձի ընել: Եւս խոտի կամ չորցնելիք զանազան բանջարեղէնաց հիւսուածքը: Գալար մը նուիկ, սխտոր կու բանջարի գալար մը:*

Գահ. *Ժամանակ, առեն, միջոց: Հացի գահ, հաց ուտելու ժամն: Բէրի գահ, ոչխար կթելու առեն: Էն գահն ինե, նոյն ժամայն, անմիջապէս, իսկոյն:*

Գահ. *Բարձրադիր վայր, գեղին մօտը կամ դաշտին մէջ լեռան մաս մը կամ բլրոյ թեւ մը՝ որ բարձր ու տափարակ է: Գահերու վրայ հերկ ընել: Գեղը, քաղաքը գահ է կամ գահի վրայ է:*

Գաք. *Խաւարծիլի արմատին վրայ բուսած լայն տերեւները եւ անոնց կոթը, զոր ուտողը կը փսխէ: Ռէվէն քօքի:*

Գամի. *Կէմի, նաւ:*

Գըժժալ. *Ծըչալ, ուժգին ձայնով գոչել: Գըժժայի յաւա՜րէ, գոչեցի օգնութի՛ւն:*

Գունդ. *Խմորոյ կամ որ եւ իցէ չաղախի կորուածքը, զոր յետոյ զանազան ձեւի կը փոխեն: Գունդ մը խմոր: Գունդ մը փոխինդ: Գունդ մը կաւ: Ձիւնի գունդ: Մոմի գունդ: Գունդ մը արիւն: Կ'ըսուի նաեւ կծկած կամ փաթաթուած նիւթերուն: Իւր հալաւը գնդեց, դրաւ վէր գլխին ու գետն անցաւ: Գունդ ու կծիկ բան մի էր. Կ'ըսուի նաեւ անտաշ փայտի կտորի մը կամ արմատին, եւ այն որոյ վրայ կոշկակարներ ձեւ կ'ընեն ու կաշի կը ծեծեն: Եւս փայտի կտոր մը, որոյ վրայ կը նստին: Նաեւ զուռթանի, սայլի կամ ջաղացքի անիւներուն*

միջնելի թանձր կոճն, որոյ վրայ անւոյ թեւերը զետեղուած են։ Ջաղցի գունդ կ'ըսուի այն երկաթ կամ արօրէ հալուած թանձր մետաղն, որոյ վրայ հաստատուած կը դառնայ երկաթէ մեծ ցիցը, այդ ցցի վերին ծայրը հասած է ջաղացքի քարին մէջը, զոր կը դարձունէ նոյն ցիցը։

Գերեկնալ, գերենալ. Աղերսել, պաղատիլ, իբրեւ գերի ընել զինքն անոր, որմէ կ'աղերսէ։

Գիտոցիկ, գիտոսիկ. Գիտցող, խելացի, փորձառու։ Գեղի գիտոցիկը կանչեցին ու հարցուցին։

Գինալ. Գիտնալ։ Ես ի՞նչ գինամ։ Չէ չէ՞ր գինար։

Գընեալ. Գտնա։

Գոգնոց. Որ պարանոցէն մինչեւ ոտները կը ձգի եւ կը ծածկէ կուրծքն ու գոգը կանանց, վիզէն եւ մէջքէն կապեր ունի։ Կայ ուրիշ ձեւ մ'ալ որ երկու կտորէ կազմուած է. կուրծքինը զատ, մէջքէն վարը զատ. վերին մասն կ'անուանեն Սրտանոց, վարինը՝ Մէզար. Թէ գոգնոց եւ թէ սրտանոցն ու մէզարը իբրեւ զարդ ալ կը գործածուի գեղեցիկ ու թանգ տարազէ. շատերն ալ վրան գոյնզգոյն ծաղիկ եւ այլ զարդեր կը շինեն ասղնակար։

Գոլ. Գոլորշի կամ տաքութիւն կրակի, բոցոյ, թոնիրի։ Թոնիր շատ գոլ է։ Ես այնպէս եմ դէմ քու սիրոյն, ինչ մեղրամոմն է դէմ գոլոյն. որ կը հալի։

Գո՛ղտմանց. Գողի պէս, գողտուկ, գաղտնի։

Գուզ անել. Կծկուած պահուըտիլ, սուտ քուն լինել, ձայն եւ շունչն քաշելով անտես ընել զինքն, կամ ծածկաբար դիտել զայլս։

Գուռ. Քարէ շինուած աւազան յորմէ անասունք ջուր կը խմեն. Թակոյկ։ Եւս հնձանի աւազան, յոր

քամուած գինին կը վազէ կը լեցուի, եւ անոր կը հանեն կարասներու մէջ: Կ'ըսուի Ջրոյ կամ աղբիւրի գուռ, Գինւոյ գուռ:

Գոռ, գօռ. *Փոս, Թրքաց կամ Քրդաց գերեզմաններ: Հասանք գօռներ: Մեռելը գօռի մէջ նստեր էր:*

Գրիհօռ. *Գօռի նշանակութիւն ունի, բայց ընդհանրապէս կը գործածուի իբրեւ վիհ, կամ լերանց մէջ արեգդէմ լեռնակողմը, ձոր, մակաղատեղ խաշանց. իբր խոռ կամ խոր տեղ:*

Գօռ, ու ջահնամ. *Անէծք է. իբր յանդունդս կամ ի սանդարամետս եւ ի դժոխս:*

Գոյ, գօսկոյ. *Ահա, ահաւասիկ:*

Գուգում. *Կիւկիւմ. պղնձէ մեծ սափոր:*

Գումգումայ. *Փոքրիկ ճերմակ չիչ ապակիէ կամ բիւրեղեայ: Ծըծերն ի ծոց գումգումայ:*

Գեղավրայ. *Հարեւանցի: Եւս գեղացւոց սովորութեան պէս. գեղջկօրէն:*

Դ.

Դաղ, դաղել. *Խար, խարել. դամղայ, կրակցուցած երկաթի կտորով խարել մարմինը: Ոչխարի դաղ՝ նշանի համար. ձիու դաղ: Մարդ դաղել: Երկաթի ձողով խարել վէրք, կամ այլ ախտի առթիւ:*

Դահ, դահցած. *Տարիքն անցուցած, թարմութիւն կորսուած: Դահ կնիկ: Դահցած էծ: Դահ զոմէշ: Դահցած հաւու միս:*

Դա, դան. *Այնտեղ, հոն:*

Դառինջ դառընջենի. *Վայրի խնծոր եւ իր ծառը: Դառընջի համն քիչ մը թթու կամ թեթեւ դառնութիւն մը ունի, բայց պահելով կ'անցնի անախորժութիւնը:*

Դար. Կէս բլուր: Դարնը վեր: Դարնի վար: Ջառի վեր, զառի վայր:

Դար ու բար. Դուրս ու ներս, կամ շէնքի մը շուրջը: Դար ու բարն աւլեց: Դար ու բարն ձիւնով լեցուեր:

Դարկահ. Մեծ դուռն:

Դաստմալ. Դաշկինակ. կամ ձեռաց սրբիչ լուացուելու ժամուն:

Դարդ. Տէրտ, հոգ, ցաւ:

Դէլ. Էգ շուն: Նախատելու համար վատթար կիները դէլ կը կոչեն:

Դեղ, դեղել. Դեղօրայք. դեղ ընել բժշկելու համար: Եւս թունաւորել: Բժիշկ հիւանդը կը դեղէ: Հաց կամ գինին դեղեց. թունաւորեց:

Դեղ. Աչքի դեղ. Ծարուր: Աչքերը դեղ քաշեց:

Դըդմակ մը գինի. Բարակավիզ դդումը կը չորցունեն, բերանը կը բանան, վերջն մէջը կը պարպեն, կը ձիւթեն, գինի կը լցնեն: Դդմակով գինի. դդումով գինի:

Դըռայ, դըռէն. Քրդու կին կամ պառաւ:

Դան–դէն, դաս դէս. Անդին ասդին: Դէն դնա: Դաս արի, ասդին եկո՛:

Դիր. Անգամ., հեղ: Քանի դիր ասի: Հազար դիր խմենք չենք կշտանար:

Դիր, դիրք. Կտաւատի չափ մը կամ կշիռ մը, զոր մէկ անգամ կը դնեն ձիթղաց եւ ձէթ կը հանեն: Երսուն դիրք կտաւատ ունէր:

Դո՞ր. Ո՞ւր: Դու կ՚երթաս:

Դուման. Մէգ, մառախուղ, փոշի: Դուման բռներ Սիփանայ սար: Թօզ ու դուման հանելով անցաւ: Դուման չոքեր է դաշտ:

Դրէ Դրէ· *Ցուշիկ յուշիկ, ծանր ծանր, կամաց կամաց: Հիւանդի, ծեր մարդոյ կամ ծոյլի համար կը գործածուի: Դրէ դրէ կուգամ:*

Դրնդալ· *Թնդալ, դղրդալ· դուռն ու դրանդքին շարժէն վերնալ, սաստիկ վախնալ: Քօշքն ու սարայը կամ գեղն ու քաղաքը դրնդար:*

Դարբ, դըրբ· *Հարուած, զօրաւոր կռիւ, ահեղ բարկութիւն, էգոնց դարբէն երկիր կը դողայ:*

Դէսա, դէնա· *Ասդին անդին:*

Դումաճ, դումաճջի· *Նաւի ղեկ, ղեկավար: Ես դումանջին եմ կիմլիուն:*

Դուդուկ, դուդուկջի· *Սրնգի մէկ տեսակը· սրինգ փչող:*

Դուք, ու դրկեց· *Դրացի, թաղեցի, բնակակից:*

Ե·

Եռ· *Գիծ, խազ: Կլոր եռ քաշեց աթոռքի բոլոր· աթոռին շուրջը գծեց ըսել է:*

Երկու հոգւով· *Յղի կին:*

Երդմաճ, երդմէճ· *Երդիքի մաս մը՝ փողոցի վրայ բացուած, ուր կը նստին ու անցուդարձը կը դիտեն· պատուհան, պատշգամ, երեսբաց:*

Եսրկի, եսի· *Զիս, յիս, ինծի: Հերիք եսրկի լացնես: Էրեցիր եսի:*

Եէրիշ բըշել· *Եիւրիւշ ընել· յարձակում ընել:*

Երդիք բացող· *Երդիք կ՚ըսեն գեղի տանիքին վրայէն կամ քովէն բացուած ծակը, որ կը ծառայէ օդ տալու եւ ծուխը քաշելու եւ որ լոյս կուտայ տան կամ ախոռին· ամէն իրիկուն ճրագավառին կը գոցեն մեծ փաթթոցէ գունդով մը, եւ առտուն*

կը բանան. մեծատանց մէջ՝ տախտ աւլել, երէկք բանալ գոցել եւն. մէկ մէկ անձանց գործ է, որք առանց այդ գործին ալ ձրի կ՚ուտեն ու կը պառկին հոն:

Ջ.

Ջայ անել. *Ոչնչացունել, կորուսանել. իսկ երբ մարդոց համար կ՚ըսուի* ջայ ընել, *սպանել:*

Ջատ. *Ա՛ռ ձեռն ուտելիք կերակուր: Ջատ եփեց.* ջատւոր: *Հաց ու կեր տարող դաշտի մշակաց:*

Ջար. *Հազար: Ջար զօրով քոլիդ էկայ:*

Ջատ, ջատմանց. *Հեռի, հեռուանց:*

Ջարկին ծով, ջարկին գետ. *Ծովը կամ գետը մտնալով անցնիլ:*

Ջարզանդ. *Սարսափ, զարհուրանք: Ջարզանդը բռներ էր աշխարհը:*

Ջանգին. *Հարուստ, մեծատուն:*

Ջանգու թալել. *Զէնկիլէմիշ ընել երիվարը, ուժով վազցնել ձինը:*

Ջօզան զօմա. *Ամառուան մակաղատեղ խաշանց, զով լեռներու եւ աղբիւրներու վրայ, ուր վրան կը կազմեն կը նստին խաշնատէրեր, յորս բոլոր քրդեր ու տեղ տեղ ալ հայեր ընտանեօք վրանաբնակ կը լինին գարնանէ մինչեւ աշունը, հետզհետէ դաշտէն բարձրանալով սարերը, իրենց հետ կը տանին տնական բոլոր կահ կարասին. անդեայք եւ անասուն. գեղը ձգելով բոլորովին ամայի: Ջօզանի կթան, եղն, պանիրն, մսացուն համեղ եւ պարարտ կը լինի, մարդն ալ քաջառողջ ու գեղեցիկ: Դու նման ես զօզանի մաքի:*

Զօր, զօրընդեղ․ *Հզօր, զօրաւոր, զօրեղ:*

Զընար․ *Լերանց գագաթներ բարձրացած ապառաժ․ սեպ ու մեծ քարեր:*

Զուլփիքար թուր․ *Ընդհանրապէս կը նշանակէ, Հալու-նի թուր* (1)․ *կամ կայծակէ, կայծքարէն հալ-ուած երկաթեայ թուրը, խիստ հատու եւ անբե-կանելի:*

Զամզամին․ *Տանց էն վարի յարկ, մառան, շտեմարան, զովտուն, յորս ամառուան տապին կը նստին ի Տիգրանակերտ եւ Բաղդադ:*

---

(1) Հալունի թուր Պօշին, որ յիշած ենք խաչլուայ լճին Բլէջան լեռան վէպին մէջ․ երես 83, Ա․ հատոր: Կը թուի թէ *Զուլֆիքար* թուրին հայկական կամ հին բառն է: Տրդատայ թուրին համար ալ Վարդան աշխարհագիր կը գրէ թէ «Հաւ հալունի թուրն Տրդատայ էառ Սուրբ Լուսաւորիչն եւ օծեալ որպէս զխաչ եդ ի յօդն բանիւն Աստուծոյ՝ ի գլուխ լերինն Սեպհոյ»: Այս աւանդու-թիւնը կար որոյ վրայ երգած է Յօհան Պլուզ Ս․ վար-դապետ «Զէնն արքայական սպանման գործի կենաց՝ արքային, ի կենաց գործիս նուիրեալ» շարականն ի Սեպուհ լեռան: Տրդատ այս Հալունի, Հաւ հալունի թրով «Միջակտուր առնէր զզօրաւոր թագաւորն Բաս-լաց, ահեակ ձեռամբն ընդ մէջ կտրէր զայրն եւ ընդ գոյգ պարանոցին զգլուխն երիվարին»: Խոր․: Արդէն Տրդատայ ոյժն վէպի կարգն անցած է իբրեւ դիւցազնի մը․ իւր թուրն ալ հէքաթներու մէջ փոխ կ'առնուն կը գործածեն կտրիճներ, երբ Դէւերու, հսկայից, քաջաց հետ գործ ունենան:

Է.

էսա, էդա, էնա. *Այս, այդ, այն:*
էսասկընայ, Ըսգուն, ըսգընայ. *Այսպէս, այսպունակ:*
էմման ըմմէն. *Համայն, ամենայն:*

Թ.

Թագաւոր. *Հէքեաթներու մէջ Թագաւոր, փաշայ, խան, պարոն, բէկ, ամիրայ, աղայ, զանգին բառերը գրեթէ մի եւ նոյն բան ըսել է, հին կեանքի նշանակութեամբ. իբրեւ քաղաքին կամ գեղին մեծը, Նահապետը. որ պետ էր, դատաւոր, տէր, զօրապետ, եւ ամենայն ինչ:*

Թաթ. *Գուլպայ, չօրապ. եւս ձեռաց ափ. փոքրիկները՝ թաթիկ: Եւս այն պատժոյ վայրը, որով վարժապետներ ի պատիժ կը հարկանեն աշակերտի ափին:*

Թախթ. *Գահ. արքունի կամ իշխանական աթոռ. իշխանութիւն:*

Թամաշայ. *Հանդիսատեսութիւն:*

Թան, թանել. *Զանազան նշաններով քանդակեալ տախտակ. զոր տասանորդի տեսուչն կ'ունենայ ու անով կալ եղած ու մաքրուած ցորենոյ շեղջն շրջապատով կը նշանէ կոխելով շեղջին վրայ այն տախտակը, որպէս զի ցորեն չվերցնեն մինչեւ ինքն չափէ, տասանորդն առնէ. այս է թանն, ու ցորեն թանել:*

Թարք, թարքին. *Երբ երկու հոգի մէկ ձի հեծնան, ետեւի հեծնողը Թարք կամ թարքին հեծեր է կ'ըսուի. եւ կամ բեռ կամ խուրջի ձգէ ձիոյն վրայ*

ետեւի կողմէն, կ'ըսուի Թարքի:

Թոնիր, թոնտիր, թոնդրտուն. Ամէն տուն բացի զանազան մասերէ, մառանէ, սենեակներէ, եւն. կ'ունենայ յատուկ տունը, ուր թոնիր դրած են, Տանտուն, հոն հաց եւ կերակուր կ'եփուի. սովորաբար հիւրեր հոն չեն մտներ, եւ կանանց սեռն ու մանուկներն կը մնան հոն:

Թօռ. Ջուկ կամ թռչուն որսալու ուռկան:

Թրփռել. Բողբոջիլ, ծլիլ, ծաղկիլ. Թուփերը եւ տերեւները բուսնիլ. քան զկարմիր վարդ թրփռայ ես:

Թուղթ. Հարիւր դրամի կշիռ: Ուր, երթաս՝ թուղթ հարիւր դրամ է. երկու թուղթ մէկ նուկի է:

Թուղթ անել. Հմայութիւն անել, նուսխայ:

Ժ.

Ժաժալ. Շարժել. մասնաւորապէս գլուխ կամ ձեռքը դողդոջելուն կ'ըսեն: Թեւը կը ժաժայ: Գլուխը կը ժաժայ:

Ժաժք. Շարժ. երկրաշարժ:

Ժրդուլ, ժրդլիլ. Խօսքով, կամ այլեւայլ անմեղ միջոցներով ժամանակ անցնել:

Ժրրել. Պնդել. ամրանալ կամ ամրացնել: Կապը ժրրէ: Գօտիդ ժրրէ:

Ժիր. Լուրջ, առողջ, կորիճ: Հիւանդ չէ, ժիր է: Ժիր տղայ մ'է:

Ի.

Իգիդ. Իկիթ, կորիճ, բարաիգիդ, կորիճ երիտասարդ:

Իգիր. *Գրաւ: Ծըծումն իգիր վէր ջրին: Աղջիկն իգիր ձիոյ թարքին:*

Իզարկ. *Եզարկ, զարկաւ: Իզարկ գլխուն: Իզարկ ծովն ընգաւ: Այսպէս է Իլից, ելից: Իբե, եբեր: Իլաց, ելաց: Իտու, ետ կամ ետուր:*

Իլին. *Լիուլի, լեցուն:*

Իմալ, Ինչլս. *Ինչպէս:*

Ինե. *Ի նմա, անոր մէջ: Սրտին մեռնիմ սէր կէր ինէ, Աչաց մեռնիմ դեղ կէր ինէ:*

Իուր, իո՞ւրցէ. *Ո՞ւր, ո՞ւրկէ, ուստի՞:*

Իշել, իշկել, իրիշկել. *Նայիլ, աղէկ նայիլ. Իշեցի որ չ՚կար:*

Իշել, իշկել, իրիշկել. *Նայիլ, աղէկ նայիլ. Իշեցի որ սեւ Հարոն էր: Իշկեցի արեւնը վեր: Երդիք բացի իրիշկեցի:*

Լ.

Լանկ. *Բարձրացուցած մէկ ոտքը, կամ կաղ ոտն: Լանկայ զարնել. ոտքի տակ առնելով զարնել. Նոյն է եւ Լանկել:*

Լաւօ, Նաւօ. *Հոգիս, աչքս. աղերսական բառեր:*

Լէշ. *Սպանած կամ մեռած մարմին. դիակ:*

Լըխէփ, լըխէֆ. *Վերմակ:*

Լոլիկ. *Թրջուած անձրեւով կամ ջրով: Եւս՝ դինովցած մարդ: Լոլիկ կ՚ըսեն Ականցիք չ՚կարմրած կանանչ տոմաթէսը. եւ Մշոյ Սուրբ Կարապետին վանքը եփուած փոքր փոքր փիտայ հացը՝ կը կոչուի Լոլիկ:*

Լոլոզ. *Սրածայր: Լոլոզ քար: Լոլոզ երկաթ. եւայլն:*

Լօշ, լաւաշ. *Բարակ եւ երկայն բացուած հաց, Հալուէն մէջ լօշին:*

Լուլայ. *Խողովակ: Եւս՝ ծխափայտի գլուխը: Եւս՝ ձմեռուան ցուրտէն սառած եւ կախուած ջուրը երկայն ու բարակ ձողի պէս: Եւս աղբիւրներու կամ առուակներու բերանը դրուած ծորակ:*

Լուսուն. *Արշալոյսին, առաւօտ:*

Խ.

Խաչկապ. *Երկու ձեռքը խաչաձեւ կուրծքի վրայ դնել, որպէս կ'ընեն ծառայք եւ մանկունք մեծերուն սպասաւորելու ատեն՝ յոտին կալով:*

Խաշիմ. *Անփորձ. անգէտ, անծանօթ գործոց կամ ճանապարհի:*

Խալէ, խալօ. *Հալայ, հօրաքոյր:*

Խախանդել. *Հանդարտիլ: Տղայք քնան տունը խախանդաւ. գետը ծովը խախանդ է:*

Խէրուն. *Շնորհիւ: Որո՞ խէրուն էր. սեւ Հարոյի խէրուն էր:*

Խույ. *Բնոյթ:*

Խըզուգ. *Կալին տակը մնացած կեճեպով ցորեան կամ այլ հունտ:*

Խըժախըժ. *Փայլ ի փայլ. ճառագայթարձակ. արծաթափայլ: Սխամանդոյի նետն ու աղեղը խըժախըժ է:*

Խըծկել. Գոցել, *փակել, Դուռը խըծկէ:*

Խըխմել. *Խմորի պէս լինել: Կտրած ոտքը խըխմեր է: Խնծորը խըխմեր:*

Խըռնու. *Իբր ճարտար: Մովսէս ի՛նչ խըռնու է:*

Խոտունձ. *Խոտոց չայիր: Եւս՝ խոտ հնձելու ժամա-*

նակ, որ կ՚իյնայ յունիս ամսոյ կէսէն յետոյ, Գիւ-տի Նշխարաց Ս. Լուսաւորչի տօնին պահքը՝ խո-տունճի պահք *կը կոչեն: Խոտունճին էկաւ Սամ-բոլէն: Մարտէն մինչեւ խոտունճ մշակ վարձել:*

խոռ. *Իբր խոռոչ կամ ծուռ: Գառը խոռեր է: Նստէք, իմ տեղը խոռ պահեցէք:*

խոռ խոռ նայիլ. *Խոժոռ նայիլ:*

խօլ. *Թեւը կըտրած. կամ կոտրած: Խօլ եզն: Խօլ էծ: Խօլ Արբէն: Հարսի թեւը խօլ է:*

Ծ.

Ծի, ծիկ. *Ինծի, ինձ:*

Ծուռ, ծռիլ. *Խենդ, խելակորոյս լինել: Էդ մարդ ծռեր է:*

Ծըռթավարիկ. *Խենդի նման: Ծռթավարիկ բաներ մ՚ը-ներ:*

Ծըծմէր. Սոնտու:

Կ.

Կաճ զալ. *Մանզալ, պտոյտ ընել, երթեւեկել զբօսանքի համար կամ մտահոգութեամբ: Իր քէֆին համար կան կուզայ: Ցաւէն լեռներ կան կուզայ:*

Կէր, կէր ու չկէր. *Կայր եւ չկայր, էր եւ չէր:*

Կէծակ, կէծքար. *Կայծակ, կայծաքար:*

Կանչուն հետ. *Զայնեղ աքլոր, որ գին ունի իբրեւ ազ-դարար ժամացոյց չեղած տեղ: Կանչուն. Ճերը մորթեցի, քեզ կերցուցի.*

Կեռիկ. *Բերանի եւ կոկորդի միջեւի անցքին դուռը, երբ չնչարգել կամ անխօս լինի մարդ: Կեռիկ*

փակուեցաւ կ՚ըսեն. չափազանց երկիւղէ, ամօթէ եւ ուրախութենէ կեռիկ փակուեցաւ:

Կընճռուլս, կընճըլսկմանց. *Կանուխ, վաղ քաջ:*

Կիսրար. *Բաժանորդ, կիսող ընկեր:*

Կլօր դլոր. *Սեխ, խաւուն:*

Կոն. *Մեծ վրան, չադըր: Վրանաբնակայ կոներ: Սիամանթոն իջաւ պառուոյ մը կոն:*

Կուց. *Երկու ափ իրար կցած՝ բաց, Կուց մը ծակէ տուաւ:*

Կուզ, կզուիլ. *Սապատող, մէջքէն ծռիլ: Կզուեցաւ քար վերուց:*

Կունէֆ կնէֆալ. *Քնանալու պահ մը, նստելով քնանալ: Կունէֆ մը աչքերս խփեցի. նստուկ տեղ կը կնքար:*

Կոլաւ. *Թաղիք. հովուական վերարկու թաղիքէ: Կը մաշէր սեւ Հարոն, կոլաւ վրր թեւերուն:*

Կըպէր. *Ցարմարէր, վայելէր: Քեզի չը կըպեր այդ խօսքը. ինծի կպէր որ քե առնէր. կը վայլէր որ ես զքեզ առնուի:*

Կըտրոն. *Անտառի կամ մացառի փայտի կտրուածքէն արմատին վրայ մնացած սրածայր մասն: Ինկաւ Սիամանթոն կաղնոյ կտրոնի վրայ: Կտրոնն ի դուրս ցցուեցաւ կուրծքէն:*

Հ.

Հայրած, հայրաւ մնաց. *Հիանալ, ապշիլ:*

Հանգած, հանգրան. *Հանգուցեալ, խանգարեալ, աւեր: Հանգար խան: Հանգար կամ հանգած եկեղեցի: Ս. Հանգըրվան, Հանգած վանք:*

Հարսայ. *Մայր. սովորաբար Ակնցիք կը գործածեն:*

Հանց էղ. *Անկէ զատ, բաց ի նմանէ, մի միայն, Հանց*

ձլ եղնէ մը՝ բան չմնաց. եղ մը մնաց:

Հաց ու բարին քաշեցին. *Հացով եւ բարութեամբ մի սեղան կազմեցին:*

Հետ հետոյն. *Ետ ընդ ետ, անմիջապէս, իսկոյն:*

Հըմլա, հըմլա. *Այսպէս, այդպէս:*

Հընանց, սանց. *Այնպէս, այսպէս:*

Հըխամ, հխալ. *Հայիլ, նայիլ, դիտել տեսնել: Հխամ որ հալւորմ չկաւ:*

Հէրնել, էրնել էրան անել. *Ցորենը քամիին նետելով յարդէն զատել: Կալս էրնեցի:*

Հէվար, յէվար, էւար. *Երեկոյ, երկրագործները վարելէ քաղելէ կը դադրին. արեւը մտնելէն քիչ մը ետքը: Օրն յէւար է:*

Հօսելի. *Հեծանոց. այն փայտէ գործիք՝ որ երկար բարակ կոթ մը ունի, եւ գլուխը ձեռքի ձեւով շինուած չորս մատնաձեւ կտորներով, որով կը հօսեն կալը, եւ կը զտեն ցորենը:*

Հուրիկ, հօրիկ. *Գութանի կամ սայլի լծուած առաջին զոյգ եզներ:*

Հուսայ, հուտայ. *Հոս, հոդ, այստեղ, այդտեղ:*

Հող թաբլել բերան. *Յոգնած ուղեւոր մը կամ երիվար մը եթէ ուտելիք պակսի անօթութեան պաթիւ հող կը ձգեն բերանը կուտեն՝ մինչեւ իջեւան հասնին. իսկ առանձին հող ուտելու սովորութիւն ունեցող ալ կայ:*

Ձ.

Ձէն, ձէնել. *Ձայն, ձայնել: Եւս՝ ձէնել՝ հրամցունել, հրաւիրել: Խնամին ձէնեց չինք մերը:*

Ձենձէնոց. *Ձայներ, աղաղակ, աղմուկ:*

Ձէթ, ձէթկիկ. *Մանր, մանրուկ:*

Ղ.

Ղորդ. *Ճիշտ, ճշմարիտ: Ղո՛րդ ասա, ղո՞րդ է:*

Ճ.

Ճաք, ճաք ու պըլըճկ. *Հին լաթ, ցնցոտիք:*

Ճախր, ճարի. Ջարխ, *անիւ: Եւս՝ թել մանելու ճահր կամ ճախրակ: Ճահր մանելով մեր ապրուստ կ'ընենք:*

Ճախրիփալակ. *Աշխարհի կամ բաղդի անիւ: Վանայ Մհէրի դուռն կը բացուի Համբարձման գիշեր, հոն է ճախրի փալակ:*

Ճան. *Վէգ, այսինքն այն ոսկոր, որ կայ մարդոյ եւ չորքոտանեայց ոտից կրունկէն վեր, պճեղին կից: Ճանը կոտրեր է: Ճան կը խաղան տղաքներ:*

Ճանը ճուկ է. *Վէգով բաղդ կը փորձեն, երբ նետած ատեն ճանը կայնի այն երեսին վրայ՝ զոր կը կոչեն ճուկ, յաջողութեան նշան է. բաղդաւոր մարդու համար կ'ըսուի: Անոր ճանը ճուկ է:*

Ճապալէգիլ. *Սահելով կամ որ եւ իցէ կերպով գետինը փռուիլ բոլո՛ր անձամբ:*

Ճառ, ճառ. *Գօտի՝ բարակ թեթեւ շալ է: Մէջքդ բարակ ճառով՝ աղւոր կ'երեւիս:*

Ճեղլակ, ճըղլակ. *Կրկճիւղ, չաթալ: Ճըղլակ փայտ, ճըղլակ ճառ: Ճըղլակ սար:*

Ճըմուռ. *Եփուած հաց կը մանրեն հալած եղի մէջը կը ճմռեն կուտեն հալուայի նման:*

Ճըւտել. *Ճիւերէն բռնել երկու կտորի ճեղքել: Հաւի պէս ճըւտեցին:*

Ճիւ․ *Ոտք, սրունք։ Ճիւօք կը հրէ աթոռքը։ Ճիւս ինկաւ գուբը։*

Ճիժ, ճըժմեր․ *Մանր տղայ․ միշտ լացող, ճչացող։ Նաեւ՝ երբ անչափահաս կամ պակասամիտ։* Ճժվըռժոց, *մանկանց աղմուկ ու լաց։* Ճիժ ու բիժ, *օղուլ չօճուղ։*

Ճուք․ *Ողկոյզ։ Նաեւ՝ նմանութեամբ կ'ըսուի նորահաս տղայի, եւ այլ նիւթի․ Ներսէսը ճուք էր ճթացաւ։ Ճուք ճուք մարջան գինդ ունէր։*

Ճոքել․ *Ճանկերով վար բերել, քաշկռտել։ Ծառի պտուղները ճոքեր են։ Կռուեցան՝ մազն ու մօրուքը ճոքեցին, խել կոքեր է կռուքել։*

Մ․

Մաթ մնալ․ *Զարմանքէն ապշիլ, բերանաբաց նայիլ։*

Մաղկատ մաղկտալ․ *Կսկիծ ներքին հող ու ցաւ կրելով՝ սաստիկ տխրիլ, եւ գլուխն ու անձն երերցնելով մունջ մունջ հառաչել։*

Մաղմաղ աղօթրան․ *Արշալոյսի բացուելու նշան․ երբ հորիզոնի խաւարը մանր լոյսեր կը ցնցէ, ինչպէս մաղէն անցած լուսոյ նուրբ ճառագայթ։ Երկինք կը մաղկտայ ալ կ'ըսուի, երբ թէ խաւարը ի ցաւս եւ յերկունս կը ծփայ երերալով։*

Մայլել․ *Զմայլել։*

Մալուլ, մալուլաւ․ *Որբի նման անտէր ու անմխիթար՝ տխուր։ Զինը կը հալէր կաթէր վէր մալուլ լաճուն։ Մարդը մալուլաւ։*

Մայա ընել․ *Ցած ձայնով երգել, խաղ ասել։*

Մանգղոն․ *Մանգաղ փոքր։*

Մանճի, մանճուակը․ *Մատանի, մատանեայ ակն։ Կը*

փայլի մաննու ակը։

Մարդ մարդասուն. *Մարդ եւ մարդկային սերունդ։ Մարդ մարդասուն չկար այնտեղ։*

Մատակ. էգ անասուն, *իսկ յատկապէս կ'ըսուի գոմէշի մատակին։ Խոլ եղն պառկեր քան զՄատակու. փորէն հանին շատ ծրագու։ Անուանի է մատկու կաթն եւ սեր։*

Մէզար. *Շալէ մեծ բողչայ, յորում հաց կը դնեն տանին մշակաց, եւ բանջար ու այլ բաներ մէջ դնելով կը կապեն շալակնին կանայք։ Մէզար՝ կէս գոգնոց ալ կը նշանակէ։*

Մէկլար. *Կը հնչուի մէյլար. դէպ ուղիղ. առանց հանդչելու եւ խոտորելու։ Դէպ Սիփնայ սար մէկլար քշեցին հասան։ Մինչ իրիկուն մէկլար գացինք։*

Մէկուց. *Մէկանց, անմիջապէս։*

Մըկայ, իըմըկայ. *Հիմակ, այժմ։ Դու գնա, մկայ կուգամ։*

Մէկէցմէկ. *Մէկէնիմէկ, իսկոյն։ Մէկէցմէկ մեռաւ։ Մէկէմէկ հասաւ։*

Մէրանց, մարանց. *Մօր տուն։ Հարսը մէրանց տուն դարձ գնաց, կ'ըսուի, երբ նոր հարսը առաջին անգամ փեսայի տունէն մօր տունը կը հրաւիրուի։*

Մըղըլ ուտել. *կաշառք ուտել։*

Մըժ. *մէգ։ Մըժ ու տումանի մէջ ծածկուեցինք։*

Մըն, մընի. *Պիտի։ Մըն սիրեմ։ Մընի գայ։ Պիտի սիրեմ, պիտի գայ։*

Մըրխօշ, մարխօշ, մէրխօշ. *Թթուաշ, քաղցր թըթու։*

Մըսիլ. *Միսին կամ մարմնոյն փարիլ, դրկել համբուրել շօշափել։ Դէւերու մօր ծիծը մըսեց։ Թէկ որ իմ ծիծը չ'մըսէր։ Ծիծը մսել՝ ստինքը բերան առնուլ. իբր կաթնասուն զաւակ որդեգրուիլ կը նշանակէ։*

Մըֆըթայ, մըֆըթէն, մուֆաթայ. *Ուռենւոյ զալար ճիւղերէ կամ կնիւնէ հիւսուած մեծ ու խոր սալայ, որոյ ներքեւ կը դնեն ամանով կերակուր եւ այլ ուտելիք. վրան ալ ծանր քար մը, որով այդ ուտելիքներ կը պահպանուին կատուներէ, մուկերէ, մանր տղաքներէ, որք կը պատեն եւ կը հոտոտեն չուրջը. եւ օդ ալ կը խաղայ հիւսուածքէն, որով չեն աւրուիր կերակուրներ:*

Մոմտան. *Աշտանակ:*

Մոնթ. *Ագթամարայ եւ Անապատաց մէջ դեռ կարգ ու աստիճան չ'առած տիրացուներուն կ'ըսեն:*

Մոնծ. *Մեծ:*

Մոնչ. *Մանչ:*

Մրա՛յ, մրի՛կ. *Մայրիկ, ա՛յ մայրիկ. կանանց բառ է, երբ մեծ ցաւ կամ զիղջ կամ զարմանք յայտնեն: Մրի՛կ, հօրս ձեռք չ'պագի հապա:*

Յ.

Յաւա՛ր. *Յօգնութիւն կոչել: Յաւա՛ր արին: Յաւա՛ր կայ: Յաւա՛ր տարէք գեղը: Յաւար հասէք. կը թուի թէ՝ աւերիչներուն գալէն կողոպտելէն մնացեր է այս բառը, զի երբ վտանգ մը պատահի թէ գեղը թէ դաշտը ի ճանապարհի. Մարդը յա*ւա՛ր *կը կանչէ մեծ ձայնիւ, եւ ամէն լսողը կը վազէ յօգն, զի յաւար հասարակաց վտանգ կը նշանակէ ինչպէս Պոլիս կը կանչեն: Կրա՛կ կայ:*

Յար, յարի, հարի. *Նախդիր է. մինչեւ կը նշանակէ: Հար ես հասայ, գողը փախաւ: Յարի քաղաքը տարան: Հարի առունը ջուր գայ, գորտի աչքը դուրս կուգայ:*

Յէր. *Քարայր, մաղարայ: Մհէրի յէր: Քարը հրջեց*

մտաւ յէրը:

Յէմեցաւ. *Յամեցաւ, յուշացաւ:*

Ն.

Նախիր, նախըրգնայ, նախրգընէն. *Գեղին դուրս այն հրապարակը, ուր նախիրը կը ժողովուի ու նախրչին կը քշէ տանի արածել եւ իրիկունը հոն կը բերէ, ուր իւրաքանչիւր աղջիկ, կին, մանուկ՝ իր կովն ու ոչխարը կը զատէ տանի, հոն ծառեր եւ ջուր կայ, նախիր գալէն յառաջ կը կանխեն հոն, կը տեսնուին կը խօսին, կը բամբասեն, կը սիրաբանեն եւն. յայս ակնարկելով ըսուած է: Նախըրգընէն ուսի ծառ, խնծոր թալեմ արի տար:*

Նէնիր. *Ընկերութեամբ կամ հանդիսաւոր որսորդութիւն:*

Նըխշ, նխշել, նխշուն. *Ասեղով նկարէն. նկարել գոյնզգոյն: Նըխշ նըխշել. քարկահով սաղէնկար ընել: Նախշուն այլուխ գոյնզգոյն բանուածքով թաշկինակ կը նշանակէ:*

Նուիրակ. *Վարդապետ կամ կրօնաւոր մը, որ վանքէ մը, կողմանէ կը շրջի Ս. մասունքով եւ կոնդակաւ թէմական գիւղեր ձիով ու ծառաներով. որոյ պաշտօնն է քարոզել, եկեղեցեաց, ամուսնութեանց եւ կրօնական բարեկարգութեանց հսկել եւ վանքին սահմանեալ պտուղն, մատաղ, եւ այլ նուէրները հաւաքել: Նուիրակին առաջին ու բարձր պատիւն ունի որ եւ իջէ գեղին մէջը, դիմաւորելով կ'ընդունուին զինքը, եւ գլուխ բանալով մէկիկ մէկիկ աջը կը համբուրեն, վերին գլուխը կը բազմի, նուիրակը կը մեծարուի քրդերէն եւ երկ-*

ըլ պետերքն՝ իբրեւ շրջող առաջնորդ։

Շ.

Շապիկէ անցուցել. Երբ օտար տղայ մը որդեգրեն՝ մայրագըրն շապիկի տակէն կը մտնայ․ օծիքէն վեր կ'առնեն. իսկ երբ հասակաւոր է, մայրագըրին շապիկը կը հագցունեն անոր կը հանեն, որով կը համարուի իբր հարազատ։ Թագուհին իր շապիկէն անցուց պատիկ Միրզայի բերած աղջիկները։

Շաւեռ. Ջուլթակ, քէմէնչէ։ Շաւեռ քաշող. քէմէնչի չալող։

Շրջուկ, շրջունք. Թէրս դարձած։ Վերարկուն շրջունք հագեր էր։ Եւս՝ երեսը շրջուկ. երես դարձուցած, ափրահող։

Շըբաք. Պատշգամ, քօշկի երեսբաց։

Շնիկ, շինիկ. Գեղի չափ կամ կոտ ցորենոյ, գարոյ եւլն.։

Շիլայ. Կարմիր ներկած կտաւ։ Եւս՝ լափայ, եղով ու ձաւարով եփուած։

Շուռա, շուռաշի. Ժողովք, ժողովական, խորհրդական։

Շուր գալ, շուրջ գալ, ժուռ գալ. Շրջել, պտոյտ ընել։

Շոր. Աղի։ Շոր գօլ. աղի լիճ։

Ո.

Ուղ. Անուխի հոտով ու անոր տեսակէն մանրաթուփ խոտ դաշտային ու լեռնային, զոր Թանապուրի եւ պանիրի մէջ կը դնեն. այլ է դաղձը։

Ուռկ ետեւէն. Մեծ արագութեամբ վազել փախչողի մը ետեւէն հասնելու. որ կ'ըսուի նաեւ՝ Հալել

եռեւէն:

Ոփ. *Այն լճակն կամ աւազանն՝ յոր կը ժողվեն փոքր աղբերց ջրերը՝ օրերով եւ ժամերով, որոյ յատակը բերանաձեւ ակն շինած են եւ զայն կը կայնեն (գոցեն) երկայն փայտ մը իջեցնելով աչքը, ու կը՞ բանան՝ դուրս քաշելով զայն. ուստի առու մը առատ ջուր կը հոսի արտն ու այգին ջրելու: Ոփը գոցող ու բացող փայտը կ'անուանեն տոփ կամ տոփան: Արճիշոյ կամ Բաջբերունեաց մէջ Մեծոփայ վանքը, իւր անունը աստի առեր է:*

Ողեայ. *Փորձանք:*

Ջ.

Ջաղա. *Բալուայ գաւառին մէջ Հայք Ջաղա կը կոչեն մայրը:*

Ջափալ. *Անպէտ, աղտոտ, փինթի: Հարամ չափալ. մէկը արհամարհելու համար կը գործածեն:*

Ջալաղան. *Ջայլամ. ցին Թռչուն:*

Ջոգ, չոգել. *Ծունկ, ծնկածալ նստիլ. կ'ըսուի նաեւ ծնկերուն: Ամրը չոգեր է վըր դաշտին: Ծունկ չոգեր: Արիւն էլաւ հար չոգերը:*

Ջում, չուր, չուրմի. *Մինչեւ, մինչեւ որ:*

Ջուռ. *Երկայն բուրդ ունեցող այծ: Թիֆթիկ:*

Ջորս տակել. *Ջորսի ծալել: Ջորս տակեց Սիամանդոն իր արան, եւ Խճէզարին նստեցուց վրան. Թելի կամ չուանի համար ալ կ'ըսուի՝ երկտակել. չորստակել եւլն.:*

Պ.

Պառեկ. Կռնակ. մէջքէն վեր ուսերով մէկտեղ: Բեռը դրին պառեկ: Պառեկը զարկեր է. ծառին՝ նստեր էր: Դեռ իմ պառեկ գետին դրողը իր մօրէն չէ ծներ. որ կը նշանակէ ոչ ոք կարող է զիս պարտել, անյաղթելի եմ: Պառեկի վրէն պառկած էր:

Պարըկ, բարիկ. Հրեղէն կամ օդային ոգիք:

Պալ. Քարերու մեծամեծ կտորներ: Փայտատ ու թի բերէք: Պալեր ու գլխարներ շրջեցէք: Խըջէ զարէն ու Սիմմանդօն մէկտեղ թաղեցէք:

Պէտ. Խոշոր, մեծ: Զէթ ու պէտ. մանր ու խոշոր:

Պըխմըռած. Պահուըտած:

Պըտռտէ, պըտռտել. Պտոյտք, շրջել, շուրջ գալ:

Պնտուկ. Ցրնտըղ, կաղին:

Պօրոն. Խոյ կամ վայրի ոչխար: Որսորդ պօրոն մի զարկաւ:

Պօհ մի. Պահ մի, քիչ մի ժամանակ: Պօհ մի լացին զինքը: Պօհ մի կեցանք ու ելանք:

Ջ.

Ջէրկայ, ջէրգէն. Շարք, տող: Խորոտիկներ իմ Ջէրգէն, իմ շարքին: Ջէրկայ մը գիր գրեց: Ջէրգայ ջէրգայ զօրքեր անցան:

Ջընջխել. Ջախջախել: Ինկաւ մէջքը ջնջխուաւ: Գլուխ ջնջխեցի:

Ջըրտըկոր. Տիկերով ջուր կրող՝ դաշտի մշակաց, հնձողաց: Ես՝ ջրւոր, արտ ու այգի ջրող:

Ջոչ, ջօջ. Մեծ: Ջօջոյ, մեծ մայր, մամ:

Ջոքել, ճոպել. *Փորձել: Ուժը չըրեց: Միտքս կը չորես:*

Ռ.

Ռաստ, րաստի. *Դէպ ուղիղ, ճիշտ: Գացի, ձիաւոր մը ռաստ եկաւ: Րաստին սաստ ըմալ եղաւ:*

Ռօմի. *Քրդու ցեղ կամ ազգ՝ Կորմանճի ըսուած, որոց սովորութիւնն է չաշխատիլ, այլ իբրեւ ազնուական՝ ձի, զէնք ունենալ, շրջել, կռուել եւ ժողովրդեան վաստակն ուտել:*

Ս.

Սէյիր ընել. *Հմայել, կախարդութիւն ընել: Կարմի զէւը սէյիրով եղաւ հողէ բլուր:*

Սէպել. *Նետել, ձգել: Տանիքէն սէպեց վար: Երեսէ սէպեր զիս:*

Սեւ գայ. *Անէծք է: Սեւ գայ վըրադ: Սեւ գայ աղջկան հալին. իբր սուգ, սգաւոր լինել:*

Սպնել. *Սպանանել: Կ'ուզէր զմարդ սըպնէր, կնիկն առնէր:*

Սըռ. *Գաղտնիք, գաղտնարուեստ, հնարագիտութիւն:*

Սիրտը կպաւ. *Սիրտը սիրեց, սիրահարեցաւ: Ովանի սիրտը կպաւ Շուշանին:*

Սիրող. *Սիրահար, սիրոյ յարաբերութիւն ունեցող: Մեք սիրող ունինք, որոյ սրտին վարդ ու ռէհան կայ բուսած:*

Սուզակ. *Հագուստի թեւերուն եւ օձիքին բերանը կարուած խարջ, գայթան եւ այլեւայլ զարդ. օղակ: Ինչ սէր կայ զրէք սուզակ. ինչ անոյշ բաներ կան՝*

ըրէք կօճակ:

Սֆաթ եղնիլ. *Համոզուիլ, հանդարտիլ. բնակութիւն եւս հաստատել:*

Սօնէ, *Սօնրայ, յետոյ, վերջը:*

Սար ու բար, սարբար, սէրբար. *Բեռը բառնալէն զկնի. եղին կամ գրաստին վրայ, երկու հակի մէջտեղ թեթեւ բեռ մ'ալ կը դնեն՝ սարբար. որ բեռան վրան բեռ է Բարձ գծօլօն (եզն), զարկ սար ու բար:*

Վ.

Վազան. *Արտադրան: Այս անուն կու տան նաեւ բարակ ջան, թաղի:*

Վաֆ, վաֆ դէզ. *Վաք կ'ըսեն ջաղցի ջրոյ մեծ խողովակին, եւ վաք դէզ՝ այն բարձր դիրքին ուր հաստատուած է վաքին վերին գլուխը. այդ դիրքը սովորաբար զուարճալի է առուի պտոյտներով եւ շրջապատ տնկուած ծառերով, ուր կը նստին զբօսանքի եւ զովանալու համար ամրան տաքին:*

Վարոց. *Դալար փայտ բարակ, որով եզն կամ այլ անասուն կը վարեն զարնելով. ճուպուխ. մարդ ծեծելու ալ գործ կ'ածեն: Փաշեց կաղնի վարոց քոքէհան, հաստ ասեց կնկայ ջանը. որ ըսել է արմատէն խլեց կաղնի վարոց մը, եւ անով կնիկը չարաչար ծեծեց:*

Վալ վալուն, վուլի վուլի, վըլ վըլուկ. *Աղաղակ աղմուկ ձայնեց:*

Վերդիր ընել. վերցին դրին. *Խորհիլ, թեր ու դէմ խօսելով որոշումն ընել:*

վեր, վըր. *Ի վերայ. վըրայ. ՛նախդիր՝ երբ խնդրէն առաջ ըսուի: Վեր քաղքին. վըր գլխուս:*
վէր. *Վայր, վար, ցած: Ջրհորնը վէր ինկաւ:*
վէրու եզն. *Վայրի եզն:*
վէրու ոչխար. *Վայրի ոչխար. էրէ վայրի:*
վըժալ. *Գըժալ, ճչել, մեծ ձայնով գոչել:*
վըժան. *Ձայնեղ:*

Տ.

Տաղաւար, տաղաւարիկ. *Եղէգներով կամ անտառի մացառներով շինուած փոքրիկ տնակ,* Գուլիպէ: *Հովիւք կամ սեխ մշակողք կամ արտի ու այգիի պահապանք ամառ եւ Թօն օրերու համար կը կառուցանեն փոքրիկ տաղաւարիկներ, ուր կը տաղաւարին, տեղաւորուին, ու աշունը կը քակեն: Իսրայելացւոց տաղաւարն ալ եղէգնով շինուած առժամանակեայ տնակներ էին անապատին մէջ, որոյ օրինակ ցարդ կ'ընեն Հրէայք: Հայոց տաղաւարի տօնն ալ նոյնն է, զի Վարդավառին, Աստուածածին եւ Ս. Խաչին տօներուն ժողովուրդը մեծ բազմութեամբ վանքերը կ'երթան ուխտ ու մատաղ ընելու, եւ այդպէս առ օրեայ տաղաւարիկներ կը կազմեն, երբ սենեակներ չ'բաւեն կամ ծառերու հովանիք չ'լինին, որպէս կ'ընեն Մշոյ Ս. Կարապետի վանքը, եւ տօնը անցնելէն զկնի կը քակեն: Այս իմաստով է Եզեկիայի աղօթքի մէջ: Մեկնեցաւ յինէն հոգի իմ որպէս զայն որ քակէ զտաղաւար: Այլուր եւս՝ Իբրեւ զտաղաւար Սեխեննաց: Արասցուք երիս տաղաւարս. որ չէր նշանակէր վրան, այլ Ս. Պետրոս իբրեւ ձկնորս,*

գլուխը պատրաստ քարերով, խոտերով կամ եղէգով ու մացառով տաղաւար կառուցանել, զոր ունին եւ ձկնորսք:

Տաւար. *Ընտանի անասունք, կով, եզն, գոմէշ, այծ ու ոչխար եւլն.: Ընծըկի տաւար մը տուեցէք երթամ որսի. հեծնելու ձի, ջորի եւն. կը նշանակէ:*

Տալ ու առնել, տուին ու առին; չափել ու չափուի. *կը նշանակէ ճակատամարտել, զօտեմարտել, հարուած տալ ու առնուլ, ոյժ փորձել:*

Տափ, դափ, դափածող. *Տէֆ, տէֆչի, տէֆ չալող:*

Տեղ, տեղեր. *Եալթախ. անկողին: Տեղդ ձգեմ երթաս պառկիս: Տեղերը վերուցէք, տունը աւլեցէք: Իգայ պառկի զումաչ տեղերով:*

Տխմար, թխմար. *Տղայ, անչափահաս խելահաս չեղած: Մեր թխմարները ո՞ւր են: Թաղի տխմարներ գնացին վանք: Տասն եւ հինգ տարու տխմար մի է:*

Տեղնցտեղ, տեղնոտեղ. *Եղած տեղ, ամենայն ճշդութեամբ: Տեղնցտեղ ինկաւ մեռաւ. տեղնցտեղ ասաց կամ կատարեաց:*

Տղաբեր, տղամէր. *Մանկածին կին, կաթնասուն տըղայ ունեցող մայր: Տղաբերը մինակ մի ձգէք: Տղամէր է չ՚մեղադրուիր նորածին կինը կը կոչեն ծննդական: Էկաւ տունը ծննդականին. խաչն աւետարան դրին գլխին:*

Տուճիկ, տօճիկ. *Թանձր բաղարջ հաց. սովորաբար ջաղացքները կ՚եփեն:*

Տուբիկ. *Բուրդէ հիւսուած կամ կանեփերու կտորէ կարուած տոպրակ, չանթայ, զոր հովիւք եւ որսորդք կը կախեն պարանոցէն վար անթատակը, յորում*

կը դնեն ծաղիկ, աղ հաց, դանակ, կապ եւլն. առձեռն պիտանի բաներ: Ուղեւորք եւս գործ կածեն, չքեղ եւ անշուք տեսակներ կան: Իմ ծոցը հովուի տուրիկ կը նմանի, ամէն բան կը գտնուի:

Տէլ, դէլ. Դեռ. տակաւին: Տէլ չէր լուացեր:

Ց.

Ցփնել. Սփռել, ցրուել: Կորեկ ցփնեց, վառեկն կտուցով կերաւ:

Փ.

Փարթ. Բացուած ծաղկի կամ վարդի թերթ: Փարթ մի փրթուց քուրը վարդէն: Համասփիւռ ծաղիկէն փարթ մի կեր կ՚առողջանաս:

Փէլք, փէլել. Փայլք, փայլել: Կը փէլէր մաննուակէ. կը փայլէր մատանւոյն ակն:

Փլեց. Փլցուց. քակեց: Բեռները փլեց դուռը: Բեռները քակեց կամ վար առաւ դրան առջեւը:

Փոծխ, բոձղ. Գերանդիով խոտ կամ ցորեն հնձելուն, ուրիշ մէկն ալ լայն սանդրի նման փայտէ գործիքով կը ժողվէ հնձածները խուրձ ընելու համար. այս է փոծխ:

Ք.

Քապ քապ. Մաղով կամ քթանով հիւսուած կօշիկ, որոյ տակը կարճ բայց լայն գլխով մանր բեւեռները կը չարեն. այս բեւեռն առանձինն եւս քապ քապ կ՚ըսուի:

Քարչին. *Վայրի տանձ, ցամաք եւ տափ համ մը ու-նի: Ծառն կ'ըսուի քարչենի:*

Քաչ. *Աներեւոյթ զօրաւոր ոգի. որ կը բնակին աւե-րակներ, քարայրը. ամայի տեղերը եւ լճերու մէջ:*

Քար, քար ու քսպ. *Վաստակ, շահ ու աշխատանք: Օ-գուլ դառէ, դառէ, քար արա:*

Քաւոր. *Պսակի ժամուն հարսին եւ փեսային գլխուն վրայ խաչ բռնող. որ եւ նշանդրէքին եւ հարսան-եաց եւ հարսնառին առենը մեծ պաշտօն ունի, բոլոր հանդէսը եւ արարողութիւնք իր հրամանաւ կը լինին, եւ որ ընծաներ պիտի տայ հարսին ու փեսային, եւ փոխադարձ կ'ընդունի. ամէն խօսք, հարցմունք, յարգանք, մաղթանք նախ քաւորին կ'ուղղուին. հաւասար է քաւոր կինն՝ կանանց հանդէսին մէջ: Վարձք կատար, քաւոր աղայ, կենդանութի՛ւն քաւոր աղայ: Վեր հրամեցէք քա-ւոր աղայ: Մշեցիք աղայ մկրտելուն կնքահայր եղողին: Քաւպապ, կնքապապ. կ'ըսեն. իսկ քանի մը գաւառներ սոսկ* քաւոր *կ'անուանեն իբր կնքա-ւոր:*

Քիսնալ, քիսաւ. *Դպչել, դպաւ: Քարը զարկի՝ քիսաւ աչքը:*

Քնթել. *Կռուցել, կռուցով զարնել կամ վերցնել: Ջայ-լաղան քնթեց գմխան ու թռաւ:*

Քոխ, քօխիկ. *Մէկ մարդ նստելու չափ փոքրիկ սա-տնիկ:*

Քուղայ. *Ջաղացքի քարէն վեր հաստատուած ձագարի ձեւով փայտաշէն ամբարը, յորմէ ցորենը կը թա-փի եւ կ'աղցուի:*

Քռայ. *Քարուտ տեղ, ուր եւ անհարթ քարերով լի:*

Քար ու քռայ էր ճամբան: Մանզկերտու քուէն գո-ղեր բռնեցին զմեզ:

Քրքուն · *Սաստիկ բարկութենէն, նեղսրտութենէն, առ կատաղութեան: Էգ մարդ իր քրրուն գլուր մէջ կը խածէր:*

Քրքուն · *Սաստիկ բարկութենէն, նեղսրտութենէն, առ ձաղնի վարոց:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Հատոր

էջ

Գարեգին Եպսկ. Սրուանձտեանց (*կենս.*) 7

Առ բարերար Գործոյս վսեմ. Ասպետ Ա. Ջունդ 21

Ազնիւ ընթերցող 23

Ճաշակ առաջին, քանի մը քաղցրութիւններ 47

Ճաշակ երկրորդ, քանի մը տեսարաններ
  Վասպուրական եւ իր գաւառները, Վան 86

Վասպուրականէն դուրս, Պուլանըխներ եւ Մանազկերտ 104

Խնուս 106

Բաղէշ 107

Մոտկան 113

Տատիկ 114

Գօզալ–դարա 116

Մշոյ դաշտ 116

Ճաշակ երրորդ, քանի մը հէքեաթներ 119

  Ա. Բադիկան եւ խան Բօղու 122

  Բ. Զուլուխիա 129

  Գ. Պստիկ Միրզան եւ դէւ Գորգոչան 143

  Դ. Ծովու աղջիկ (*Տիգրանակերտցւոց լեզուով*) 158

  Ե. Ջուանով քախտի հաւսած 161

  Զ. Բախտաւոր ոխսորդ 163

  Է. Մատնիկի Ակն 167

  Ը. Աղբիւրի խարսն 172

  Թ. Արծաթ մազեր ոսկի ծամեր 175

	Էջ
Ժ․ Պողպատէ վարոց	181
ԺԱ․ Անզաւակ հէր, եօթն որդւոյ տէր	183
ԺԲ․ Իմաստուն ջուլհակն	186
ԺԳ․ Աստուած տուողին կու տայ	187
ԺԴ․ Ճննդուկ եւ երկու որբ	191
ԺԵ․ Սալմանն ու Ռոստոմն	193
ԺԶ․ Սրմօն	196
ԺԷ․ Կնկան Շառը	199
ԺԸ․ Երեք եղբայրներ	201
ԺԹ․ Ոսկերիչ եւ իր կին	204

Բ․ Հատոր

Ի․ Խելքն ու բախտ	5
ԻԱ․ Դըժիկոն	8
ԻԲ․ Թիփլիսու Տունիա-Գուզալին	12
ԻԳ․ Պաուու տղան	20
ԻԴ․ Ալթունբաշ բալըղ	26
ԻԵ․ Անտես Աննըման	31
ԻԶ․ Օձէմանուկ, Արեւմանուկ	37
Տիգրանակերտցի երիտասարդի մը երազը	46
Ճաշակ չորրորդ, Գեղջկական երգեր	48
Սարէ Սիփանէ կամ Սիա-մանդոն եւ Խըջէ-Զարէ	51
Գովասանք ծաղկանց	59
Գովասանք բիւլբիւլին եւ վարդին	66
Ակնայ ժողովրդային երգեր	
Հարսնառ գնացող կանայք առ հարսն ասեն	72
Մեկնելու պահուն ասեն	73
Առ դրան փեսային ասեն	73

	էջ
Օրօր	74
Հովերով սէր	76
Անտունի	77
Մահերգ	81
Ուղղեալ «Արեւելեան» մամլոյն	85
Մոկացի Հայոց հարսանեաց պար	86
Ծածուկ սիրողի երգ	88
Մօր գովասանք իւր աղջկան	89
Սիրողներ	90
Նոր հարսը Հէրանց տունը դարձ կը տանին···	91
Ցարօ եւ Մայրօ	92
Փոքրիկ երկրագործ	94
Կիտուր (*Մարախ*)	96
Գութանի հօտաղ	96
Ծոյլ հնձողք	97
Արտուտիկ	98
Լագլագ	98
Գեղջուկ աղջկանց ասած	99
Աղօթք	99
Ալաչայ պար	100
Սիրողի երգեր	102
Մայր իր զաւակը զուարճացնելու համար	105
Աղօթք	106
Մեծ պահոց մէջ, կարօտով Զատկին	107
Պարերգ	107
Ցրօնցի աղջիկ եւ սեւ Հարոն	109
Կաղ եզն	111
Հանդէս թուչնոց (*Ժողովրդ. կատակերգ.*)	113
Փեսայի համար օրհնէնք	119
Աղօթքներ	122

էջ

Գերեզմանի մը վրայ 125
Համբարձման օր վիճակի խաղ 125
Անծեղն եւ իր պոչիկ 127
Ժողովրդական երգեր 129
Զարսանճագի Տաղարանէ մը գրուած 132
Ընկզով եւ եղով պառաւ 133
Լուեր (*Մշոյ դաշտէն*) 133
Պուլանըխէն 135
Կնկան հալ 136
Հին երգեր, գովեստ գեղեցկին 137
Տաղ գինւոյ 139
Գովասանք ի Գրիգոր վարդապետ 140
Տաղ խաղողոյ եւ գինւոյ 141
Ծանրութիւն կենցաղոյս 144
Վասն աղքատաց կերակրոյ 146
Ի վերայ հէրիսայի 153
Գաւառական առածներ, Սեբաստիա 159
Ժողովրդական խաղասացութիւնք Կալաֆկայի եւ Սիւրմենեինոյ բնակչաց 162
Գովասանք երկնի եւ երկրի 168
Քանի մը խօսք գաւառական բառերու վրայ 173
Բառեր 176

“ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ”

(*Նախկին՝* «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ»)

Հայ Գրագէտներու Բարեկամներ հրատարակչական ընկերակցութիւնը, որ հիմնուած է 1929ին, *Նահատակ Գրագէտներու Բարեկամներ* անունին տակ, շուտով կը բոլորէ իր հիմնարկութեան 22րդ տարին:

Ընդհանուր պատերազմին դադարումէն յետոյ (1918) գրեթէ տասը տարիներ անցեր էին եւ տակաւին հաւաքական ձեռնարկ մը եղած չէր նահատակ գրագէտներուն ցրուած էջերը ամփոփելու եւ հրատարակելու համար: Երբ համեմատական հանգիստ օրերն եկան, խումբ մը մտաւորականներ 1929 սեպտ·ին հիմը *դրին հրատարակչական այս ընկերութեան, որուն* նպատակն էր «*Հաւաքել եւ հրատարակութեան տալ արեւմտահայ նահատակ կամ մեռած գրագէտներուն երկերը*», հատորներու մէջ ամփոփելով նաեւ գրողներուն կեանքին եւ գործին շուրջ ուսումնասիրութիւն մը:

Առանց հիմնադրամի ընկերութիւնը աշխատանքի լծուեցաւ եւ երկու տասնամեակներու ընթացքին լոյս ընծայեց 17 հատորներ, ահաւասիկ՝ հրատարակութեան կարգով·— *Ռուբէն Զարդարեան*, *Մելքոն Կիւրճեան*, *Գեղամ Տէր Կարապետեան*, *Գեղամ Բարսեղեան*, *Արփիար Արփիարեան*, *Գրիգոր Զոհրապ*, *Տիգրան Չէօկիւրեան*, *Օհան Կարօ*, *Երուանդ Օտեան*, *Արտաշէս Յարութիւնեան*, *Արդի Հայ Գրականութիւն* (Ա· Բ· Գ·), *Երուանդ Սրմաքէշխանլեան*, *Ռուբէն Սեւակ*, *Համով Հոտով* (Ա· եւ Բ·):

Վերջին պատերազմին ահաւոր եւ անստոյգ տարիներուն իսկ *Հայ Գրասէրներու Բարեկամներ* ընկերակցութիւնը շարունակեց իր գործունէութիւնը, առանց որ եւ է ընդհատումի։

Մեր ձեռնարկը առաջին օրէն արժանացաւ ամենուն անվերապահ համակրանքին եւ արտասահմանի մամուլը ամէն անգամ գնահատեց զայն։ Ցոյց տրուած բարոյական քաջալերութեան հետ համեմատական չէր անշուշտ նիւթական քաջալերութիւնը, այլապէս 17 հատորները պիտի բազմապատկուէին մեր շարքին մէջ, որ կը բաղկանայ արեւմտահայ գրականութեան հին եւ նոր արժէքաւոր գործերէն, պիտի ունենայինք տակաւին ուրիշ հեղինակներ ալ, ա՛յնքան բազմաթիւ, որոնք իրենց կարգին կը սպասեն։ Պարբերական հաւաքածոներու մէջ անսպառ նիւթ կայ, որոնք զուրգուրոտ ձեռքերու կը սպասեն լոյս աշխարհ գալու համար։

Մեր պահեստին մէջ ունինք քանի մը հազար գիրքեր տակաւին, որոնց վաճառումէն գոյացած հասոյթով նոր գիրքեր լոյս պիտի ընծայուին։ Դժբախտաբար գիրքերու վաճառումը մեր ակնկալութիւնները չի պսակեր, եւ այդ է պատճառը, որ հազիւ տարին անգամ մը հատոր մը կը յանձնենք ընթերցողներուն։

Հակառակ սակայն նիւթական քաջալերութեան պակասին եւ մեր միջոցներուն անբաւականութեան, հրատարակչական այս ձեռնարկը որոշած ենք նոյն թափով շարունակել, ինչպէս իր կազմութեան առաջին տարիներուն։

Գրասէր ամէն Հայ բարոյական պարտականութիւնն ունի մեր հրատարակութիւններուն համար նոր ընթերցողներ գտնել։

Նուիրեցէք զանոնք իրարու, նուէրներէն ամէնէն արժէքաւորը, որ մտքի հաճոյքին հետ, մշակոյթի այս ձեռնարկին նիւթական օժանդակութիւն մը տուած ըլլալու գոհունակութիւնն ալ պիտի պատճառէ նուիրատուներուն:

Նուիրեցէք գրադարաններու եւ անհատներու, դպրոցներու եւ ընթերցարաններու, այդ կերպով մեր մշակոյթին, մեր գրականութեան եւս, բերած պիտի ըլլաք ձեր նպաստը, յաւերժացնելով նահատակ, մեռած կամ կենդանի գրագէտներուն վաստակը:

«ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»

Գազազեան Զարեհ, Բժ. Գրիգորեան Լեւոն, Թոռոսեան Հրանտ, խանէտանեան Արշաւիր, Մութաֆեան Զարեհ, Մելոյեան Ղեւոնդ, Մօզեան Լեւոն, Ուշագլեան Կարօ, Պարսամեան Մկրտիչ,

Մեր հասցէն է.—

Librairie M. Barsamian, 46, Rue Richer, Paris-9e

«ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»

Հաշուեկշիռ 1 Դեկտ. 1948 — 31 Մայիս 1950

ՄՈՒՏՔ

30 Նոյ. 1948ին պատրաստ դրամ	89·173
Ծախուած հատորներէն (583)	100·550
Նուիրատուութիւն	6·500
	196·223

ԵԼՔ

Գար. Եպսկ. Սրուանձտեանցի հատորին		
Թուղթ 2 հատորին համար	38·188	
Տպ. Ա. եւ Բ. հատ.	122·770	
Կազմ Ա. հատորի	17·208	178·166
Պահեստի վարձք		7500
Զանազան ծախսեր, քլիշէ եւն.		1423
Թղթատարն եւն.		1792
Փոխադրութիւն գիրքերու		650
Պատրաստ դրամ		6692
		196·223

«Հայ Գրագէտներու Բարեկամներ» Ընկերակցութեան կազմը հետեւեալն է.— [illegible] Զարեհ, Բժ. Գրիգորեան Լեւոն, Թորոսեան Հրանտ, Ծանճապանեան Արշաւիր, Մելոյեան Ղե-[illegible]եան Զարեհ, Մօզեան Լեւոն, Ուշագլեան Կարօ եւ Պարսամեան Մկրտիչ:

Հաշուեքննիչ՝ Վ. Թագւորեան

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
2200030358

[Չո]

A 30358

« ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ »
ՄԱՏԵՆԱՇԱՐԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ԵՆ

1. Ռուբէն Զարդարեան (1930) *սպառած*
2. Մելքոն Կիւրճեան (Հրանդ) (1931)
3. Գեղամ Տէր Կարապետեան (1931) *սպառած*
4. Գեղամ Բարսեղեան (1931)
5. Արփիար Արփիարեան (1931)
6. Գրիգոր Զօհրապ (1932)
7. Տիգրան Չէօկիւրեան (1933)
8. Օհան Կարօ (1935)
9. Երուանդ Օտեան (1935)
10. Արտաշէս Յարութիւնեան (1937)
11. Արդի Հայ Գրականութիւն, *Ա. Հատոր* (1939)
12. Արդի Հայ Գրականութիւն, *Բ. Հատոր* (1941)
13. Արդի Հայ Գրականութիւն, *Գ. Հատոր* (1941)
14. Երուանդ Սրմաքէշխանլեան (1942)
15. Ռուբէն Սեւակ (1946)
16. Գարեգին Եպ. Սրուանձտեանց, *Ա. Հատոր* (1949)
17. Գարեգին Եպ. Սրուանձտեանց, Բ. Հատոր (1950)

Ներկայ հատորին գինն է՝ 250 Ֆր.,
Ամերիկա՝ 1 տոլար

«Հայ Գրագէտներու Բարեկամներ»ուն հասցէն է՝
Librairie M. Barsamian, 46, Rue Richer, Paris-9e

IMPRIMERIE ARAXES - 46, Rue Richer, Paris